

ՄԱՌՁԻԿ

հսկս

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig
SPORTS MAGAZINE

35-րդ ՏԱՐԻ, 2016, ԹԻԻ 403 - VOL. XXXV N° 403 - السنة الخامسة والثلاثون - العدد رقم 403



Հ.Մ.Ը.Մ. Արեւելեան Ա.Ն.
26րդ Նախարդեան Խաղեր
Շիքագո Յուլիս 2016



ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ «ՄԱՐԶԻԿ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐՈՒԹԵԱՆ 35-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՀՏ ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ

12, 07, 2016 թ.
12.2/ 43519-16

Ն. Գ. պարոնն դեպքում Սամուել Մկրտչեան,
Գերաշնորհ Տէր Շահէ Եպիսկոպոս Փսևնուեան,
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան արեւնա-
պետ Կարոնիկ Մկրտչեան,
Տիկնա՛յք եւ պարոնա՛յք,

Սրբանց կը շնորհաւորեմ Հայ Մարմնակրթա-
կան Ընդհանուր Միութեան «Մարզիկ» պարբերա-
կանի 35-ամեակը:

Իսկապէս, հիացումի արժանի է ազգային վեհաս-
քանչ արժէքներով մարտի սերունդը փոքրելու
Հ.Մ.Ը.Մ.ի երկարամեայ գործունէութիւնը, որուն
առանձնակի խանդավառութիւն եւ ոգեշնչող լիցքեր
կը հաղորդէ երկարամեայ փրկագիր մամուլը:

Դժուար չէ երեւակայել, թէ որքան ջանքեր, ժա-
մանակ, միջոցներ եւ նուիրում պահանջուած է
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամնե-
րէն «Մարզիկ»ը հիմնադրելու եւ այս երկար ու ձիգ
35 տարիներու ընթացքին, անընդմէջ փրկագրելու
համար՝ ազգասիրութեան, հայրենասիրութեան եւ
մարդկային վեհ գաղափարներով կրթելով ու սնե-
լով երիտասարդ սերունդները:

Պարբերականը իր 35-ամեայ գործունէութեան
ընթացքին մշտապէս հանդէս եկած է արժանաւա-
ւար, ամբողջական եւ հեղափոխական լուրերով՝
շարունակ լուսարանելով Հ.Մ.Ը.Մ.ի եւ առհասարակ
մարզական կեանքին վերաբերող իրադարձու-
թիւնները թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ Մայր Հայրենիքի մէջ:

Անշուշտ մեծ է պարբերականի ներդրումը
Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիռ մասնաճիւղերու փոխ
գործակցութեան եւ փոխ նախաձեռն, ինչպէս նաեւ
միջազգային մարզական հարթակներուն կառոյցի
դերի հանրահրոշակման առումով:

Վարսիաբար կարելի է փաստել, որ «Մարզիկ»ի
շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը դարձաւ առա-
ւել՝ հասանելի եւ սիրելի:

Յարգարժա՛ն Հ.Մ.Ը.Մ.ականներ,

Կը ցանկան անկեղծ շնորհաւորանքներս յղել
նաեւ օրերս Մոսկուայի մէջ բացուած մասնաճիւղի
առիթով: Հայստեմ այս փարսածաշրջանի մէջ կա-
ռոյցի ներկայութիւնը անշուշտ յուսադրող է, հայ
ինքնութեան եւ հայապահպանման ուղղութեամբ
հսկայական ընելիքներ կան:

Համոզուած եմ, որ նորաստեղծ կառոյցը նոյն-
պէս հաւարարիմ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան՝ մեծ
լուսայ պիտի ներդնէ համայնքային մարզամշակու-
թային կեանքի զարգացման:

Եւս մէկ անգամ կը շնորհաւորեմ բոլորիս, այս
երկու կարեւորագոյն իրադարձութիւններու առի-
թով եւ կը մտաբանեմ ամենայն բարիք, նորանոր
ձեռքբերումներ եւ յաջողութիւններ՝ ի փառս աշ-
խարհասփիռ հայութեան միասնութեան:

Թող յերայսու առաւել եռանդուն կերպով շարու-
նակուի «Մարզիկ»ի հրատարակումը՝ փառաւորե-
լով ձեր կառոյցի մեծարժէք ծառայութիւնը:

Յարգանքով՝
ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈԲԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային
Վարչութիւնը սրտի անհուն
բերկրանքով կ'ողջունէ եւ կը շը-
նորհաւորէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վար-
չութեան հովանաւորութիւնը վայելող «Մարզիկ»
պաշտօնաթերթի վարչութիւնը, խմբագրակազմն ու խմբագի-
րը՝ «Մարզիկ»ի հրատարակութեան 35-ամեակին ուրախ առի-
թով:

35 տարիներ շարունակ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիռ մաս-
նաճիւղերուն, միաւորներուն եւ մարզական խումբերուն լսե-
լի ձայնն ու թարգմանը հանդիսացող «Մարզիկ»ը տիպար
Հ.Մ.Ը.Մ.ականներուն իսկական պատկերը ներկայացուց եւ
ձեռք բերուած յաղթանակները արձանագրեց պատմութեան
փառապանծ էջերուն մէջ:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐ

Ի հեճուկս բոլոր դժուարութիւննե-
րուն, հայկական արժէքները պահպանող
«Մարզիկ»ի 400 թիւերը եկան անմահացը-
նելու Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին լայնա-
տարած գործունէութիւնն ու գործօն ներկայութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ական սերունդներուն յոյսի փարոս հանդիսացող
«Մարզիկ»ին կը մաղթենք դալար եւ աննահանջ երթ:

Յաջողութեան լաւագոյն բարեմաղթութիւններով՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Հալէպ, 21 Յուլիս 2016

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹ-ԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՀՏՈՆԱԹԵՐԹ



«ՄԱՐԶԻԿ»Ի
ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ամուր կամքով

2-3

35 ՏԱՐԻ, 400 ԹԻՒ

- «Մարզիկ» Հ.Մ.Ը.Մ.Ի

յիշողութիւնն է

4

- «Մարզիկ» արժանացաւ

մեր ժողովուրդի...

6

- Ինչո՞ւ պաշտօնաթերթ մը ունենալ

9

- «Մարզիկ»ն ու եղբայր Միհրանը

10

ԱՆԴՐԱԴԱՐՁ

- «Մարզիկ»ի 35-ամեակի եւ 400-րդ

թիւի մեծաշուք հանդիսութիւն

11

ՄԱՍՆԱԾԻՂԷ ՄԱՍՆԱԾԻՂ

18-53

ՄԵՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ


54-55

ՏԱՐԲԵՐ ՀԱՅԵԱՑՔՈՎ

56



- ◆ Համա-Հ.Մ.Ը.Մ.ա-կան խմբապետական 7-րդ համագումարը
- ◆ Բանակումներ 2016
- ◆ Յովհաննէս Հինդլեանի ծննդեան 150-ամեակ
- ◆ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի եռօրեայ սեմինար «Հայկ Յովսէփեան» բանակավայրին մէջ
- ◆ Գայիկ -արծուիկներու փոխանցման արարողութիւն Գահիրէի մէջ



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

Խմբագիր: Վիզէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

Խմբագրական կազմ: Գրիգորիս Պողարեան, Մարո Քէշիշեան, Սեւան Նազարեան, Տիրան Շահինեան

Վարչական կազմ: Պատրիկ Կիւլպէնկեան, Արօ Մոսիկեան, Սիլվա Սաղըրեան, Յարութ Ալաճաճեան, Նազօ Հապիպեան, Ռիթա Օղուլեան, Ատլին Շամմասեան:

Էջադրում եւ ընդհանուր ձեւատրում: Արշօ Պալեան, Կողքի պատրաստութիւն: Y Concept International, Գրաշարութիւն: Շողիկ Պոյաճեան, Տպագրութեան պատրաստութիւն: Photogravure Paklayan, Տպագրութիւն: Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

Բաժանորդագրութիւն: «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 32 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 70 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հատավաճառի սակն է 5000 Լ.Ո.: Ցրում: «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յատուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»ի գրախանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»ի միջոցով:

«Մարզիկ» ամսաթերթ կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Մեւան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատուած, Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org 80486 Պուրճ Համուտ, Լիբանան
 Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. www.Homenetmen.org

ԱՄՈՒՐ ԿԱՄՔՈՎ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԼՈՎՏԻՎԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 95-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 25-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

2 016-ը յոբելենական տարի է Հ.Մ.Ը.Մ.ի Փլովտիվի մասնաճիղին համար: Եւ ինչպէս ամէն յոբելեան, այս մէկը եւս ուրախութեան եւ հպարտութեան աղբիւր է: Սերունդներու վաստակը եւ գոհողութիւնը յիշելու առիթ է: Յիշել եւ նորերուն յիշեցնել, թէ ի՞նչպէս սկսաւ այս մասնաճիղը Պուլկարիոյ մէջ: Ինչո՞ւ ըսկսաւ ան եւ ի՞նչպէս կարողացաւ դիմանալ այսօրան տարի:



Եռագոյնը, անկախութիւնը եւ անկախութիւն կերտած սերունդը, սակայն այդ բոլորը պահուեցան եւ պահպանուեցան տասնամեակներ շարունակ, որովհետեւ Փլովտիվի պարարտ հողին վրայ նետուած Հ.Մ.Ը.Մ.ական հունտերը առո՞ղջ էին եւ ամուր:

47 տարի Հ.Մ.Ը.Մ. դադրեցաւ Փլովտիվի մէջ իբրեւ կազմակերպութիւն գոյութիւն ունենալէ, սակայն ան մնաց ու գոյատեւեց իբրեւ ոգի՝ մթնոլորտ եւ մտայնութիւն:

Ամէն ինչ սկսաւ Հայոց Յեղասպանութենէն քանի մը տարի ետք, Փլովտիվ ժամանած Հ.Մ.Ը.Մ.ի Պուլտոյ գործիչներով: Վերապրումի եւ մաքառումի ժամանակներ էին 1920-ական տարիները գաղութին համար: Եկան նուիրեալներ եւ ֆուքայոլի ու աթլէթիզմի խումբեր ստեղծելով մեծ խանդավառութիւն ստեղծեցին շրջանին մէջ: Յետոյ, կազմեցին սկսուտական շարքեր եւ կազմակերպեցին սկսուտական բանակումներ, որոնց առաջինը տեղի ունեցաւ 85 տարի առաջ, Պուլկարիոյ կեդրոնական քաղաքներէն Քազանլըքի մէջ: Տասնօրեայ այդ բանակումին ընդհանուր խմբապետութիւնը ստանձնեց եղբ. Խաչեր Վարդազամեան, պահեստի նախկին սպայ մը, որ մասնակցած էր առաջին համաշխարհային պատերազմին: Յաջորդեցին տարեկան այլ բանակումներ եւ Փլովտիվը ապրեցաւ Հ.Մ.Ը.Մ.ական փառքի իր օրերը, մինչեւ չարագուշակ 1944 թուական, երբ ամէն ինչ լուծուեցաւ, արգիլուեցաւ եւ փակուեցաւ՝ երկրին մէջ համայնավար իշխանութիւններու հաստատումով:

Հ.Մ.Ը.Մ.ական արժեքները՝ հայրենիքի սէրը, նուիրումը, գոհաբերութեան ոգին եւ հայը հա՛յ պահող յատկութիւնները փոխանցուեցան սերունդէ սերունդ, հասնելով մինչեւ արժանատր այն սերունդին, որուն ներկայացուցիչները հանդիսացան եղբայրներ Թորոս Տօնիկեան, Պօղիկ Մեսրոպ, Ազատ Յովսէփեան, Տիգրան Պարտիզպանեան, Զաւէն Փափագեան, Կարօ Արթրեան եւ ուրիշներ:

Մարդիկ Հ.Մ.Ը.Մ.ը արգիլեցին մեր կեանքին մէջ, բայց երբեք չկարողացան զայն դուրս հանել մեր կեանքէն:

Շնորհիւ այս սերունդին, Հ.Մ.Ը.Մ. 1991 թուականին արտակարգ ճիգի պէտք չունեցաւ իր գործունէութիւնը վերականգնելու համար շրջանին մէջ: Շնորհիւ այս սերունդին, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը պատուով ծածանեցաւ Փլովտիվի մէջ, երբ համայնավար բռնատիրութիւնը վերջ գտաւ եւ Հ.Մ.Ը.Մ. իր արժանի տեղը վերագտաւ պուլկարահայ կեանքին մէջ:

Մարդիկ, երբեմն նոյնիսկ հայանուն անձնատրութիւններ, հալածեցին Հ.Մ.Ը.Մ.ը, ձերբակալեցին ու բանտարկեցին անոր պատասխանատուները, բայց բնաւ չյաջողեցան զայն մեր ժողովուրդի միտքերէն եւ հոգիներէն հեռու վանել:

Հ.Մ.Ը.Մ.ը վերադարձաւ, որպէսզի հայը հա՛յ մնայ Փլովտիվի մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը վերադարձաւ, որպէսզի նորահաս սերունդները սկսուտական եւ մարզական գործունէութեան շնորհիւ մեր ժողովուրդի երթը շարունակեն եւ մեր ազգային երազներուն իրականացումը հետապնդեն:

Հ.Մ.Ը.Մ.ը վերադարձաւ, որպէսզի մարդուն մէջ քաղաքացին, հայուն մէջ տիպարը եւ Հ.Մ.Ը.Մ.ականին մէջ հաւատատրը կերտուի անպայման:

Հ.Մ.Ը.Մ.ը ինքնանպատակ կերպով չվերադարձաւ: Ան առաքելութեան մը կոչումը ունեցաւ, դերակատարութեան մը պարտականութիւնը ունեցաւ: Այդ առա-



քելութիւնը, այսօր, 1991-ի պայծառ թուականէն 25 տարի ետք, կը մնայ անփոփոխ: Միջոցները կրնան փոփոխութեան ենթարկուիլ, արդիականանալ, սակայն նպատակը կը մնայ միեւնոյնը. ծառայել հայութեան եւ Հայաստանին, ապագայ սերունդներու պատրաստութեան նուիրական գործին ճամբով:

Գիտենք, դիրքին չէ այդ գործը: Աշխարհի տարածքին քիչ մը ամէն տեղ սերունդ դաստիարակելը դժուարացած է: Այլ չենք խօսիր հայեցի դիմագիծով, հայերէն խօսող, հայերէն մտածող սերունդներու մասին, որոնք Հ.Ս.Ը.Մ.ի նման փառաւոր պատմութիւն ունեցող միութեան մը ժառանգորդները պիտի ըլլան:

Ու երբ կը խօսինք գործին մասին, չենք կրնար չխօսիլ գործողներուն մասին: Անոնց, որոնք իրենց կեանքը մաշեցուցին Հ.Ս.Ը.Մ.ի ծառայութեան ճամբուն վրայ: Անոնց, որոնք համայնավար բանտերու մէջ իրենց նահատակութեամբ նոր պատմութիւն գրեցին:

Ու անոնց, որոնք անցնող 25 տարիներուն գործեցին դժուարագոյն պայմաններու մէջ, զոհելով սեփական հանգիստ, հաճոյք եւ ընտանիք:

Պատի՛ւ այդ սքանչելի միութեանականներուն, Հ.Ս.Ը.Մ.ը Հ.Ս.Ը.Մ. դարձնող նուիրեալներուն: Պէտք է խոնարհիլ բոլորին վաստակին դիմաց եւ վերահաստատել անոնց գործը շարունակելու մեր աներեր յանձնառութիւնը, զիրենք ուղեցոյցներ ունենալով լաւ թէ վատ օրերուն:

Լաւ օրերուն փառք տալով անոնց, որ անցնող տասնամեակներուն, շնորհիւ իրենց՝ Փլովտիվի մասնաճիւղը հասաւ իր պատուաբեր յաջողութիւններուն:

Վատ օրերուն յիշելով զանոնք, որպէսզի տկարութեան մեր պահերուն ուժ եւ կորով առնենք անոնցմէ եւ, իրենց օրինակով, մեր գործը շարունակենք ամուր կամբով, անսասան հաւատքով եւ անսպա՛ռ խանդավառութեամբ:

Հ.Ս.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆՆԵՐ, ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐ, ՄԻԱՒՈՐՆԵՐ

Հայաստան: Երեւան, Մալաթիա, Ձէյթուն, Կոմիտաս, Էրեբունի, Արովեան, Չարենցաւան, Հրազդան, Արմաիր, Էջմիածին, Մարտունի/Չօրաքար, Մարտունի/Ծովինար, Կիւմրի, Վետի. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիփոլի, Պուրճ Համուտ, Այնճար, Ծիւնի, Անթիլիաս, Ժըտէյտէ, Պաուշրիէ, Ռաուտա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղտատ, Մուսուլ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոքինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնտոն. **Աստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանտա:** Ալմելո, Ալքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէտ:** Սթոքհոլմ, Վեստերոս, Սոտերթելիա. **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փլովտիվ, Վառնա, Շումէն, Պուրկաս, Տոպրիչ. **Գանատա:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քեմպրիճ, Սէնթ Գաթրինգ, Լաւալ. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, Ֆրեզնօ, Մոնթեպելլօ, Փասատինա, Կլէմտէյլ, Օրէնճ Բաունթի, Սան Ֆեռնանտօ, Սան Տիէյօ, Ինըրնո Էմիլայր, Սանթա Գլարա, Բրեսէնթա Հոլիտ, Պրրայէնք, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլնաթ Բրիք, Նորթ Հոլիվուտ. **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Շիքաօ, Ֆիլատելֆիա, Տիքրոյթ, Փրովիտընս, Ֆլորիտա, Ալպընի, Շարլոթ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորտոպա, Մոնթեվիտօ. **Աստրալիա:** Սիտնի («Անդրանիկ»), Սիտնի («Արաքս»), Սիտնի («Կամբ»), Սիտնի («Արարատ»), Մելպուռն.

«ՄԱՐԶԻԿ» Հ.Մ.Ը.Մ.Ի ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆ Է, ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆ Է ԵՒ ԽՏԱՅՈՒՄԸ ԱՅՆ ԲՈԼՈՐ ԱՐԺԷՔՆԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ ԱՅՍ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԷ ՄԸ ԿԸ ՉԱՏՈՐՈՇԵՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝ «ՄԱՐԶԻԿ»Ի 35-ԱՄԵԱԿԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Հ.Մ.Ը.Մ.Ի Մայր կանոնագրին «Միջոցներ» բաժնին չորրորդ կէտը կը հաստատէ, որ միութիւնը իր նպատակը կ'իրագործէ «Հրատարակութիւններով, հայոց լեզուի, պատմութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն նպաստող մշակութային ձեռնարկներով»:

Հրատարակութիւնները՝ թերթը, գիրքը եւ ալպոմ-յուշամատեաններն են, որոնք յատուկ տեղ եւ կարեւորութիւն ունին Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը ինք ծնունդն է թերթի մը՝ Պոլսոյ «Մարմնամարզ»ին: Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրները «Մարմնամարզ»ի շուրջ բոլորուած մտաւորականներն էին. Շաւարշ Քրիսեան, Յովհաննէս Հինդլեան, Գրիգոր Յակոբեան եւ ուրիշներ, որոնք թերթի եւ գրականութեան ճամբով կը ձգտէին հայ երիտասարդութեան ազգային ու Ֆիզիքական դաստիարակութեան նպաստել եւ բոլորը համախմբել համահայկական միացեալ դրօշի տակ:

«Մարմնամարզ»ը կ'ունենայ միայն չորս տարուան կեանք, որովհետեւ Հայոց Յեղասպանութիւնը ծանր հարուած կը հասցնէ ո՛չ միայն հայ մարմնակրթական շարժումին, այլեւ՝ բովանդակ հայ կեանքին: «Մարմնամարզ»ի հրատարակութիւնը կը խափանուի, իսկ խմբագիր Շաւարշ Քրիսեանը կը նահատակուի Այաշի տխրահռչակ բանտին մէջ:

«Մարմնամարզ»ին կը յաջորդէ «Հայ սկաուտ»ը, որ կը հրատարակուի Հոկտեմբեր 1919-ին, միութեան հիմնադրութենէն հազիւ տարի մը ետք, երբ միութեան հիմնադիրները



կազմակերպական իրենց առաջին քայլերը կ'առնէին եւ որբախնամի դժուարին աշխատանք կը կատարէին: Տազնապալի այդ օրերուն, նիւթական կարելիութիւններ գրեթէ գոյութիւն չունէին, իսկ միութեանական գործունէութեան բնականոն պայմաններ գրեթէ չկային, բայց Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատուներուն համար հայ թերթը կը ներկայացնէր առաջնահերթ կարեւորութիւն, որուն համար անոնք յանձն կ'առնէին ամէն գոհողութիւն՝ իրենց խօսքն ու կեցուածքը փոխանցելու համար նոր սերունդին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան յանձնառութիւնն է «Մարզիկ»ը, իբրեւ հրատարակութիւն, հայ լեզուի եւ հայոց պատմութեան կարելոր մէկ մասունք: Առ այդ, ան նոյնքան կարեւորութիւն կը ներկայացնէ՝ որքան ախոյեանական որեւէ բաժակ կամ սկաուտական որեւէ յաջողութիւն, որովհետեւ ան կը ծառայէ հայակերտման ու հայապահպանման այն նպատակին, որուն համար ստեղծուած է Հ.Մ.Ը.Մ.:

Դժբախտաբար, «Հայ սկաուտ» եւս կը մատնուի «Մարմնամարզ»ի ճակատագրին, երբ Հայաստանի խորհրդայնացումով եւ քեմալական շարժումով Հ.Մ.Ը.Մ. կը ստիպուի անցնիլ Սփիւռք, ուր տարբեր ժամանակներ

րու մէջ ան կ'ունենայ տարբեր հրատարակութիւններ. «Արի», «Հայ սկաուտ», «Հայ արի», «Նոր սերունդ», «Արեւելք մարգաշխարհ» եւ այլն: Այսպէս, գիրն ու գրականութիւնը միշտ անբաժան կ'ըլլան միութեան պատասխանատուներու հետաքրքրութեան դաշտէն:

Այս բոլորին բնական շարունակութիւնը կը հանդիսանայ «Մարգիկ» պաշտօնաթերթը, որուն հրատարակութեան 35-ամեակը եւ 400-րդ թիւին հրատարակութիւնը կը տօնենք այսօր: «Մարգիկ» հարազատ ժառանգորդը կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ական պատմական մամուլին, որուն առաքելութեան եւ դերակատարութեան ջերմ պաշտպանները եղած են ու կը մնան Հ.Մ.Ը.Մ.ի յաջորդական կեդրոնական Վարչութիւնները եւ անոնց կողքին գործած «Մարգիկ»ի վարչութիւնները:

Արդարեւ, «Մարգիկ» ծնունդ կ'առնէ լիբանանեան պատերազմի դժուարին օրերուն եւ 35 տարիէ ընթերցողներուն կը հասնի տեսակ-տեսակ դժուարութիւններ յաղթահարելով: Նիւթական դժուարութենէն մինչեւ մարդու ղ ղժուարութիւն, հասնելու համար այսօրու ընկերային ցանցերու մրցակցութեան չդիմացող տպագիր մամուլի դժուարութիւններուն: Իսկ մեր պարագային, իբրեւ հայութիւն, չմոռնանք նաեւ հայերէնի նահանջը քիչ մը ամէն տեղ, ինչ որ մեծ ճիգ եւ ներդրում կ'ենթադրէ «Մարգիկ»ի նման թերթի մը յարատեւութիւնը ապահովելու համար:

Եթէ չըլլար առաքելութեան ըմբռնումը, եթէ չըլլար միութեան նպատակներուն իբրեւ միջոց ծառայելու գիտակցութիւնը, հաւանաբար «Մարգիկ» չատոնց դադրած ըլլար: «Մարգիկ»ը սակայն սովորական մարզական կամ սկաուտական թերթ մը չէ, որ կարճատեւ կեանք ունենայ: «Մարգիկ» Հ.Մ.Ը.Մ.ի նպատակները տարածողն է, Հ.Մ.Ը.Մ.ի արժէքները ծանօթացնողն է, Հ.Մ.Ը.Մ.ի նուիրեալները անմահացնողն է, հետեւաբար ան կենսական պահանջ է եւ մնայուն անհրաժեշտութիւն:

Յառաջիկային, «Մարգիկ» կրնայ ստանալ տարբեր տեսք՝ տպագիր, էլեկտրոնային թէ այլ, սակայն ան չի դադրիր Հ.Մ.Ը.Մ.ի ձայնը ըլլալէ, «Կամաւոր բանակ»ին հարազատ դիմագիծը ներկայացնելէ: Աչքէ՛ անցուցէք «Մարգիկ»ի 35 տարիներու թիւերը եւ պիտի հաստատէք բոլոր ըսուածներուն ճշմարտութիւնը: «Մարգիկ» եղաւ ու մնաց Հ.Մ.Ը.Մ.ի հայելին, պատմութեան արխիւներու շտեմարանը եւ միութեան ամէնօրեայ կեանքը արձանագրող յուշամատեանը: «Մարգիկ» երեք սերունդի վկայարանը եղաւ: Թերթին մէջ պիտի գտնէք Հ.Մ.Ը.Մ.ական մեծ հայրիկը, ծնողն ու թոռնիկը: Մէ-

Բաժակները կրնան հինգալու ժանգոտիլ, սկաուտական յաջողութիւնները կրնան գնահատուիլ ու մոռցուիլ, բայց ինչ որ պատմութեան կը մնայ, իբրեւ ներշնչման եւ հպարտութեան աղբիւր, գիր եւ գրականութիւնն է, նկարն ու արխիւն է: «Մարգիկ»ը այդ բոլորն է ու աւելին: Ան Հ.Մ.Ը.Մ.ի յիշողութիւնն է, հարստութիւնն է եւ խտացումը այն բոլոր արժէքներուն, որոնք այս միութիւնը սովորական մարզական ակումբէ մը կը զատորոշեն եւ սերունդներու դաստիարակութեան կը ծառայեն:

կը վեթերան, երկրորդը վարչական, իսկ երրորդը՝ կրտսեր մարզիկ թէ սկաուտ:

«Մարգիկ»ը «Մարգիկ» դարձնողները եղան անոր յաջորդական խմբագիրները, աշխատակիցներն ու ընթերցողները: Եթէ չըլլար բոլորին գուրգուրանքը թերթին նկատմամբ, վստահ որ թերթը չատոնց պատմութեան յանձնը կ'ախտի ըլլար: Սակայն, հակառակին վկաներն ենք մենք այսօր, որովհետեւ «Մարգիկ» այսօր կը հասնի աշխարհի 5 ցամաքամասերու, 25 երկիրներու 107 քաղաքներ: Հոն ուր Հ.Մ.Ը.Մ. կայ, հոն «Մարգիկ»ը ներկայ է: Թերթը ներկայ է նաեւ էլեկտրոնային աշխարհին մէջ, ուր ան երկլեզու ձեւով կը ներկայանայ Հ.Մ.Ը.Մ.ի համացանցի եւ դիմատետրի էջերով: Թերթին խմբագրականները կը թարգմանուին անգլերէնի ու սպաներէնի եւ կը հասնին օտարալեզու հա-

զարաւոր միութենականներու եւ ազգայիններու:

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան յանձնառութիւնն է «Մարգիկ»ը, իբրեւ հրատարակութիւն, հայ լեզուի եւ հայոց պատմութեան կարեւոր մէկ մասունք: Առ այդ, ան նոյնքան կարեւորութիւն կը ներկայացնէ՝ որքան ախոյեանական որեւէ բաժակ կամ սկաուտական որեւէ յաջողութիւն, որովհետեւ ան կը ծառայէ հայակերտման ու հայապահպանման այն նպատակին, որուն համար ստեղծուած է Հ.Մ.Ը.Մ.:

Բաժակները կրնան հինգալու ժանգոտիլ, սկաուտական յաջողութիւնները կրնան գնահատուիլ ու մոռցուիլ, բայց ինչ որ պատմութեան կը մնայ, իբրեւ ներշնչման եւ հպարտութեան աղբիւր, գիր եւ գրականութիւնն է, նկարն ու արխիւն է: «Մարգիկ»ը այդ բոլորն է ու աւելին: Ան Հ.Մ.Ը.Մ.ի յիշողութիւնն է, հարստութիւնն է եւ խտացումը այն բոլոր արժէքներուն, որոնք այս միութիւնը սովորական մարզական ակումբէ մը կը զատորոշեն եւ սերունդներու դաստիարակութեան կը ծառայեն:

Իր հրատարակութեան 35-րդ տարեդարձին, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը վարձքը կատար կ'ըսէ «Մարգիկ»ի հին ու նոր հաւատաւորներուն, բարի երթ կը մաղթէ «Մարգիկ»ի խմբագրութեան եւ վարչութեան, յուսալով թերթը տեսնել նորանոր բարձունքներու եւ յաջողութիւններու կատարին:


Շնորհակալ 35-ամեակ: Յառա՛ջ դէպի 50-ամեակ ու 100-ամեակ:

«Մարգիկ» Հ.Մ.Ը.Մ.ի նպատակները տարածողն է, Հ.Մ.Ը.Մ.ի արժէքները ծանօթացնողն է, Հ.Մ.Ը.Մ.ի նուիրեալները անմահացնողն է, հետեւաբար ան կենսական պահանջ է եւ մնայուն անհրաժեշտութիւն:

«ՄԱՐԶԻԿ» ԱՐԺԱՆԱՑԱԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐՊԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈԼՈՐ ՇԵՐՏԵՐՈՒՆ ՈՒ ԽԱՒԵՐՈՒՆ ԹԵՐԹԸ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՐԱԶԱՏ ԿՈՉՈՒՄԻՆ

(ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏԱՆ ՏՆՕՐԷՆ ՅԱԿՈՒԲ ՀԱԻԱԹԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝ «ՄԱՐԶԻԿ»Ի 35-ԱՄԵԱԿԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Հայ մամուլի որեւէ ներկայացուցիչի հիմնադրուածին տարեդարձին նշումը, մասնաւանդ այս օրերուն, խորիմաստ պատգամներով, այժմէական թելադրականութեամբ ու ժամանակակից հնչեղութեամբ կը ներկայանայ մեզի: Այսօր, մամուլը ընդհանրապէս կը գրտնուի մեծ մարտահրաւէրներու դիմաց: Օրէ օր նահանջ կ'արձանագրէ հայ մամուլի ծառայողներու, աշխատակիցներու, խմբագիրներու եւ ընթերցողներու թիւը: Առկայ է չափանիշներու յստակ անկում, եւ միջազգային մամուլը հետաքրքրական ու քաջողական դառնալու իր ճիգին մէջ, այսօր սկսած է շեղիլ իր հարազատ հունէն՝ եւ շուկայի կանոններուն ու պահանջներուն հետեւելով՝ դառնալ անդիմազիծ ու անողնայար ներկայութիւն մը հասարակութեան մէջ: Աւելին, իր աժան քարոզչութեան ճիգին մէջ, այդ մամուլը այսօր կը խախտէ մարդկային ու ազգային սկզբունքներ եւ ըմբռնումներ՝ դառնալով սպառնողական արտադրութիւն մը, առանց դիմազիծի: Մամուլը, տակաւին, կը փորձէ ապականել մարդկային միջավայրը, խեղաթիւրումներով ու ապատեղեկատուութեամբ ապաքաղաքականացնել զանգուածները՝ յագուրդ տալու համար կասկածելի նպատակներու եւ սարանքներու:



նուաճած վաւերական մէկ ներկայացուցիչին՝ «Մարգիկ»ի հիմնադրութեան երեսունհինգերորդ տարեդարձն է, որ կը նշենք այսօր եւ այս յոբելեանին նուիրուած «Մարգիկ»ի խմբագրականը լաւագոյնս կը սահմանէ անոր առաքելութիւնը եւ կը հունաւորէ անոր ապագայ երթը: Այո՛, «Մարգիկ» գործեց եւ պիտի շարունակէ գործել իր խմբագրականին իսկ հաստատումով՝ «Ի խնդիր նորահաս սերունդներու քաղաքացիական օրինակելի կրթութեան եւ ազգային առողջ դաստիարակութեան»:

Ան պիտի շարունակէ գործել «Ի սպաս մեր ժողովուրդի վաղուան լուսաւոր ապագայի կերտումին»:

«Մարգիկ»ի երեսունհինգամեակի նշումին առիթով կ'արժէ ձեզի հետ բաժնեկցիլ հետեւեալ քանի մը մտածումները, որոնք իբրեւ հաւաքական վկայութիւն եւ տեսլական՝ այսօր կը դրուին մեր դիմաց:

Առաջին, «Մարգիկ»ի հրատարակութեան եւ հետեւողականութեան շարունակականութիւնը կարելի պիտի չըլլար երաշխաւորել, եթէ երբեք այս գործին հաւատացող ու այս գործը ստանձնող նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ականները անկարելին կարելի չվերածէին: Իրերայաջորդ նուիրեալ սերունդներու ճիգին ու աշխատանքին արգասիքը մենք կը տեսնենք այս նուաճումին մէջ: Նուիրեալներ, որոնք խմբագրական, վարչական եւ այլ ծառայութիւններով համեստօրէն, անաղմուկ ծառայեցին ու կը շարունակեն ծառայել այս առաքելութեան: Անոնք կրնային հաւաքական կեանքի առնչուած ուրիշ որեւէ աշխատանքային մարդ ստանձնել եւ յաճախ ծափահարութիւններ խլել, սակայն նախընտրեցին ա՛յս առաքելութիւնը, որովհետեւ հաւատացին, որ մնայուն արժէքներու հաւաքա-

գրման եւ հայ կեանքը հարստացնող հիմնական գործօն է իրենց ստանձնած պարտականութիւնը:

Միութենականի այս յանձնառու եւ նուիրեալ մօտեցումը կը գտնուի այսօր ինքզինք պարտադրելու անհրաժեշտութեան դիմաց, երբ յատկապէս մեր կեանքի կարգ մը բնագաւառներուն մէջ խիստ կարիքը կը զգանք նուիրեալ ու անշահախնդիր ծառայողներու եւ ազնուօրէն ու առանց հաշուենրկատ մօտեցումի գործող միութենականներու: Հ.Մ.Ը.Մ. միջոցաւ կը փորձէ միութենականի այդ ապրումը, համոզումը եւ յանձնառութիւնը դարձնել դաստիարակութեան հիմնական առանցք, որովհետեւ այդ ապրումով պայմանաւորուած է անոր գոյութիւնը, եւ նոյն այդ ապրումը Հ.Մ.Ը.Մ. աւանդ կ'օժտէ իւրապատուկ նկարագիրով եւ այդ դաստիարակութիւնը ան կ'իւրացնէ ցմահ:

Երկրորդ մտածումը, զոր այս պահուն կ'ուրուագծուի, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին աշխատանքի արգասիքին արտայայտութիւնը եւ այդ բոլորին հարազատ հայելին դառնալու «Մարզիկ»ի կոչումն է, որ երեսունհինգ տարիներու ընթացքին մնաց անխախտ եւ հաստատուն: Առանց Հ.Մ.Ը.Մ.ի հարուստ գործունէութեան՝ մասնաճիւղերու, միաւորներու եւ մարզական խումբերու լայնատարած աշխատանքին, «Մարզիկ»ի էջերը պիտի չկարենային շնչել, ու անկարելի պիտի ըլլար անոր թիւերը հարստացնել: Փաստօրէն, այսօր երեսունհինգ տարիներու Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնն է, որ ամփոփուած է «Մարզիկ»ի էջերուն մէջ, եւ այս մէկը ինքնին ազգային անսպառ հարստութեան աղբիւր է, անկասկած: Այս առիթով կ'արժէ շեշտադրել, որ բոլոր ժամանակներէ աւելի Հ.Մ.Ը.Մ.ի մարզակերտումի ու հայակերտումի առաքելութիւնը այս օրերուն կը ստանայ շեշտակի իմաստ եւ նշանակութիւն: Հ.Մ.Ը.Մ.ի ջամբած դաստիարակութիւնը, փոխանցած ազգային ոգին ու հպարտանքը հրամայական անհրաժեշտութիւն են մեր հաւաքական կեանքին համար, երբ քիչ մը ամէն տեղ արժէքներէ հեռացումը եւ օտարացումը կը դառնան ճնշիչ ու մտահոգող: Այս իմաստով առանցքային, անշրջանցելի ու անփոխարինելի է Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը:

Յաճախ կ'ըսենք, բայց այս պարագային իրաւամբ հարց կու տանք, թէ ի՞նչ պատկեր պիտի պարզէր մեր կեանքը, եթէ երբեք չըլլար Հ.Մ.Ը.Մ.ը: Հ.Մ.Ը.Մ.ը միայն մարզախաղ չէ, սկստական շարժում չէ, այլ ան ամէն բանէ վեր Եռագոյնի ու հայրենիքի պաշտամունք է: Հ.Մ.Ը.Մ.ականը Եռագոյնի պաշտպան անկեղծ զինուորն է եղած բոլոր ժամանակներուն, եւ մանաւանդ երբ այդ Եռագոյնը հալածուած է շատերու կողմէ: Այո՛, Հ.Մ.Ը.Մ.ը Արամ Մանուկեաններու Երեւանը չղատարկելու վճռական որոշումին հարազատ արձագանգումը տուաւ, երբ անդրանիկ Հանրապետութեան անկումէն ետք բարձրաճակատ պահեց այդ անկախութեան խորհրդանիշ Եռագոյնը, իբրեւ հայութեան արժանապատուութեան եւ անոր գոյերթին երաշխիք: «Նահատակ ցեղի անմահներ»ով Հ.Մ.Ը.Մ.ը յաղթեց ու այսօր ալ կը շարունակէ իր յաղթարշաւը: Ներկայ ժամանակներուն մէջ Հ.Մ.Ը.Մ. կը գտնուի իր առաքելութիւնը ընդարձակելու անհրաժեշտութեան դիմաց, որպէսզի նորահաս սերունդները աւելի խուռներամ շարքե-

րով ապրին այս անփոխարինելի ու յաճախ անբացատրելի հպարտանքը ու դառնան բովանդակ հայութեան, անոր ամբողջական հայրենիքի տեսլականին, Եռագոյնին ու հայու ինքնութեան արժանաւոր պահպանները:

Երրորդ մտածումը բնականաբար կ'առնչուի «Մարզիկ»ի ստանձնած վաւերական ու առարկայական արժեւորումի դերակատարութեան: Ան յաջողեցաւ դառնալ այն ապահով բեմը, ուր Հ.Մ.Ը.Մ.ականի խօսքը եւ կեցուածքները հարազատօրէն արտացոլացին: «Մարզիկ» կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր աշխատանքներուն գնահատումը, որպէսզի այդ աշխատանքները յառաջիկային աւելիով արդիւնաւորուին: Կատարեց քննարկում, որպէսզի միջոց վառ մնայ աւելի լաւին ու կատարեալին ձգտելու Հ.Մ.Ը.Մ.ականի տեսիլքը, եւ մեր կեանքը յուզող ու տագնապեցնող հարցերուն փորձեց առանց տատանումի եւ մարզական բարձր ոգիով պատասխաններ ու լուծումներ տալ:

Վերջապէս, «Մարզիկ» յաջողութեամբ իրագործեց համահայկական մտածողութեան դարբնումը Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ, երբ տարբեր շրջաններու Հ.Մ.Ը.Մ.ականներ իրենց յօդուածներով եւ արտայայտած գաղափարներով մնայուն կերպով հաղորդակից մնացին իրարու: Համահայկական այդ մտածողութեան շնորհիւ է, որ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը համահունչ ընթացաւ հայ կեանքին: Հայ ժողովուրդի պատմութեան նորօրեայ փուլերուն Հ.Մ.Ը.Մ. դարձաւ հիմնական ներկայ, վերադարձաւ հայրենիք, մասնակից դարձաւ Արցախեան պայքարին ու կարեւոր դերակատար՝ նորահաս սերունդներու մօտ վերանկախացած հայրենիքի յանձնառու քաղաքացիի ու քաջարի պաշտպանի կազմաւորման աշխատանքին:

Ահաւասիկ, այս բոլորին հանգանակն է «Մարզիկ»ը, որուն 400 թիւերու խմբագրականները ինքնին բաւարար են դառնալու ներշնչման աղբիւր սերունդներու եւ հունաւորելու անոնց գործը, կամրջելու անցեալը ներկային եւ հաստատ քայլերով առաջնորդուելու դէպի ապագայ:

«Մարզիկ» արժանապատիւ կերպով արժանացաւ մեր ժողովուրդի տարիքային բոլոր շերտերուն ու խաւերուն թերթը դառնալու հարազատ կոչումին: Հայ ծնողը կը թերթատէ «Մարզիկ»ը ու կը հպարտանայ իր փոքրիկին առաջին տողանցքով: Հայ մարզիկը կը թերթատէ «Մարզիկ»ը ու կը հրպարտանայ իր արձանագրած մարզական նուաճումներով: Հայ սկստուոր կը թերթատէ «Մարզիկ»ը եւ ուրախութեամբ կ'արձանագրէ, որ իր սկստական ձեռնարկն աշխատանքը եւ ընդհանրապէս ծաւալած գործունէութիւնը կը դառնայ յաւերժական: Եւ անշուշտ շարքը կարելի է երկարել: Հայ կեանքէն ներս արժէքներու եւ ըմբռնումներու նահանջին մէջ, «Մարզիկ» կը շարունակէ մնալ կայունութեան ամուր բերաշխիք՝ ցոյց տալով ճիշդ ընտրանքը կամ ընտրանքները, որպէսզի մեր մտածումները չթափանցուին ու չաղաւաղուին, մեր հոգիները չալանդակուին ու միութենականի կրակը մնայ անմա՛ր ու ձայնը՝ շէնչող:

Այո՛, մենք կարիքը ունինք «Մարզիկ»ին, երբ պատասխանատու խօսքի, միութենական անկեղծ մտահոգութիւններու

դրսեւորման միջավայրերու պակաս կը զգացուի մեր շուրջ: Այդ առողջ միջավայրին ձեւաւորման համար մեր նախնիները իրենց անձնականէն ամէն ինչ զոհեցին: Մեզի կը մնայ հաւատարիմ մնալ անոնց կոչումին եւ զոհաբերութեան: «Մարգիկ» այսօր այդ միջավայրի ընդարձակման համար ունի յստակ դերակատարութիւն, որպէսզի օտարացնող եւ կասկածելի հողմեր չխուժեն մեր կեանքէն ներս:

Զորրորդ մտածումը, որ կը քանդակուի մեր տեսադաշտին մէջ, «Մարգիկ»ի լիբանանահայ միջավայրի ծնունդ ըլլալու իրողութիւնն է: Ան շատ բան կը պարտի լիբանանահայ գաղութի ներուժին: Երեսունհինգամեայ յոբելեանին առիթով, մենք պարտաւոր ենք գիտակցելու այս մարզին մէջ եւս կեդրոնական այս գաղութին ունեցած դերին ու նշանակութեան, որ հակառակ բազմաթիւ դժուարութիւններու, ահաւասիկ, Լիբանանի քաղաքացիական ու եղբայրասպան պատերազմի այդ թէժ հանգրուանին, երբ կը տիրէր խուճապ ու անորոշութիւն, ահաւասիկ, արի-արանց խումբ մը նուիրեալներ գաղութին մէջ նոր թերթ մը հիմնեցին եւ նոր ու խրախուսիչ վիճակ ստեղծեցին: Այս առումով նաեւ «Մարգիկ»ի երեսունհինգամեակը ունի իր թելադրականութիւնը եւ այժմէականութիւնը, եւ մենք հաւաքաբար պարտաւոր ենք գուրգուրալու այս գաղութի ներուժին, մարդուժի պատրաստութեան կարելիութեանց եւ ճառագայթումի անհրաժեշտութեան, որովհետեւ այս բոլորը մեր ճիտին պարտքն են եւ մենք ոչ մէկ ձեւով բարոյական իրաւունքը ունինք ձեռք բերելու յուսալիցները անզգոյշ ու անխոհեմ վարքագիծով կորսնցնելու:

Վերջապէս, «Մարգիկ»ի անցած ուղին արժեւորելու համար, անհրաժեշտ է նաեւ առանձնացնել հայ մամուլի պատմութեան ու առաքելութեան մէջ իր ինքնուրոյն տեղը ամրագրելու անոր վճռականութիւնը, երբ մանաւանդ մեր կեանքէն ներս ամէն օր ականջալուր ու ականատես կը դառնանք թերթերու եւ պարբերականներու թիւի նօսրացումին եւ, դժբախտաբար, փակումին: «Մարգիկ» գիտակցելով բոլոր դժուարութեանց՝ չ'երթար դիւրին լուծումներու, այլ Հ.Մ.Ը.Մ.ականի անկոտորում կամքով կը փորձէ յաղթահարել բոլոր դժուարութիւնները:

Վերջապէս, վարձքը կատարելով «Մարգիկ»ի համար «Մի՛շտ պատրաստ» Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանով առաջնորդուած ու առաջնորդուող բոլոր սերունդներուն:

Կը մաղթենք միշտ ՅԱՌԱՂ եւ ՅԱՌԱՂ ընթացք Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

Փա՛ռք «Նահատակ ցեղի անմահներ»ուն:

Կեցցէ՛ հայ սկառուտի ու մարգիկի հարազատ ու անբաժան եղբայրը՝ «Մարգիկ» պաշտօնաթերթը:

Ապրի՛ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը:



PinkKimberley.com.au



Diamonds beyond rare

Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.





Հ.Մ.Ը.Մ.ի ներկայ եւ նախկին Կեդրոնական Վարչութիւններու անդամներ Լիբանանի մէջ Զ. Զանրապետութեան դեսպանին հետ, «Մարզիկ»ի 35-ամեակի կարկանդակին շուրջ:

ԻՆՉՈ՞Ւ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՈՒՆԵՆԱԼ

(«ՄԱՐԶԻԿ»Ի 35-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Գրիգորիս Պողարեան
ՊԵՅՐՈՒԹ

Տասարակական որեւէ կազմակերպութեան համար պաշտօնաթերթ մը ունենալը պարզապէս սկզբունքային հարց չէ, ոչ ալ սին արժանապատուութեան գոհացում տալու միջոց է:

Պաշտօնաթերթը պարտի ըլլալ հաղորդակցութեան այն միջոցը, որուն ընդմէջէն տուեալ կազմակերպութիւնը իր գաղափարախօսութիւնը, նպատակները, պատմութիւնն ու գործունէութիւնը կը ծանօթացնէ անդամներուն, համակիրներուն թէ հանրութեան, անխտիր: Իսկ Հ.Մ.Ը.Մ.ի համար, այս բոլորին առընթեր, պաշտօնաթերթը հայապահպանումի եւ հայակերտումի նպաստող ազդակ է, որ յաճախ գերակշիռ կարեւորութիւն կը զգենու՝ ի հեծուկս պաշտօնաթերթին այլ պարտականութիւններուն:

«Մարզիկ»ը իր հիմնադրութենէն մինչեւ օրս եղած է Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութեան ջատագովը, արդարացրելով իր գոյութեան հիմնական նպատակներէն գլխաւորը:

«Մարզիկ»ի յաջորդական թիւերուն մէջ լոյս տեսած խմբագրականները գաղափարախօսութենէ անդին անցնելով՝ յաջողած են ժամանակին հետ քայլ պահելով լուսաբանել ազգային եւ նոյնիսկ միջազգային հրատապ հարցեր, մատնանշել հարցերը դիմագրաւելու լաւագոյն ուղիներ:

«Մարզիկ»ը նաեւ յաջողած է միութեան անցեալը, շրջաններու եւ մասնաճիւղերու պատմութիւնները ներկայացնել ընթերցողներուն, քաղուածաբար պատմական ուսումնասիրութիւններէ կամ ստացուած հաղորդագրութիւններէ թէ

անհատական վկայութիւններու ընդմէջէն:

«Մարզիկ»ի միջոցով ընթերցողները տեղեակ պահուած են մարզական նորագոյն իրադարձութիւններուն, սկսելով մասնաճիւղային եւ շրջանային մարզախաղերէ, անցնելով համա-Հ.Մ.Ը.Մ.ական եւ համահայկական խաղերէն, հասնելու համար միջազգային եւ համաշխարհային մրցաշարքերու մասին շահեկան տեղեկութիւններու:

Սկառտութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ թեւը ըլլալէ անկախ, եղած է ու կը շարունակէ ըլլալ Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ ամբողջանուէր հայեր կազմաւորող դարբնոցը: Հետեւաբար, «Մարզիկ»ի յաջորդական թիւերուն մէջ յաճախ առիւծի բաժինը յատկացուած է սկառտութեան: Եթէ սկառտութիւնը մարմնաւորումն է «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» նշանախօսքին (աւելի համապարփակ իմաստով՝ քան այն որ մարզիկը կը յատկանշէ), ապա «Մարզիկ»ը այդ մարմնաւորումը սեւ ու ճերմակով թուղթին փոխանցող լրատուամիջոցն է:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնական արժանիքներէն մէկն ալ վաստակատեալ եւ մանաւանդ երէց անդամներու արդար գնահատանքն է, անկախ «Ծառայութեան» թէ «Արժանեաց» շքանշաններու տուչութենէն: «Մարզիկ» բնաւ ժլատ չէ եղած Հ.Մ.Ը.Մ.ականներու մատուցած ծառայութիւնները ըստ արժանուոյն գնահատելու եւ ծանօթացնելու աշխատանքին մէջ:

Վերոյիշեալ բոլոր ծառայութիւններուն առընթեր, «Մարզիկ»ի կոչումին եւ գոյութեան հիմնական նպատակներէն մէկը եղած է հայատառ մամուլի միջոցով Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան ներկայացումը: Այսօր ըսողներ կան, թէ հայատառ մամուլը, գէթ մասնակի, իր տեղը պէտք է գիջի օտար լեզուներու, ըստ աշխարհագրական վայրի պահանջներուն: Դառն

իրողութիւնը այն է, թէ լեզուի նահանջը այսօր համատարած երեւոյթ է Սփիւռքի մէջ, սակայն Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան անքակտելի բաղադրիչներէն է մայրենիին գործածութիւնն ու պահպանումը: Հետեւաբար, ցնոր տնօրինութիւն Հ.Մ.Ը.Մ-ականներու պարտքն է հայապահպանման ի խնդիր եւ հայակերտումի իբրեւ միջոց, ո՛չ միայն ակումբներէ ներս պնդել հայերէնի գործածութիւնը, այլեւ՝ շարունակել «Մարզիկ»ի հայատառ հրատարակութիւնը: Եթէ այս հաստատումը համազօր է հոսանքն ի վեր թիավարելու, թող այդպէ՛ս ըլլայ: Արդեօք «Մարզիկ»ի հրատարակութիւնը շարունակելու որոշումը, այսօրուան նկատառումներով, աւելի՞ դժուար մարտահրաւէրներ դիմակայելու որոշում կ'ենթադրէ, քան

այն մարտահրաւէրները, որոնք գոյութիւն ունէին Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան օրերուն եւ որոնց յաղթահարումով ծնունդ առաւ այս կազմակերպութիւնը:

Չէնք կարծեր:

Մեզի պակասող հիմնադիր եղբայրներու հաւատքն ու ինքնավստահութիւնն է: Իբրեւ արժանաւոր ժառանգորդներ միութեան հիմնադիր եղբայրներուն, մեր նուազագոյն պարտաւորութիւններէն մէկն է Հ.Մ.Ը.Մ-ի հայելին հանդիսացող պաշտօնաթերթին՝ «Մարզիկ»ի շարունակականութիւնը ապահովել այնքան ատեն, որ Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն մէջ տակաւին հայատառ մամուլի ծարաւ ընթերցողներ կան:

«ՄԱՐԶԻԿ»Ն ՈՒ ԵՂԲԱՅՐ ՄԻՆՐԱՆԸ

(«ՄԱՐԶԻԿ»Ի 35-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Սերոբ Սահակեան
ԵՐՈՒՍԱՂԵՄ

«Մարզիկ»ի 35-ամեակի բաւական ճոխ եւ տպաւորիչ նշումը առիթ տուաւ, որ պահ մը աչքիս առջեւ տողանցեն «Մարզիկ»ի թէ ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան վեթերան եղբայրներէն շատերը, զորս անձնապէս ճանչնալու բախտը ունեցած եմ, յանձինս եղբայրներ Պատրիկ Կիւլպէնկեանի, Բիւզանդ Թորիկեանի, յարաբերաբար միւսներուն՝ աւելի երիտասարդ Գառնիկ Մկրտիչեանի, Կարպիս Գապասագալեանի, բայց մանաւանդ՝ մեր անմիջականէն այլեւս հեռու՝ հանգուցեալ եղբայր Միհրան Շիմշիրեանի:

Եղբայր Միհրանին, որ իմ աչքիս հոմանիշն էր «Մարզիկ»ին:

Թերթ, որ կարծես իմաստն էր իր կեանքին ու կարծէք իր կեանքը շատ բանով իմաստաւորուած էր այդ «Մարզիկ»ով:

Եղբայր Միհրանին հետ ծանօթութիւնս, աւելին՝ մտերմութիւնս կու գար այն քանի մը Պատգամաւորական թէ Շրջանային ժողովներէն, ուր եղբայր Միհրանին ներկայութիւնը աւելի քան տիրական էր ժողովներու սեղաններուն շուրջ ու ոչ միայն:

Եղբայր Միհրանին ներկայութիւնը կարելի չէր ապրիլ միայն ժողովի ընթացքին. ան նոյնքան տիրական թէ նշանակալից ներկայութիւն էր ժողովէն դուրս, ճաշասրահ, սպասման սրահը թէ պարզապէս իբրեւ թէ հանգիստի կոչուած «լոպին», ուր եղբայր Միհրան չէր դադրեր նիւթ դարձնելէ ժողովին կիսատ մնացած օրակարգը, չըսելու անվերջանալի օրակարգը, ինչ կը վերաբերէր «Մարզիկ»ի ելեւմուտին թէ ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ-ի տնտեսական, աւելին՝ ելեւմտից տագնապներուն:

Բոլորիս համար ժողովը իր բոլոր հրատապ թէ ահագան-

գային հարցերով իր չափն ու սահմանը ունէր, բայց եղբայր Միհրանի անդուլ մտքին եւ հոգիին համար նման սահմանափակումներ կամ տրամադրութիւններ չկային:

Պանդուկէն եկեղեցի կիրակնօրեայ երթը նոյնիսկ պէտք էր օգտագործուէր իր նպատակին, երբ եղբայր Միհրան աչքը իր շուրջը դարձնելով կը փորձէր վերլուծել եւ գնահատել միջին կիպրահայու կեանքին միջին մակարդակը, այլ խօսքով՝ իր նիւթական մոտքը, վերջապէս իր կարողականութեամբ նիւթաբարոյական իր մասնակցութիւնը բերելու գաղութի կեանքին թէ յատկապէս Հ.Մ.Ը.Մ-ին:

Քիչ մը հեռուէն կէս ականջով մեզի հետեւող Լոս Անճելըսի եղբայր Գառնիկը լաւ գիտէր որ այդ նիւթը եւ եղբայր Միհրանին անդրադարձը նաեւ կը վերաբերէր իրեն ու ո՛չ միայն իրեն:

Եղբայր Միհրանն էր խորքին մէջ այն ազնիւր, այնուհետեւ իր արտայայտութեանց մէջ աւելի քան համարձակը, որ «Մարզիկ»ի տնտեսականին վերաբերող երկարաշունչ ժողովը կը փակէր ըսելով. սիրելիներ, մեզի խելք մի՛ տաք, դրամ տըլէք: Այդ է որ մեզի կը պակսի այս պահուս:

Թէ մենք յարաբերաբար եղբայր Միհրանին որքա՛ն խելք ունէինք, որքա՛ն ոյժ, չեմ գիտեր, գիտեմ սակայն, որ բախտը չունէինք եղբայր Միհրանին նմանը մեր մէջ ունենալու տասը տարի եւս:

Յամենայնդէպս, եղբայր Միհրան, դուն չկաս՝ գործը կայ: Կանգուն է Հ.Մ.Ը.Մ-ը ու անոր հայելի «Մարզիկ»ը իբրեւ թերթ թէ իբրեւ քու նմաններէդ ներշնչուած գաղափարախօսութիւն:





ՀՀ ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ № Ո - 199

ՀՄԸՄ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

պարգևատրվում է Հայաստանի Հանրապետության
սփյուռքի նախարարության

ՈՍԿԵ ՄԵՂԱԼՈՎ

«Մարզիկ» պաշտոնաթերթի 35-ամյակի
արթիվ



Նախարար՝ Հ. Հակոբյան

13 հուլիսի 2016 թ.
ք. Երեվան



«ՄԱՐԶԻԿ»Ի 35-ԱՄԵԱԿԻ ԵՒ 400-ՐԴ ԹԻՒԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԵԾԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ

Սփիտոֆի
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
«ՈՍԿԻ ՄԵՏԱԼ»ՈՎ
ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐԷ
Հ.Մ.Ը.Մ.Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԵՒ
«ՇՆՈՐ ՀԱԿԱԼԱԳԻՐ»ՈՎ
ԿԸ ՊԱՏՈՒԷ
«ՄԱՐԶԻԿ»Ի
ԽՄԲԱԳԻՐ
ԵՂԲ. ՎԻԳԷՆ
ԱԻԱԳԵԱՆԸ





Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

«Մ

արզիկ»ի 35-ամեակը եւ 400-րդ թիւին հրատարակութիւնը մեծաշուք հանդիսութեամբ եւ պաշտօնական ընդունելութեամբ մը նշուեցաւ Հինգշաբթի, 14 Յունիս 2016-ի երեկոյեան ժամը 8-ին, «Յակօր Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանի եւ կազմակերպութեամբ «Մարզիկ»ի վարչութեան:

Իրենց ներկայութեամբ հանդիսու-

թիւնը պատուեցին Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան, Հայ Կաթողիկէ Համայնքի Պէյրութի Պատրիարքական Թեմի Օգնական Եպիսկոպոս Գէորգ Եպս. Ասատուրեան, Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Սամուէլ Մկրտչեան, Այնճարի քաղաքապետ Վարդգէս Խօջեան, Պուրճ Համուտի փոխ քաղաքապետ Մարտիկ Արսլանեան, նախկին նախարար Վրէժ Սպունճեան, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներ, մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ-ականներ եւ «Մարզիկ»ի ընթերցողներ:

35-ամեակի հանդիսութիւնը սկսաւ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին կողմէ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն կատարողութեամբ:

«ՄԱՐՁԻԿ»Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԲԱՑՄԱՆ ԽՕՍԲԸ

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց «Մարզիկ»ի վարչութեան ատենապետ քոյր Սիլվա Սաղըրեան: Ան շեշտեց, որ Սփիւռքի պատմութեան մէջ պաշտօնաթերթերու հրատարակութիւնը ինքնին իրագործում մըն է, իսկ «Մարզիկ»ի 35-ամեակ թեւակոխելու իրողութիւնը յաւելեալ փաստ մըն է իրագործումներու շարքին մէջ:

«Մարզիկ» հրատարակուած է Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերու գործունէութիւնները իրարու ծանօթացնելով եւ աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ-ականներու միջեւ անքակտելի կապը դառնալով:

Այսօր, «Մարզիկ»ի առաքելութիւնը կը շարունակուի գրաւոր հրատարակութեան կողքին՝ կայքէջի եւ ընկերային ցանցերու միջոցով, իսկ 35-ամեակի



տօնակատարութիւնները սկիզբ կ'առնեն Լիբանանէն ու կը շարունակուին Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած կառոյցին պատկանող երկիրներուն մէջ», ըսաւ քոյր Սաղըրեան:

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ՃՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ**

Բացման խօսքին յաջորդեց գեղարվեստական ճոխ յայտագիր մը, որուն ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Պոլսի Համուտի, Ժրտէյտէի, Պէյրութի եւ Անթիլիասի մասնաճիւղերէն սկաուտներ հանդէս եկան կենդանի պատկերով, երգով, նուագով, ասմունքով եւ պարով:

Յատկանշական ելոյթներ ունեցան քոյրեր Լուի Պիլալեան (Ֆլուիթ), Ռիթա Վարդանեան (ասմունք), Գարօլին-Լէա Կարապետեան (պար) եւ «Հայք» նուագախումբը (Հ.Մ.Ը.Մ. Ժրտէյտէ):

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ**

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ լուսարձակի տակ առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Մայր կանոնագիրին «Միջոցներ» բաժինին չորրորդ կէտը, ըստ որուն՝ միութիւնը իր նպատակը կ'իրագործէ «Հրատարակութիւններով, հայոց լեզուի, պատմութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն նպաստող մշակութային ձեռնարկներով»:

«Հրատարակութիւնները՝ թերթը, գիրքը եւ ալպոմ-յուշամատեաններն են, որոնք յատուկ տեղ եւ կարեւորութիւն ունին Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը ինք ծնունդն է թերթի մը՝ Պոլսոյ «Մարմնամարզ»ին», ըսաւ եղբ. Մկրտիչեան:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան հաստատեց, որ «Մարզիկ» հարազատ ժառանգորդը կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ական պատմական մամուլին: «Մարզիկ»ը Հ.Մ.Ը.Մ.ի նպատակները տարածողն է, Հ.Մ.Ը.Մ.ի արժէքները ծանօթացնողն է, Հ.Մ.Ը.Մ.ի նուիրեալները անմահացնողն է, հետեւաբար, ան կենսական պահանջ է եւ մնայուն անհրաժեշտութիւն: Յառաջիկային «Մարզիկ» կրնայ ստանալ տարբեր տեսք՝ տպագիր, էլեկտրոնային թէ՛ այլ, սակայն ան չի դադրիր Հ.Մ.Ը.Մ.ի ձայնը ըլլալէ, «Կամաւոր բանակ»ին հարազատ դիմագիծը ներկայացնելէ»:

«Մարզիկ»ը «Մարզիկ» դարձնողները,՝ աւելցուց եղբ. Մկրտիչեան,՝ հանդիսացան անոր յաջորդական խմբագիրները, աշխատակիցներն ու ընթերցողները՝ աւելցնելով, որ «Մարզիկ» այ-



սօր կը հասնի աշխարհի 5 ցամաքամասի 25 երկիրներու 107 քաղաքներ: Հոն, ուր Հ.Մ.Ը.Մ. կայ, հոն «Մարզիկ»ը ներկայ է:

«Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան յանձնառութիւնն է «Մարզիկ»ը, իբրեւ հրատարակութիւն, հայոց լեզուի եւ հայոց պատմութեան կարեւոր մէկ մասունք: Առ այդ, ան նոյնքան կարեւորութիւն կը ներկայացնէ՝ որքան ախոյեանական որեւէ բաժակ կամ սկառուտական որեւէ յաջողութիւն, որովհետեւ ան կը ծառայէ հայակերտման ու հայապահպանման այն նպատակին, որուն համար ստեղծուած է Հ.Մ.Ը.Մ.ը», շեշտեց եղբ. Մկրտիչեան (եղբոր խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 4-5):

35-ԱՄԵԱԿԻ ՏԵՍԵՐԻՉԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան խօսքէն ետք, ցուցադրուեցաւ «Մարզիկ»ի 35-ամեայ երթը ներկայացընող տեսերիզը, որ ընդհանուր ակնարկ մը կը նետէր թերթին հիմնադրութեան, զարգացման եւ այսօրուան պարզած իրավիճակին՝ պատմական լուսանկարներով եւ «Մարզիկ»ի յատկանշական թիւերու ներկայացումով:

ՕՐՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ

35-ամեակի տօնակատարութեան պատգամը փոխանցեց Համազգայինի «Վահէ Սէթեան» հրատարակչատան տնօրէն Յակոբ Հաւաթեան: Ան յայտնեց, որ այս օրերուն հայ մամուլի որեւէ

ներկայացուցիչի հիմնադրութեան տարեդարձի նշումը խորիմաստ պատգամներով, այժմէական թելադրականութեամբ եւ ժամանակակից հնչեղութեամբ կը ներկայանայ բոլորին, որովհետեւ մամուլը ընդհանրապէս կը գտնուի մեծ մարտահրաւէրներու դէմ յանդիման:

«Հայ մամուլի ծառայողներուն, աշխատակիցներուն եւ խմբագիրներուն թիւը օրէ օր նահանջ կ'արձանագրէ: Առկայ է չափանիշերու յստակ անկում, եւ միջազգային մամուլը հետաքրքրական ու քաջողական դառնալու իր ճիգին մէջ այսօր սկսած է շեղիլ իր հարազատ հունէն եւ, շուկայի կանոններուն ու պահանջներուն հետեւելով, դառնալ անդիմազիծ ու անողնայար ներկայութիւն մը հասարակութեան մէջ: Աւելին, իր աժան քարոզչութեան ճիգին մէջ, ան կը խախտէ մարդկային ու ազգային սկզբունքներն ու ըմբռնումները՝ դառնալով սպառողական արտադրութիւն մը», ըսաւ ան:

Հաւաթեան աւելցուց, որ գաղափարական մամուլի երիտասարդ, բայց հարուստ կենսափորձ նուաճած մէկ վաւերական ներկայացուցիչին՝ «Մարզիկ»ի հիմնադրութեան 35-ամեակն է, որ այսօր կը նշուի, եւ այս յոբելեանին նուիրուած «Մարզիկ»ի խմբագրականը լաւագոյնս կը սահմանէ անոր առաքելութիւնը եւ կը հունաւորէ անոր ապագայ երթը: «Այո՛, «Մարզիկ» գործեց եւ պիտի շարունակէ գործել իր խմբագրականին իսկ հաստատումով՝ «Ի խնդիր նորահաս սերունդներու քաղաքացիա-

կան օրինակելի կրթութեան եւ ազգային առողջ դաստիարակութեան»: Ան պիտի շարունակէ գործել «Ի սպաս մեր ժողովուրդի վաղուան լուսաւոր ապագայի կերտումին», նշեց ան:

Պատգամախօսը շեշտեց նաեւ, որ առանց Հ.Մ.Ը.Մ.ի հարուստ գործունէութեան, մասնաճիւղերու, միաւորներու եւ մարզական խումբերու լայնատարած աշխատանքին «Մարզիկ»ի էջերը պիտի չկարենային շնչել ու անկարելի պիտի ըլլար անոր թիւերը հարստացնել:

Շարունակելով, Հաւաթեան ըսաւ, որ «Մարզիկ» արժանապատիւ կերպով ժողովուրդի տարիքային բոլոր շերտերուն եւ խաւերուն թերթը դառնալու հարազատ կոչումին արժանացաւ: Ան դիտել տուաւ, որ հայ ծնողքը կը թերթատէ «Մարզիկ»ը ու կը հպարտանայ իր փոքրիկին առաջին տողանցքով, հայ մարզիկը կը թերթատէ «Մարզիկ»ը ու կը հպարտանայ իր արձանագրած մարզական նուաճումներով, հայ սկառուտը կը թերթատէ «Մարզիկ»ը, եւ ուրախութեամբ կ'արձանագրէ, որ իր սկառուտական ձեռային աշխատանքը եւ ընդհանրապէս ծաւալած գործունէութիւնը կը դառնայ յաւերժական:

Հաւաթեան դիտել տուաւ, որ «Մարզիկ»ի անցած ուղին արժեւորելու համար անհրաժեշտ է առանձնացնել հայ մամուլի պատմութեան եւ առաքելութեան մէջ իր ինքնուրոյն տեղը ամրագրելու անոր վճռականութիւնը, երբ մանաւանդ մեր կեանքին մէջ ամէն օր ականջալուր ու ականատես կը դառնանք թերթերու եւ պարբերականներու

թիւի նօսրացումին եւ, դժբախտաբար, փակումին: «Մարգրիկ» գիտակցելով բոլոր դժուարութեանց չ'երթար դիւրին լուծումներու, այլ Հ.Մ.Ը.Մ.ականի անկոտորում կամքով կը փորձէ յաղթահարել բոլոր դժուարութիւնները (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 6-8):

ԴԵՍՊՈՒՆ ՍԱՄՈՒԷԼ ՄԿՐՏՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ


Օրուան պատգամախօսին յաջորդեց Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Սամուէլ Մկրտչեանի ելոյթը:

Մկրտչեան իր խօսքին սկիզբը ընթերցեց «Մարգրիկ»ի 35-ամեակին առիթով Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի յղած շնորհալուրական ուղերձը, որուն մէջ մեծապէս կը գնահատուի ազգային վեհ արժէքներով մատղաշ սերունդը տոգորելու կոչուած Հ.Մ.Ը.Մ.ի երկարամեայ գործունէութիւնը, որուն իւրապատուկ խանդավառութիւն եւ ներշնչում կը հաղորդէ երկարամեայ տպագիր մամուլը: Նախարար Յակոբեան լուսարձակի տակ կ'առնէ կեդրոնական Վարչութեան նուիրական ջանքերը՝ պահպանելու 35-ամեայ պարբերաթերթը, որուն ճամբով անդրադարձ կը կատարուի միութեան գործունէութեան եւ աշխատանքներուն: Աւարտին, նախարար Յակոբեան իր ուղերձին մէջ կը շնորհալուրէ «Մարգրիկ»ի 35-ամեակը՝ մաղթելով նորանոր ձեռքբերումներ եւ ամենայն բարիք, պարբերաթերթի անխափան երթ (ուղերձը տեսնել Բ. կողքին վրայ):

Այնուհետեւ, դեսպան Մկրտչեան փոխանցեց իր սրտի խօսքը եւ յայտնեց, որ որեւէ տպագիր մամուլի 35-ամեակի նշումը լուրջ եւ իմաստալից իրադարձութիւն է: Ան դիտել տուաւ, որ «Մարգրիկ»ի արժէքին մասին խօսելով, լուսարձակի տակ կ'առնուի Հ.Մ.Ը.Մ.ի արժանիքը: «Հ.Մ.Ը.Մ.ի անուան մէջ մարմնակրթութիւն բառը քիչ իմաստ կը պարունակէ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը ո'չ միայն մարմնի կրթութիւն է, այլ նաեւ՝ մտքի եւ հոգիի կրթութիւն է: Այս եռամիասնութիւնն է՝ ոգի, միտք ու մարմին,

որ կ'առաջնորդէ յաջողութիւններու եւ առիթ կու տայ նւաճելու այն բարձունքները, որոնց միշտ ձգտած է հայ ժողովուրդը: Հ.Մ.Ը.Մ.ը, կրթելով ու դաստիարակելով ուժեղ հայ անհատներ, միաժամանակ անոնց մէջ կը սերմանէ հաւաքակալութեան, ընդհանրապէս ու թեան արժէք, որպէսզի միասնաբար գործելու, մէկգմէկու թիկունք կանգնելու եւ իրարու աջակցելու, խումբի անդամ ըլլալու սկզբունքը ամրապնդուի եւ գործնական դառնայ, որովհետեւ այդպիսով իւրաքանչիւրը կը դառնայ ամբողջ ժողովուրդի մը ներկայացուցիչը», ըսաւ Մկրտչեան:

Ապա, դեսպանը յայտարարեց, որ



«Մարգրիկ»ի 35-ամեակին առիթով, Սփիւռքի նախարարութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութիւնը կը պարգևատրէ Հայաստանի Հանրապետութեան «Ոսկի մետալ»ով, իսկ «Մարգրիկ»ի խմբագիրը կը պատուէ «Շնորհակալագիր»ով մը՝ «Հայաստան-ըՍփիւռք գործակցութեան զարգացման նպաստելու, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան «Մարգրիկ» պաշտօնաթերթի խմբագրի պաշտօնին երկարամեայ գործունէութեան համար»:


Դեսպան Մկրտչեան «Ոսկի մետալ»ը յանձնեց Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտչեանին, իսկ «Շնորհակալագիր»ը՝ «Մարգրիկ»ի երկարամեայ խմբագիր եղբ. Վիգէն Աւագեանին:

ԱՌԱՋՆՈՐԴ ՇԱՀԷ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆԻՆ ԽՕՍՔԸ

Հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան: Ան ըսաւ, որ միջոցառումը տօնական է, իսկ տրամադրութիւնը՝ յաղթական, որովհետեւ հայ մամուլին յաղթանակն է, որ կը նշուի «Մարգրիկ»ի 35-ամեակին ընդմէջէն:

Այս առիթիւ իր յուշերը վկայակոչելով, Շահէ Եպս. Փանոսեան յայտնեց, որ իրեն համար յատկանշական եղած է, երբ Դպրեվանքի մէջ աշա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF DIASPORA


Շնորհակալագիր

Certificate of gratitude

ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ

ՎԻԳԷՆ ԱՒԱԳԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅԻՌԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՋԱՐԳԱՏՄԱՆ ՆՊԱՍԵՆՈՒ, ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ «ՄԱՐԳՐԻԿ» ՊԱՇՏՈՒՄԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԻ ՊԱՇՏՈՒՆ ԵՐԿԱՐԱՍԵԱՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ
MINISTER HRANUSH HAKOBYAN

№ 321-76
12.07

Երևան



կերտութեան տարիներուն ստացած է «Մարգիկ»ի առաջին թիւը:

«Եթէ ճաշակով շարունակ լուսանրկարներով, յօդուածներով ու գրութիւններով պատրաստուած «Մարգիկ»ի 400 թիւերը իրարու քով շարենք, ապա մենք կ'ունենանք մեր կեանքին խճանրկարը», ըսաւ ան:

Առաջնորդ սրբազանը հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ. երախտաւորները կը կերտէ, իսկ «Մարգիկ» գրչի ճամբով աջակից կ'ըլլայ հայապահպանումի համար տարուած ճիգերուն: Ան մաղթեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը մնայ հայ կեանքին մէջ տիրական ներկայութիւն եւ շարունակէ

ազգային կեանքին մէջ արժէքները պահպանել:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերով:

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ**

Մեծաշուք հանդիսութեան յաջորդեց պաշտօնական ընդունելութիւնը եւ «Մարգիկ»ի 400-րդ թիւին գինեծօնը՝ Մարաշի Հայրենակցական Միութեան «Գերմանիկ» սրահին մէջ:

Ընդունելութեան սկիզբը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բաֆֆի Կէվօղլանեան ողջու-

նեց ներկաները եւ հրաւիրեց «Մարգիկ»ի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեանը, որպէսզի այս առիթով փոխանցէ իր սրտին խօսքը:

Եղբ. Աւագեան յայտնեց, որ 21 տարի առաջ «Մարգիկ»ի խմբագրութիւնը ստանձնելով Հէր կրնար պատկերացնել, որ օրին մէկը թերթին 244 թիւերու խմբագրութեան բեռը ուսերուն՝ սրտի խօսք կրնար փոխանցել «Մարգիկ»ի 35-ամեակին առիթով: Այս իրագործումը կը պարտինք «Մարգիկ»ի հիմնադիրներուն, թերթին երկար տարիներու երախտաւորներուն, այսօրուան պատասխանատուներուն եւ բոլոր անոնց, որոնք հաւատքով, նուիրումով եւ անսահման գուրգուրանքով ծառայեցին այս թերթին, ապահովելու համար անոր անխափան հրատարակութիւնը:

«Մարգիկ» լոյս տեսած է առանց խմբագիրի, երբ իր խմբագիրը՝ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեան ինկած է նահատակ: «Մարգիկ» լոյս տեսած է առանց ելեկտրականութեան եւ հաղորդակցութեան միջոցներու, արեւմտեան Պէյրութի դժոխային պայմաններուն մէջ: «Մարգիկ» լոյս տեսած է առանց գրասենեակի եւ աշխատակիցներու, արեւելեան Պէյրութի տաղանապալի օրերուն: Թերթը լոյս տեսած է առանց նիւթական բաւարար միջոցներու եւ արհեստավարժ անձնակազմի, յետ պատերազմեան երկար հանգրուանին: Ու բոլոր պարագաներու, ան երբեք չէ դադրած լոյս տեսնել եւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքե-



ՄԱՐՁԻԿ, ԻԹ. ՏԱՐԻ, ԹԻՒ 4 (334)



լութեան եւ դերակատարութեան տարածիչը ըլլալէ, միշտ միութենական հաւատքը, կամքն ու վճռականութիւնը դրամագլուխ ունենալով, հաստատեց եղբ. Աւագեան:

«Այսօր մենք գինեծօնը պիտի կատարենք «Մարգիկ»ի 400-րդ թիւին, շարունակեց եղբ. Աւագեան եւ հարց տուաւ, եթէ աշխարհի մէջ կա՞յ լեզու մը, որ գիրքի կամ թերթի հրատարակութեան համար կ'օգտագործէ լոյս տեսաւ բացատրութիւնը, - միայն մենք՝ հայերս կ'ըսենք լոյս տեսաւ: Այս պարագային, «Մարգիկ»ը 400 անգամ լոյս տեսաւ եւ

Հ.Մ.Ը.Մ.ի լոյսը տարածեց աշխարհի չորս ծագերը: «Մարգիկ» լուսաւորեց մեր տունները, ակումբները, վաճառատունները, լուսաւորեց դէպի բարձրացում տանող մեր ուղին, մեզի հետ բարձրացնելով նաեւ մեր ժողովուրդը՝ մինչեւ որ հասնինք «Կատարն հայրենի լեռանց հեռագոյն», ուր «Երթանք կոթողել դրօշակն եռագոյն», ըսաւ ան:

Խմբագիր եղբոր խօսքէն ետք, «Մարգիկ»ի 400-րդ թիւին գինեծօնը կատարեցին Շահէ Եպս. Փանոսեան, Գէորգ Եպս. Ասատուրեան, ղեկավար Սամուէլ Մկրտչեան, Կեդրոնական Վարչութեան

ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտչեան, խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան եւ «Մարգիկ»ի նախկին խմբագիրներէն Վարուժան Մուրատեանի կիներ՝ քոյր Յասմիկ Մուրատեան եւ Երուանդ Տէմիրճեանի գաւակը՝ եղբ. Կարօ Տէմիրճեան:

Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին եղբ. Բաֆֆի Կէվօղլանեան քանի մը առիթով յայտարարեց «Մարգիկ»ի 35-ամեակի նուիրատուներու ցանկերը:

Ընդունելութիւնը իր աւարտին հասաւ 35-ամեակի կարկանդակի հատումով:



ՄԱՐՁԻԿ, ԻԹ. ՏԱՐԻ, ԹԻՒ 4 (334)



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 25-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ՝

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՄԱՍՆԱԾԻԴԵՐՈՒ ԿԵԴՐՈՆՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի Պուլկարիոյ շրջանի վերականգնման 25-ամեակին առիթով եւ Փլովտիվի մասնաճիւղին 95-ամեակի տօնակատարութեան մասնակցելու համար, 6-13 Յունիս 2016-ին, Պուլկարիա այցելեց եւ Հ.Մ.Ը.Մ.Ի տեղւոյն մասնաճիւղերու կեդրոնները այցելեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

ՊՈՒԿԱՍ

Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիա հասնելով, 7 Յունիսին, եղբ. Մկրտիչեան ուղղուեցաւ Պուլկաս եւ հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Պուլկասի մասնաճիւղի վարչութեան հետ: Հնգանդամ կազմէն, ճամբորդութեան պատճառով, կը բացակայէին երկու վարչականներ: Ներկայ էին երեք վարչականներ՝ ատենապետ քոյր էլիզապէթ Պօղոսեան, նախկին ատենապետ եղբ. Անդրանիկ Փոստաճեան եւ գանձապահ քոյր Աղաւնի Վարժապետեան:

Պուլկասի հայութիւնը կը հաշուէ 1100 հոգի: Գաղութին մէջ կը գործեն ՀՕՄ-ը (բաղկացած 60 անդամէ), եկեղեցւոյ վարչութիւնը, դպրոցի վարչութիւնը եւ ՀԲԸՄ-ը: Պուլկասի Հ.Մ.Ը.Մ.ական անդամներուն թիւն է՝ 20 (3 գայլիկ, 16 արի-արենոյշ եւ 1 երէց): Մասնաճիւղը կը կիրարկէ երեք մարզաձեւ՝ լող, թենիս եւ ճատրակ: Մարզիկներուն թիւը փոքրաթիւ է: Շրջանին գլխաւոր հարցը այն է, որ տարիքով մեծ տղաքը կա՛մ կ'աշխատին երկրին մէջ, միշտ ձգտելով ճամբորդել այլ երկիրներ, կա՛մ ալ աշխատանքի պատճառով արդէն կը գտնուին երկրէն դուրս:

ՎԱՌՆԱ

8 Յունիսին, եղբ. Մկրտիչեան այցելեց Վառնա եւ տեսակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի տեղւոյն վարչութեան հետ: Վարչութիւնը հնգանդամ է: Դիւանին մաս կը կազմեն ատենապետ եղբ. Պետրոս Պէյլէրեան, քարտուղար եղբ. Պերճ Վարժապետեան եւ գանձապահ Մարտիկ Պէյլէրեան: Շրջանի ունի 35 հոգինոց սկաուտութիւն (10 գայլիկ, 15 արի-արենոյշ, 10 երէց): Մասնաճիւղը կը կիրարկէ ֆուտպոլ, թենիս եւ վոլիպոլ: Ունի 13 մարզիկ:

Վառնայի գաղութը կը հաշուէ 3000-4000 հոգի: Գաղութին մէջ կը գործեն ՀՕՄ-ը, Հ.Յ.Դ.Ն., եկեղեցւոյ վարչութիւնը եւ ՀԲԸՄ-ը: Շրջանը կը տառապի Պուլկասի դժուարութենէն:



Երիտասարդ ուժերու բացակայութիւն՝ աշխատանքի կամ ճամբորդութեան պատճառով:

ՇՈՒՄԷՆ

Այցելութիւններու շարքին երրորդը եղաւ Շումէն քաղաքը, 9 Յունիսին: Շումէնի մասնաճիւղի վարչութիւնը հնգանդամ է: Շրջանի սկաուտներուն թիւը 8 է (5 արի-արենոյշ, 3 երէց): Մասնաճիւղը կը կիրարկէ ճատրակ, փինկ-փոնկ եւ թենիս: Շրջանը ունի 3 մարզիկ:

Շումէնի հայութիւնը կը հաշուէ 190 հոգի: Շրջանին մէջ



կը գործեն եկեղեցւոյ վարչութիւնը եւ «Երեւան» Մշակութային Միութիւնը:

ՌՈՒՍԷ

10 Յունիսին, եղբ. Մկրտիչեան մեկնեցաւ Ռուսէ եւ հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն վարչութեան հետ, որուն դիւանին մաս կը կազմեն ատենապետ եղբ. Սարգիս Խաչիկեան, քարտուղար քոյր Լիւսի Նշանեան եւ գանձապահ քոյր Էլիզա Յարութիւնեան: Շրջանի սկաուտներուն թիւն է 15 (5 գայլիկ եւ 10 արի-արենոյ): Խմբապետուհին է քոյր Վարդանոյ Անուշեան:



Ռուսէի հայութիւնը կը հաշուէ 500-600 հոգի: Շրջանին մէջ կը գործեն ՀՕՄ-ը, ՀԲԸՄ-ը եւ եկեղեցւոյ վարչութիւնը: Նկատի ունենալով, որ շրջանը սահմանագիծ է Ռուսմանիոյ հետ, Ռուսէի հայութիւնը կը փորձէ կապեր հաստատել Ռուսմանիոյ հայ գաղութին հետ: Շրջանը ունի մշակութային գործունէութիւն:

ՓԼՈՎՏԻՎ

Եղբ. Մկրտիչեանի այցելութիւններու շարքին հիմնական



մէկ հանգրուանը եղաւ Փլովտիվը, ուր եղբայրը մնաց երկու օր եւ, իբրեւ պատգամախօս, ներկայ գտնուեցաւ եւ Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան խօսքը փոխանցեց Փլովտիվի մասնաճիւղի հիմնադրութեան 95-ամեակի եւ վերականգնման 25-ամեակի հանդիսութեան:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Փլովտիվի եկեղեցւոյ եւ դպրոցի շրջափակին մէջ: Ներկայ գտնուեցան 250 ազգայիններ: Այս առիթով ներկայացուեցաւ սկաուտներու կողմէ բաւական լաւ պատրաստուած գեղարուեստական յայտագիր մը: Հանդիսութեան իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Սոֆիայի եւ Վառնայի սկաուտական խումբերը: Տեղի ունեցաւ խոստման արարողութիւն, որմէ ետք եղբ. Մկրտիչեան արտասանեց իր խօսքը:

Եղբ. Մկրտիչեան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ ընտանիքին 107 մասնաճիւղերը իրենց հայեացքները սեւեռած են Փլովտիվ տեսնելու համար, որ իր վերականգնման 25-ամեակը տօնակատարող այս մասնաճիւղը ի՞նչ ունի ըսելիք հայութեան: Բոլորը կ'ուզեն գիտնալ, թէ այս մասնաճիւղը ի՞նչ ունի ընելիք իր գաղութին եւ անմիջական շրջապատին:

«Պէտք է արժանի ըլլալ Հ.Մ.Ը.Մ-ականի կոչումին եւ անպայման ըսելիք եւ ընելիք ունենալ մեր կեանքին մէջ, մեր գաղութին եւ մեր նոր սերունդներու դաստիարակութեան գործին մէջ: Անտարբերութիւն, ծուլութիւն եւ անհոգութիւն ներքի չէ: Արտօնելի՛ չէ: Ամէն մարդ հարկ է իր պատասխանատուութեան գիտակցութիւնը ունենայ եւ իրեն վստահուած գործը լաւագոյնս կատարէ՝ անձնական նախասիրութիւնները եւ շահերը մէկ կողմ ձգելով, ընդգծեց եղբ. Մկրտիչեան:

Ապա, շարունակելով, ան ըսաւ. «Հայութիւնը կարիքը ունի բոլորիս համախումբ ճիգերուն: Մեր ժողովուրդը կարիքը ունի մեր նոր սերունդի բոլոր գաւակներու ներդրումին եւ մասնակցութեան մեր կեանքին: Հայրենիքը պէտք ունի բոլորին:

«Ամրացնենք մեր շարքերը, կազմակերպենք ու դաստիարակենք մեր տղաքն ու աղջիկները, որպէսզի անոնք պատրաստ ըլլան վաղուան մեր մարտահրաւէրներուն: Պուկարիան ընդհանրապէս եւ Փլովտիվը յատկապէս պէտք ունի բոլորին՝ վերականգնելու համար իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ական շէն ու աշխոյժ



մասնաճիւղ: Սկսած անհատական մեր շարքերը պէտք է աւելի խտանան եւ բանակումները աւելի բազմաձևան: Դուրսը, մեզմէ հեռու մարդ պէտք չէ մնայ: Բոլորը պէտք է հրաւիրել գործի եւ պատասխանատուութեան: Մենք կը հաւատանք, որ երբ ծրագրեալ եւ կազմակերպուած գործ ըլլայ, Հ.Մ.Ը.Մ-ի շարքերը կը կրկնապատկուին ու կը բազմապատկուին»:

Իր խօսքը Փլովտիվի գաղութին ուղղելով, եղբ. Մկրտիչեան շեշտեց, որ «Ինչպէս անցեալին, այսօր եւս ան պատրաստ է իր գաւակները յանձնելու Հ.Մ.Ը.Մ-ին, որպէսզի անոնք մեծնան առողջ միջավայրի եւ ազգային միջնորդութի մէջ: Պէտք է վստահիլ Հ.Մ.Ը.Մ-ին եւ մեր կարողութիւնները ի սպաս դնել անոր ծրագիրներու յաջողութեան համար, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ի յաջողութիւնը մեր բոլորին յաջողութիւնն է, հայութեան եւ Հայաստանին յաջողութիւնն է»:

Այնուհետեւ, իր խօսքը եզրափակելով, եղբ. Մկրտիչեան հաստատեց. «Այս միութիւնը չի ծերանար, քանի ունի ձեզի նման Հ.Մ.Ը.Մ-ականներ եւ համակիրներ»:

«Այս միութիւնը չի տկարանար, երբ ունի միշտ իրեն եկող կակուղ գայլիկներ եւ կրտսեր մարզիկ-մարզիկուհիներ»:

«Այս միութիւնը կը քալէ ժամանակին հետ, ժամանակին համար, միշտ ինքզինք կատարելագործելով եւ աւելի լաւին ու լաւագոյնին ձգտելով»:

«Բարձրացիր-բարձրացուրը կը մնայ այս միութեան նուիրական նշանաբանը, որուն շնորհիւ ան կը բարձրանայ յաջողութենէ յաջողութիւն, տեղական ու շրջանային մարկարդակէ համահայկական ու համաշխարհային մակարդակ, իր հետ բարձրացնելով նաեւ իր անդամներն ու համակիրները»:

«Այս միութիւնը «Միշտ պատրաստ» կ'ըսէ իր դէմ ցցուած մարտահրաւէրներուն եւ զանոնք կը դիմագրաւէ ամենայն քաջութեամբ եւ հպարտութեամբ»:

«Վերջապէս, այս միութիւնը հաւատարիմ կը մնայ իր հիմնադիրներու տեսլականին եւ իր սրբութիւն սրբոցը կը նկատէ ազատ, անկախ, միացեալ եւ հզօր Հայաստանի մը կերտումը»:

Կեդրոնական Վարչութեան ատենապետին խօսքին յաջոր-

դեց ժողովրդային խրախճանքը, որ տեւեց մինչեւ երեկոյեան ուշ ժամեր:

Յաջորդ օր, 12 Յունիսին, Պատարագէն անմիջապէս ետք, եղբ. Մկրտիչեան հանդիպեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Փլովտիվի վարչութեան անդամներուն հետ: Վարչութիւնը կը հաշուէ 5 անդամ՝ ատենապետ եղբ. Յակոբ Կիւրեղեան, քարտուղար քոյր Իսկուհի Գուլումեան, գանձապահ եղբ. Սիմոն Թիւթէլեան, գոյքապահ եղբ. Յովակիմ Քէլէշեան, խորհրդական եղբ. Սարգիս Գարակէօզեան: Շրջանի սկսուածներուն թիւը 20 է (5 գայլիկ եւ 15 արի-արենոյշ եւ երէց): Մասնաճիւղը կը կիրարկէ ֆութպոլ եւ ճատրակ:

Փլովտիվի հայութեան թիւը կը հասնի 5000-6000-ի: Շրջանին մէջ կը գործեն ՀՕՄ-ը, Երեւան Մշակութային Միութիւնը, Համազգայինը եւ Հ.Յ.Դ.ն:

ՍՈՖԻԱ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետին Պուլկարիոյ մասնաճիւղեր այցելութիւններու շարքին եզրափակումը կատարուեցաւ Սոֆիայով: 13 Յունիսին, Սոֆիա հասնելով, եղբ. Մկրտիչեան հարցազրոյց մը ունեցաւ «Երեւան» շաբաթաթերթի խմբագրութեան հետ: Ապա, Հայ Դատի յանձնախումբի ատենապետուհի Վարդանոյշ Թոփաքաչեանի հետ տեսակցութիւն մը ունենալէ ետք, ան հանդիպեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն վարչութեան:



Հ.Մ.Ը.Մ-ի Սոֆիայի մասնաճիւղի սկսուածներուն թիւը 20 է (5 գայլիկ, 10 արի-արենոյշ եւ 5 երէց): Մասնաճիւղը կը կիրարկէ թենիս, փինկ-փոնկ եւ ճատրակ:

Սոֆիայի հայութիւնը այսօր կը հաշուէ 1500-2000 հոգի: Շրջանին մէջ կը գործեն ՀՕՄ-ը, Երեւան Մշակութային Միութիւնը, ՀԲԸՄ-ը, Հայ Դատը եւ Հ.Յ.Դ.ն: Մասնաճիւղին ատենապետն է Ժրաջան Հ.Մ.Ը.Մ-ական քոյր Տիրուհի Պարտիզպանեան, քարտուղարն է եղբ. Կարօ Մարտիրոսեան, խորհրդականներ՝ քոյր Ռիթա Քէրպիճեան, եղբայրներ Գօգօ Քունչէֆ եւ Գարէն Զատիկեան:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԷԶՄԻԱԾԻՆԻ «ՎԱԶԷ ՌՈՍՏՈՄԵԱՆ» ՄԻԱԲՈՐԻ «ԳՕԳՕ ԵՒ ԱՐՄԻՆԷ ՊԱՂԵԱՆ» ՎԵՐԱՆՈՐՈԳԵԱԿ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԻ ԲԱՅՈՒՄ

Կիրակի, 3 Յուլիսին, էջմիածնի Գրիբոյետով համայնքին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի «Վաչէ» միաւորի «Գօգօ եւ Արմինէ Պաղեան» գրասենեակին բացման հանդիսաւոր արարողութիւնը:

Բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան գրասենեակի վերանորոգման աշխատանքներու հովանաւոր, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պաղեան եւ տիկինը՝ Արմինէ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Օշին Փիրումեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան եւ խմբապետական խորհուրդի անդամներ, համայնքի ղեկավարն ու բնակիչները, ինչպէս նաեւ՝ Սփիւռքէն հիւրեր:

Բացման հանդիսութիւնը սկսաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի նորակազմ շեփորախումբին անդրանիկ ելոյթով: Շեփորախումբին ուղեկցութեամբ հիւրերն ու սկաուտները նախ այցելեցին միաւորի զոհուած ազատամարտիկ Վաչէ Ռոստոմեանի շիրիմը՝ յարգելու համար անոր յիշատակը: Ռոստոմեան զոհուած է Արցախեան պայքարի սկզբնական տարիներուն, 1992 թուականին:

Այնուհետեւ, ներկաները ուղղուեցան վերանորոգեալ գրասենեակ, ուր տեղի ունեցաւ բացման պաշտօնական արարողութիւնը: Այս առիթով խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.-



Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ եղբ. Արթուր Խաչատրեան, բարերար եղբ. Գօգօ Պաղեան, միաւորի վարչութեան ատենապետ քոյր Շուշան Շուշանեան եւ համայնքի ղեկավար եղբ. Վահէ Գրիգորեան: Անոնք յոյս յայտնեցին,

որ վերանորոգեալ գրասենեակը կը ծառայէ ի նպաստ միաւորին զարգացման եւ համայնքին բարօրութեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ



29 Յունիսէն 3 Յուլիս 2016, Ռուսիոյ Մաժայսկի մարզի Սեմիոնովկա համայնքին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Մոսկուայի մասնաճիւղին սկաուտական առաջին բանակումը:

Բանակումին մասնակցեցան մոսկուաբնակ 16 տղաք ու աղջիկներ, նաեւ՝ Մոսկուայի «Մոնթէ» մարզական ակումբէն 6 երիտասարդներ:



ՀԱՅ-ԴԱՆԻԱԿԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՄ

Թղթակից
ԵՐԵՒԱՆ



անիոյ ազգային սկաուտական կազմակերպութեան հետ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի մշակած գործակցութեան ծիրէն ներս, պատասխանատու երկու սկաուտներ մասնակցեցան Փորթ Արթիւր բանակավայրին մէջ կազմակերպուած «Գործունէութիւններու պատասխանատու կազմի փոխանակման ծրագիր»ին:



Թիւնը արդէն ունի որոշ անցեալ: Մարտին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-էն եօթը սկաուտներ մասնակցեցան «Train the trainers» սեմինարին, որ տեղի ունեցաւ Դանիոյ Լիոնգու քաղաքը:

Աւելի ուշ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-էն երեք այլ աստիճանաւորներ մասնակցեցան սկաուտական աստիճանաւորական այլ սեմինարի մը, որ դարձեալ տեղի ունեցաւ Դանիոյ մէջ:

Ծրագիրը կը նպատակադրէր սկաուտներուն գլխաւորաբար ծանօթացնել վերամշակման ու բնապահպանման աշխատանքներ, ինչպէս նաեւ՝ սկաուտական հնարամտութեան տարբեր ձեւեր: Այս առիթով իրագործուեցաւ «Ծովահէններու օր»ը, որ մեծ հետաքրքրութիւն ստեղծեց մասնակիցներուն մօտ:

Հարկ է նշել, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի սկաուտները օր մը իրենք ստանձնեցին բանակավայրի խոհանոցին պատասխանատուութիւնը եւ հայկական համեղ ուտեստեղէնով պատուեցին դանիացի սկաուտները:

Յայտնենք, որ հայ-դանիական սկաուտական գործակցու-

Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀՐԶԱՆԻ 70-ՐԴ ՀՐԶԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Թղթակից
ԱԹԵՆՔ



աբաթ, 4 Յունիսի յետմիջօրէին եւ Կիրակի, 5 Յունիսի ամբողջ օրը, Գոթինիոյ «Զաւարեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի շրջանի 70-րդ Շրջանային ժողովը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի:



Իրենց պաշտօնավարութեան շրջանը աւարտած Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամներուն կողքին, ժողովին կը մասնակցէին

Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի, Գոթինիոյ եւ Սելանիկի (որուն մասնակցութիւնը նորութիւն էր եւ արժանացաւ ժողովի գնահատանքին) երեք մասնաճիւղներն ու Սկաուտ. Խորհուրդները ներ-

կայացնող Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ:



Ժողովը ընթացակալիս օրակարգ ունենալով Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի ներքին կազմակերպական կեանքին վերաշխուժացումը եւ, այդ ճամբով, յունահայ նորահաս սերունդին հայեցի կազմաւորման ու դաստիարակութեան գործը: Քննարկուեցաւ նախորդ տարեշրջանի ընդհանուր գործունէութիւնը եւ արժեւորուեցաւ իբրեւ «Գնահատելի»:

Այլ հարցերու կողքին քննուեցաւ մարզական խումբերու միացման հարցը, տնտեսական հաւասարակշռուած պատկեր մը ունենալու հեռանկարով: Արժարժուեցաւ նաեւ սկսուողական խումբին պաշտօնական գրանցումը Յունաստանի Ազգային Սկսուողական Համակարգին (ՍԵՓ), պահպանելով իր ինքնութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներն ու արժէքները:

Ժողովի աշխատանքներու աւարտին, ընտրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի հնգանդամ նոր Շրջանային Վարչութիւն՝ հետեւեալ կազմով.- Քոյր Գոհար Ալեանաքեան-Տանկուրեան, եղբայրներ Խաչիկ Մինասեան, Սերգօ Աղապատեան, Կարպիս Ճանիկեան եւ Ազարիկ Եորդանճեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԹԵՆՔԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԼՈՂԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Թղթակից ԱՅԹՆՔ



Տարիներու աւանդութիւնը շա-

րունակուեցաւ այս տարի եւս, երբ միութեանական տարեշրջանի աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Աթենքի մասնաճիւղի բոլոր մարզիկները անխտիր մասնակցեցան լողի մրցումներու:

Մրցումները տեղի ունեցան Կիրակի, 29 Մայիսի առաւօտեան ժամերուն, Նէա Ջմիռնիի փակ լողաւազանին մէջ, ներկայութեամբ մեծ թիւով ծնողներու եւ մարզասէր հասարակութեան: Խանդավառ մթնոլորտի մէջ մրցեցան 150 մարզիկներ, որոնք իրենց մրցումին աւարտին ստացան համապատասխան մրցանակներ եւ վկայագիրներ:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ 20-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԲԱՆԱԿՈՒՄԸ ԿԸ ՀԱՄԱԽՄԲԷ ՀՈՒԱՆՏԱՅԻ ԵՒ ԳԵՐՄԱՆԻՈՅ 4 ՄԱՍՆԱԾԻՂԵՐԷՆ 66 ԲԱՆԱԿՈՂՆԵՐ

Թղթակից
ԱԼՄԵԼՈ

Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի մասնաճիւղի, 20-ամեակին նուիրուած բանակումը տեղի ունեցաւ Հոլանտայի Տելտըն քաղաքի սկաուտական բանակավայրին մէջ, մասնակցութեամբ 66 սկաուտներու, որոնք կը ներկայացնէին Ալմելոյի (50 սկաուտ), Ալքմարի (6 սկաուտ), Առնհեմի (1 սկաուտ) եւ Գերմանիոյ Միլնիխի (9 սկաուտ) շրջանները: Բանակումին մասնակցեցաւ նաեւ Երուսաղէմի շրջանէն եղբ. Ռուբէն Նալպանտեան:

Հնգօրեայ բանակումին առաջին օրը, մասնակիցները լարեցին իրենց վրանները եւ յարգարեցին բանակավայրը: Երկրորդ օրը կիրարկուեցաւ բանակումին ընթացիկ յայտագիրը. առաւօտեան մարզանք, վրաններու քննութիւն,

դրօշակի արարողութիւն, սկաուտական յայտագիրներ եւ երեկոյեան խորուհանդէս:

Երրորդ օրը բանակողներուն միացան Միլնիխի սկաուտները: Օրը յատկացուած էր Արցախին եւ բնաբան

ընտրուած էր «Արցախը մերն է»: Այս առիթով բանակողներուն դասախօսեցին Հ.Մ.Ը.Մ.ի Առնհեմի մասնաճիւղէն եղբ. Բաֆֆի Փոլոյեան («Արցախի պատմականը») եւ Հ.Յ.Դ. «Գարեգին Նժդեհ» երիտասարդական միութենէն Նուպար



Վարդանեան («Արցախի քառօրեայ պատերազմը»): Այլ դասախօսութիւն մըն ալ ներկայացուց եղբ. Յարութիւն Պօղոսեան՝ «Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելոյի մասնաճիւղին հիմնադրութիւնը» նիւթով:

Բանակումին ընթացքին բանակավայր այցելեց եւ սկստներուն հետ հանդիպում մը ունեցաւ Հոլանտայի հայ առաքելական եկեղեցւոյ Առաջնորդ Առէն Վրդ. Շահինեան:

Օգտակար եղաւ նաեւ սկստական օժանդակ յանձնախումբին ներկայու-

թիւնը: Յանձնախումբը ստանձնեց բանակումին կազմակերպչական հիմնական աշխատանքները:

Չորրորդ օրը, սկստական ամէնօրեայ յայտագիրէն ետք, բանակողները արշաւ մը կատարեցին Տելտըն քաղաքի անտառներուն մէջ, ուր տարուան մը ընթացքին իրենց սորված տեսական գիտելիքները կիրարկեցին գործնապէս:

Բանակումին վերջին օրը յատկացուցաւ մասնաճիւղին հիմնադրութեան 20-ամեակին, Արցախին եւ «Մայրերու

օր»ուն: Տեղի ունեցաւ խարուկահանդէս, որուն ներկայ գտնուեցան մեծ թիւով սկստներու ընտանիքներ, հարազատներ եւ հիւրեր:

Բանակումը իր աւարտին հասաւ «Յտեսութիւն» երգով: Սկստները ուխտեցին ծառայել Հ.Մ.Ը.Մ-ի վեհ սկզբունքներուն եւ մինչեւ յաջորդ բանակում գործել ամենայն պարտաճանաչութեամբ եւ հետեւողականութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ԱՇԽՈՅԺ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՄԲ ԵՌԱՄՍԵԱՆ

Թղթակից
ԱԼՄԵԼՈ

Ապրիլ-Յունիս ամիսները գործունէութեամբ աշխոյժ հանգրուան մը եղան Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելոյի մասնաճիւղին համար: Արդարեւ՝

◆ **8 Ապրիլին**, մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ Արցախի քառօրեայ պատերազմին դէմ բողոքի ցոյցին: Հ.Մ.Ը.Մ-ականներ, այլ ցուցարարներու հետ, պարզեցին պաստառներ եւ գոչեցին «Ե՛ս եմ Արցախը», «Մե՛նք ենք Արցախը»:

Շաբաթ մը ետք, մասնաճիւղը Հոլանտայի ՀԲԸՄ-ին հետ գործակցաբար, իր մասնակցութիւնը բերաւ Ալմելոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կողմէ կազմակերպուած Արցախի ի նպաստ դրամահաւաքին:



◆ **23 Ապրիլին**, մասնաճիւղին անդամները եւ սկստական կազմը մասնակցեցան Եղեռնի 101-ամեակին առիթով, հոլանտահայ համագործակցող կազմակերպութիւններու բողոքի ցոյցին՝ Ամսթերտամի մէջ: Յոյցը առաջնորդեցին մասնաճիւղին թմրեկահարները:

Հայաստանի, Արցախի, Հոլանտայի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Հ.Յ.Դ-ի դրօշներուն առաջնորդութեամբ ցոյցին մասնակցեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Առնհեմի մասնաճիւղին սկստները:

Նոյն օրը, մասնաճիւղը մասնակցեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շրջափակին մէջ, «Արամ Մանուկեան» կոմիտէին կազմակերպած մոմավառութեան՝ ի յիշատակ 1915-ի անմեղ զոհերուն:

◆ **4 Մայիսին**, մասնաճիւղին ներկայացուցիչները, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ներկայացուցիչներուն





Կեղերունին մէջ կատարեց քարաթէի խաղի ծանօթացում մը, Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտներուն ծանօթացնելով այս խաղին նպատակն ու առաւելութիւնները:

◆19 **Յունիսիճ**, մասնաճիւղին տիկնանց յանձնախումբը

հետ, այցելեցին երկրորդ համաշխարհային պատերազմի զոհերու Ալմելոյի յուշարձանը եւ սկաուտական թափօրով մը իրենց յարգանքը մատուցանեցին զոհերու յիշատակին:


◆13-14 **Մայիսիճ**, մասնաճիւղին մարզական յանձնախումբը կազմակերպեց փինկ-փոնկի երկօրեայ մրցաշարք մը, որուն մասնակցեցան 12 մարզիկներ: Մրցաշարքին առաջնութեան տիրացաւ եղբ. Գէորգ Թոքեան: Երկրորդ հանդիսացաւ եղբ. Արարատ Օհանեան:

◆27 **Մայիսիճ**, մասնաճիւղին ընկերային յանձնախումբը կազմակերպեց պինկոյի երեկոյ մը:

◆12 **Յունիսիճ**, եղբ. Սամօ Կարապետեան մասնաճիւղին

կազմակերպեց «Հայերու օր», որուն ներկայ գտնուեցան Հոլանտայի հայ առաքելական եկեղեցւոյ Առաջնորդ Առէն Վրդ. Շահինեան, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մաշտոց Քհնյ. Պաղտասարեան, նոյն եկեղեցւոյ վարչութեան նախագահ պրն. Քիլէճի, եկեղեցւոյ յանձնախումբի անդամներ, Հայաստանի ՀՀ պատկերասփիւռի կայանի երիտասարդ ներկայացուցիչներ եւ այլ հիւրեր:

◆26 **Յունիսիճ**, ՀԲԸՄ-ի հետ գործակցաբար, մասնաճիւղը շրջանի Գալուստ Կիւլպէնկեան սրահին մէջ կազմակերպեց հանդիպման ձեռնարկ մը՝ երգիչներ Սիպիլի եւ Անտորէի հետ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

Reservations

www.europehotel.am



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ 26-ՐԴ ԽԱՂԵՐԸ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ԻՐԱԳՈՐԾՈՒԵՑԱՆ ՇԻՔԱԿՈՅԻ Մէջ



Թղթակից ՇԻՔԱԿՈ

ՀՄԸՄԻ Արեւելեան Մ. Նահանգներու Նաւասարդեան 26-րդ խաղերը տեղի ունեցան Շիքակոյի մէջ, 1-4 Յուլիս 2016-ին, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն Շրջանային Վարչութեան, հովանաւորութեամբ Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չորոյեանի, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի կապ եղբ. Հրաչ Մեսրոպեանի եւ հիւրընկալութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Շիքակոյի մասնաճիւղին:

Չորսօրեայ խաղերուն ընթացքին, դաշտերու վրայ, պանդոկի միջանցքներուն եւ ամէն տեղ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը հանդիպեցաւ իր հարազատներուն, որոնք ժամանած էին Արեւելեան Մ. Նահանգներու տասը մասնաճիւղերէն. - Ալպընի, Ճլորիտա, Նիւ Եորք, Նիւ ձրըզի, Ուաշինկթըն, Պոսթըն, Տիթթորոյթ, Փրովիտընս, Ֆիլատելֆիա եւ հիւրընկալ Շիքակո: Գանատայէն խաղե-

րուն մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղը:

Խաղերը տեղի ունեցան «Ուիթլըն Աքատիմի» եւ «Փրայըրի Սթոն» մարզական համալիրներուն մէջ, իսկ ձեռնարկները եւ տողանցքը կատարուեցան «Ուեսթին Շիքակո» պանդոկին մէջ:

Յունիս 30-ին, բոլոր մարզիկները, սկաուտները եւ համակիրները, խումբ առ խումբ ժամանեցին Շիքակո, ուր տեղի ունեցաւ մասնաճիւղերու պատասխանատուներու կարճ ժողով մը, ներ-

կայացնելու համար Նաւասարդեան խաղերուն յայտագիրը, օրէնքները եւ կարգապահական պայմանները:

Նաւասարդեան խաղերը տեղի ունեցան ծիլ, փոքր, կրտսեր, երէց եւ վեթեւան մարզիկ-մարզիկուհիներու դասակարգերով: Ծնողներ ու բարեկամներ ոգեւորիչ խանդավառութեամբ մը կը շրջէին դաշտէ դաշտ, քաջալերելով իրենց մարզիկները, որպէսզի նորանոր յաղթանակներ արձանագրեն իրենց մասնաճիւղերուն համար, առանց անդ-





րադառնալու թէ Հ.Մ.Ը.Մ-ին իրենց անդամակցութիւնը ինքնին ամենամեծ յաղթանակն է հայեցի դիմագիծի պահպանման մեր ճիգերուն մէջ:

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Կիրակի, 3 Յուլիսի երեկոյեան տեղի ունեցաւ Նաւասարդեան յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը: Պաշտօնական բաժինը բացուեցաւ պատուոյ հիւրերու մուտքով: Ներկայ էին մօտ երեք հարիւր Հ.Մ.Ը.Մ-ականներ եւ համակիրներ, որոնք ապրեցան յիշատակելի երեկոյ մը Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին հետ: Պատուոյ սեղանին վրայ ներկայ էին Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չուրոյեան, Շիքակոյի Ամենայն Սրբոց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Ղեւոնդ Ծ. Վրդ. Բեն-

դէգեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Արեւելեան շրջանի կապ եղբ. Հրաչ Մեսրոպեան, Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Վազգէն Այվազեան, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաշեան, Հ.Մ.Ը.Մ-ի Շիքակոյի մասնաճիւղի ատենապետ եղբ. Վարուժ Գուգուզեան եւ խաղերու կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Մայք Տէմիրճեան:

Պատուոյ հիւրերու շարքին էին նաեւ ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Սիլվա Սաղըրեան, ՀՅԴ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Քնար Չարշաֆլեան, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան անդամներ՝ քոյր Էլիզապէթ Դրամկոչեան, եղբայրներ Ռազմիկ Փանոսեան, Վիգէն Խաչատուրեան, Յովսէփ Մինասեան, Արա Իշ-

խանեան, Շրջանային մարզական յանձնախումբի անդամ եղբայրներ Փօլ Գուգուզեան, Յակոբ Սուլաքեան, Տիգրան Աստուրեան եւ Քրիս Գրիգորեան:

Հանդիսութեան պաշտօնական բացումը կատարուեցաւ քայլերգներու կատարողութեամբ:

Սրբազան Հօր սեղանի օրհնութենէն եւ ճաշէն ետք, օրուան պատշաճ յայտագիրը բացուած յայտարարուեցաւ:

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏԻ ԵՒ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԵՐ

Նաւասարդեան խաղերու կազմակերպիչ յանձնախումբի անունով եղբ. Մայք Տէմիրճեան երեկոն բացաւ բարի գալուստ մաղթելով բոլոր ներկաներուն: Ան շնորհակալութիւն յայտնեց խաղերու յաջողութեան նպաստած Հ.Մ.Ը.Մ-ի Շիքակոյի մասնաճիւղի վարչութեան եւ բոլոր անդամներուն,



համակիրներուն եւ ուղեկից կազմակերպութիւններուն:

Ապա, ան հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի Շիքակոյի մասնաճիւղի ատենապետ եղբ. Վարուժ Գուգուզեանը, որ հակիրճ խօսքով մը շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչ յանձնախումբին, ենթալայնախումբերուն եւ բոլոր համակիրներուն, որոնց տքնաջան աշխատանքին շնորհիւ Նաւասարդեան խաղերը ընթացան մեծ յաջողութեամբ:

Հ.Մ.Ը.Մ-Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաշեան, իր կարգին, բարի գալուստ մաղթեց ներկաներուն: Ան շնորհակալութիւն յայտնեց Շրջանային մարզական յանձնախումբին, Շիքակոյի մասնաճիւղի վարչութեան, կազմակերպիչ յանձնախումբին, ենթալայնախումբերուն եւ բոլոր անդամներուն, ընտանիքներուն եւ կազմակերպութիւններուն, որոնք ամիսներ շարունակ անսակարկ նուիրումով աշխատեցան խաղերու յաջողութեան համար: Եղբայր Վահէ շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը միշտ ալ յաղթական դուրս եկած է նման խաղերու ակարտին, որովհետեւ ֆուլթպոլի, վոլիպոլի, պասքեթպոլի կամ այլ մարզաձեւերու համախմբում մը չէ ան, այլ՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն մըն է, որ կը

ձգտի ազգային վսեմ նպատակներու, հետեւաբար այսօրուան յաղթանակը այդ նպատակին իրագործման աշխատանքներու յաղթանակն է, եւ որուն համար հայ ժողովուրդի յաղթանակն է:

Հ.Յ.Դ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԽՕՍՔԸ

Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէին կողմէ խօսք առաւ Վազգէն Այվազեան: Ան ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի հաստատաքայլ երթը շրջանին մէջ, նշելով թէ Արեւելեան Մ. Նա-

հանգներու Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէին կողմէ անգամ մը եւս ողջունելու Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան խաղերը, որոնք այս տարի կը բոլորեն իրենց 26-ամեակը:

Վազգէն Այվազեան իր խօսքը շարունակեց ըսելով. «Աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ ապրող հայորդիներու միջեւ մարմնակրթական այս միութիւնը իւրայատուկ կապ մըն է: Փաստը, այսօր հոս, Շիքակոյի մէջ, տեղւոյն մասնաճիւղի հովանիին տակ կը կատարենք մեր Նաւասարդեան մրը-





ցումները: Ահա այս երեւոյթին մէջ պէտք է փնտռել բարձրանալու եւ բարձրացնելու հրամակայականը եւ այդ ալ «Մի՛շտ պատրաստ» ըլլալու տրամաբանութեամբ»:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ եղբ. Հրաչ Մեսրոպեան իր խօսքին մէջ շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ականը պիտի շարունակէ գործել եւ անոր ընտանիքի բոլոր անդամներուն ու յատկապէս պատասխանատու մարմիններուն երկար եւ հետեւողական աշխատանքին, ճիգին ու քրտինքին արդիւնքն է այս մրցաշարքին կազմակերպումը:

Եղբայր Հրաչ իր պատգամին մէջ յայտնեց, որ դարձեալ եւ մի՛շտ պատնէշի վրայ է Հ.Մ.Ը.Մ.ը: Ի վերջոյ, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը իր հիմնադրութենէն ի վեր յամառօրէն կը պայքարի կերտելու համար տիպար ու մաքրամաքուր մարդը, հայը, մարզիկն ու սկաուտը: Ան շարունակեց իր խօսքը նշելով, թէ սրբնթաց թափով յեղաշրջուող նոր ժամանակներուն հետ ընթանալով, Հ.Մ.Ը.Մ.ականէն կը պահանջուի յաւելեալ գոհողութիւն եւ նուիրում: Բնականաբար, անփոփոխ պիտի մնայ յանձնառութեան ուժը: Կառչած իր «Բարձրացիր-բարձրա-

ցուր» նշանաբանին, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը պիտի շարունակէ սերունդներ պատրաստել եւ դաստիարակել, այդ ալ շնորհիւ ժողովուրդին՝ համակիրներուն տածած գուրգուրանքին եւ հետեւողական ու աննահանջ քաջալերանքին:

ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԽՕՍՔԸ

Վերջին խօսք առնողը եղաւ Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Զոլոյեան: Սրբազանը նախ շնորհաւորեց Նաւասարդեան 26-րդ խաղերուն յաջողութիւնը եւ իր խրա-

խուսիչ պատգամով դրուատեց 98 տարեկան երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ին: Ան իր խօսքը ուղղելով երիտասարդութեան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը հայ երիտասարդին կու տայ հայու ինքնութիւն, հաւատարմութիւն մեր ազգային արժէքներուն, ու փոքր տարիքէն անոր կը սորվեցնէ կարգ ու կանոն, յարգանք՝ օրէնքի նկատմամբ: Սրբազան հայրը աւելցուց, որ մեր պարտականութիւնն է յաջորդ տասնամեակներուն պայքարիլ անտարբերութեան դէմ, տէր կանգնիլ մեր ազգային ամբողջական իրաւունքներուն, օժանդակել Հ.Մ.Ը.Մ.ին ամէն ձեւով, մանաւանդ պահելով մեր գաւակները անոր խրոխտ շարքերուն մէջ, որպէսզի անոնք դառնան արժանաւոր պաշտպանները մեր կրօնքին, մշակոյթին ու հայրենիքին: Ան յիշեցուց, որ զանազան կազմակերպութիւններ եկած ու գացած են, բայց Հ.Մ.Ը.Մ.ը մնացած է միշտ երիտասարդ:

ԽԱՆԴԱՎԱՌ ՄԹՆՈԼՈՐՏԸ

Յայտագիրի պաշտօնական բաժինի աւարտին, Գանատայէն ժամանած երգիչ Գէորգ Արթինեանի եւ իր նուագախումբին ճոխ երգերով ու պարերով ներկաները խանդավառ պահեր ապրեցան մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր:

Խանդավառ մթնոլորտի դադարին տեղի ունեցաւ խմբային խաղերու ախոյեան խումբերու բաժակատուչութիւնը (բաժակակիրներու ցանկը տեսնել առանձին):

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Զորսօրեայ խաղերէ ետք, 4 Յուլիսի առաւօտեան, «Ուեսթին Շիքակօ» պանդոկին մէջ տեղի ունեցաւ Նաւասարդեան 26-րդ խաղերուն փակման հանդիսութիւնը:

Փակման հանդիսութեան հանդիսավարն էր եղբ. Գօգօ Փափագեան: Ան ներկայացուց օրուան պատուոյ հիւրերը՝ Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Զոլոյեան, Շիքակոյի Ամենայն Սրբոց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Ղեւոնդ Ծ. Վրդ. Բենդէգեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վար-

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 26-ՐԴ ԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՌՈՐՈՒՄԸ

Մասնաճիւղ	Կէտ
1. Շիքակօ	63
2. Պոսթըն	30
3. Ուաշինկթըն	26
4. Նիւ ճըրզի	16
5. Նիւ Եորք	14
6. Փրովիտընս	10
7. Թորոնթօ	7
8. Տիթթոյթ	6
9. Ֆիլատելֆիա	4

չուլթեան անդամ եւ Արեւելեան շրջանի կապ եղբ. Հրաչ Մեսրոպեան, Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Վազգէն Այվազեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաչեան, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Սիլվա Սաղըրեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Շիքակոյի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Վարուժ Գուգուզեան:

Փակման հանդիսութեան նախ մուտք գործեցին պատուոյ հիւրերը: Դրօշակակիրներու եւ շրջանի խմբապետներու առաջնորդութեամբ տողանցեցին արի եւ արենոյններու, արծուիկներու եւ գայլիկներու խումբերը եւ յաջորդաբար՝ մասնակից մասնաճիւղերու մարզիկները:

ԽՕՄՔԵՐԸ

Խումբերու մուտքէն ետք, փակման հանդիսութեան պաշտօնական բացումը կատարուեցաւ քայլերգներու կատարողութեամբ, ապա յաջորդաբար խօսքեր արտասանեցին Շիքակոյի մասնաճիւղի ատենապետ եղբ. Վարուժ Գուգուզեան, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Սիլվա Սաղըրեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաչեան, Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Վազգէն Այվազեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան:

Խօսք առնողները բարձր գնահատեցին Հ.Մ.Ս.Ը.ի ազգանուէր գործունէութիւնը եւ իրենց շնորհակալութիւնները փոխանցեցին մարզիկներուն եւ պատասխանատուներուն, որոնք փայլուն նոր էջ մը արձանագրեցին Յոլիվուդի առաջին շաբաթավերջին, Հ.Մ.Ը.Մ.ականավայել իրենց կեցուածքով: Անոնք նշեցին, որ Հ.Մ.Ը.Մ.ականի տիպարը հայրենասէր հայու ոգիով հայորդի մըն է, որ միշտ կը բարձրանայ եւ կը բարձրացնէ հայու պատիւն ու կորովը, եւ այդ մէկը թէ՛ մարզադաշտի եւ թէ՛ անձնական կեանքի բնագաւառներէն ներս:

Վերջին խօսք առնողը եղաւ Առաջնորդ Սրբազանը, որ իր խրատները պատգամով օրուան խանդավառու-



ԽՄԲԱՅԻՆ ԽԱՂԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԵՐԸ ԳՐԱԿԱԾ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐԸ

Խաղաձեւ	Առաջին	Երկրորդ
Պասքեթպոլ ծիլ տղաք-	Շիքակո	Նիւ ճըրզի
Պասքեթպոլ փոքր տղաք-	Թորոնթօ	Շիքակո
Պասքեթպոլ կրտսեր տղաք-	Նիւ Եորք	Շիքակո
Պասքեթպոլ երէց տղաք-	Նիւ Եորք	Պոսթըն
Պասքեթպոլ երէց աղջիկներ-	Պոսթըն	Շիքակո
Վոլիպոլ երէց տղաք-	Ուաշինկթըն	Փրովիտընս
Վոլիպոլ երէց աղջիկներ-	Նիւ ճըրզի	Շիքակո
Ֆութպոլ փոքր տղաք-	Շիքակո	Ուաշինկթըն
Ֆութպոլ երէց տղաք-	Պոսթըն	Շիքակո
Պասքեթպոլ վեթերաններ*	Պոսթըն	Շիքակո

* Այս մարզաձեւը կը կրէր բարեկամական բնոյթ եւ տեղ չգրաւեց ընդհանուր դասաւորման մէջ:

ՆԱԿԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒ ԱՌՈՅԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐԸ

- Պասքեթպոլ ծիլ տղաք- Շիքակո
- Պասքեթպոլ փոքր տղաք- Թորոնթօ
- Պասքեթպոլ կրտսեր տղաք- Նիւ Եորք
- Պասքեթպոլ երէց տղաք- Նիւ Եորք
- Պասքեթպոլ երէց աղջիկներ- Պոսթըն
- Վոլիպոլ երէց տղաք- Ուաշինկթըն
- Վոլիպոլ երէց աղջիկներ- Նիւ ճըրզի
- Ֆութպոլ փոքր տղաք- Շիքակո
- Ֆութպոլ երէց տղաք- Պոսթըն



Թիւնը հասցուց իր գագաթնակէտին: Ան իր դէմքը դարձնելով երիտասարդ մարզիկներուն, որոնք Մ. Նահանգներու եւ Գանատայի ակներուն ծնած են եւ Հ.Մ.Ը.Մ.ի շուքին ներքեւ կը մեծնան, վստահեցուց, որ անոնք կը պատկանին հայ ցեղին ու հայ եկեղեցիին, թէ անոնք ունին Հայաստանը իբրեւ հայրենիք ու հայերէնը իբրեւ մայրենի լեզու: «Զեր ինքնութիւնը ծնողներէն տրուած շնորհք մը է միայն,- ակեցուց Սրբազանը,- այլ պարտաւորութիւն մը ձեր անձը, ձեր եղբայրն ու քոյրը յարգելու, ձեր եկեղեցին, լեզուն, մայր հայրենիքն ու ձեր ծննդավայրը սիրելու, ու արժեւորելու դուք ձեզ: Սրբազան Հայրը խօսքը եզրափակեց խօսքը ուղղելով երիտասարդութեան եւ ըսելով. «Արարատը ձեզի՛ կը սպասէ: Քալեցէ՛ք դէպի յաղթանակ, դուք էք մեր զրկուած հողին տէրը, քալեցէ՛ք միշտ առաջ»:



**ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ
ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐԸ**

Փակման հանդիսութեան ակարտին տեղի ունեցաւ բաժակներու եւ յուշատախտակներու բաշխում խաղերուն մասնակից բոլոր մասնաճիւղերուն:

Յայտնենք, որ լողի մրցումներուն առաջին դիրքը միասնաբար գրաւեցին Ուաշինկթընի եւ Տիթրոյթի մասնաճիւղերը: Շիքակոյի մասնաճիւղը ստացաւ ակթիւթիգմի առաջին դիրքի բաժակը:

Ընդհանուր դասաւորման առաջին դիրքի բաժակը յանձնուեցաւ Շիքակոյի մասնաճիւղին՝ բոլոր մարզախաղերու մէջ առաւելագոյն թիւով կէտեր հաւաքած ըլլալուն համար:

Ֆիլատելֆիոյ մասնաճիւղին տրուեցաւ ամէնէն տիպար եւ լակազմակերպուած մասնաճիւղի բաժակը: Իսկ «Ամէնէն ակեցի բարելաւուած» մասնաճիւղի բաժակը ստացաւ Շիքակոյի մասնաճիւղը:

Այսպէս, Նաւասարդեան 26-րդ խաղերը հասան իրենց ակարտին, անգամ մը եւս Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակով: Այս խաղերով Արեւելեան Մ. Նահանգներու շրջանը յաւելեալ խթան ստացաւ: Խաղերուն մասնակցող Հ.Մ.Ը.Մ.ականները վերանորոգեցին իրենց ուխտը, յուսալով որ 2017-ի Նաւասարդեան խաղերը վերանորոգուած եռանդով տեղի կ'ունենան Փրովիտընսի մէջ:

with the complements of

Restaurant Al-Mayass



Հ.Մ.Ը.Մ.Ի ՓՐՈՎԻՏԸՆՍԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ 35-ԱՄԵԱԿԻ ՀՔԵՂ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՄ

Մակի Ն.

ՓՐՈՎԻՏԸՆՍ

Հ.Մ.Ը.Մ.Ի Փրովիտընսի մասնաճիւղի հիմնադրութեան 35-ամեակը մեծ շուքով տօնակատարուեցաւ ճաշկերոյթ-պարահանդէսով մը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 4 Յունիս 2016-ի երեկոյեան, Սուանգիի «Վինըս Տը Մայլօ» ճաշարանին մէջ, ներկայութեամբ Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի անդամ Լեոն Աթթարեանի, Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Խաչատուրեանի, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Թալին Մկրտիչեանի, Ս. Վարդանանց եկեղեցւոյ հովիւ Կոմիտաս Ա. Քհնյ. Պաղսարեանի, Գաբրիէլ Քհնյ. Նազարեանի, ինչպէս նաեւ եկեղեցւոյ եւ քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներու:

Մօտ 200 Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու ներկայութեան, երեկոն բաց-

ւեցաւ սկաուտներու եւ դրօշակակիրներու տողանցքով, որմէ ետք յաջորդաբար երգուեցան Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները՝ եղբ. Բաֆֆի Ռշտունիի եւ քոյր Մենար Դարբինեանի կողմէ: Քահանայ հօր բացման աղօթքէն ետք, վայրկեան մը յոտնկայս լուրթեամբ յարգուեցաւ յիշատակը մասնաճիւղին հանգուցեալ հիմնադիրներուն:

Օրուան հանդիսավարներն էին քոյր Սիրան Գրիգորեան եւ եղբ. Բաֆֆի Ռշտունի, Հ.Մ.Ը.Մ.ի նոր սերունդի ներկայացուցիչները, որոնք իրենց կարգին, այսօր, իբրեւ պատասխանատու-

ներ, կը պատրաստեն յաջորդ սերունդի սկաուտները: Անոնք ներկայացուցին պատուոյ հիւրերը, յրեւեար մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչները եւ 35-ամեակի յանձնախումբին անդամները, որոնք եղբ. Հրանդ Խաչատուրեանի ատենապետութեամբ մասնաճիւղին հիմնադրութեան տօնակատարութիւնները յաջողութեամբ պսակեցին ճոխ պարահանդէսով եւ յուշամատեան գրքոյկի մը հրատարակութեամբ:

Այս առթիւ, ճաշի սպասարկութենէն առաջ, ցուցադրուեցաւ Փրովիտընսի մասնաճիւղի նախկին անդամ եւ ըսկաուտ, քայլիֆորնիաբնակ եղբ. Յարութ Առաքելեանի կողմէ պատրաստուած սահիկներու հաւաքածոն, որ կենդանի պատկերն էր մասնաճիւղին իրագործած յաջողութեան, անցնող 35 տարիներու ընթացքին:

Փրովիտընսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Սարգիս Դարբինեան փոխանցեց մասնաճիւղին շնորհաւորական խօսքը, իր երախտագիտական զգացումները յայտնելով բոլոր հիմնադիրներուն, անցեա-






լի եւ ներկայի նուիրեալ անդամներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ-ի պատիւը միշտ բարձր կը պահեն: Ապա, ան յատուկ յուշատախտակներով պատուեց բոլոր այն վարչականները, որոնք մասնաճիւղէն ներս գանազան պաշտօններ վարած են երկար տարիներ: Առ այդ, իբրեւ գնահատանք տարիներու իրենց վարչական ծառայութեան, ան յուշատախտակներ յանձնեց եղբ. Համազասպ Ռշտունիի (8 տարի), քոյր Անահիտ Աթթարեանի (9 տարի, մասնաճիւղին առաջին եւ միակ ատենապետուհին), եղբ. Սարգիս Դարբինեանի (13 տարի), եղբ. Յարութ Թարագսեանի (15 տարի) եւ եղբ. Քրիստափոր Գրիգորեանի (18 տարի): Նոյն առիթով, մասնաճիւղի հիմնադիր անդամներուն տրուեցան գնահատական յուշատախտակներ՝ եղբ. Ռոստոմ Ծավահիրճեանի (1 տարի վարչական), եղբ. Սարգիս Եփրեմեանի (9 տարի վարչական), եղբ. Սարգիս Մինասեանի (10 տարի վարչական) եւ եղբ. Յակոբ Խաչատուրեանի (11 տարի վարչական):



Այնուհետեւ, խօսք առաւ Ս. Վարդանանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Կոմիտաս Ա. Քհնյ. Պաղսարեան, որ իր պատգամով գովքը հիւսեց Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրներուն, անդամներուն եւ համակիրներուն, որոնց 35 տարիներու տքնաջան աշխատանքին շնորհիւ, այսօր, Փրովիտընսի գաղուծը կը վայելէ սկառուտներու գործակցութիւնը գաղուծի բոլոր մարգերուն, ինչպէս նաեւ՝ եկեղեցւոյ խորանին վրայ: Ապա խօսք տրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի

Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Խաչատուրեանին որ շնորհաւորեց Փրովիտընսի մասնաճիւղը, որուն անդամներուն անսակարկ նուիրումին շնորհիւ 35 տարի առաջ հիմնադիրներու կողմէ ցանաւ հունտերը արդիւնաբեր դարձան: Այս առիթիւ, Շրջանային Վարչութեան կողմէ ան «Ծառայութեան» շքանշանով պատուեց մասնաճիւղի հիմնադիր չորս անդամները՝ եղբայրներ Ռոստոմ Ծավահիրճեանը, Սարգիս Եփրեմեանը, Սարգիս Մինասեանը եւ Յակոբ Խաչատուրեանը: Յայտագրի աւարտին, Ուաշինկթընէն ժամանած երգիչ Զարեհ Գասպարեան եւ իր նուագախումբը մինչեւ ուշ ժամեր ստեղծեցին խանդավառ մթնոլորտ: Երեկոն վերջ գտաւ յեղափոխական երգերու փունջով մը, բոլորը ոգեւորելով նոյն կորովով շարունակելու Հ.Մ.Ը.Մ-ի յաղթական ու պանծալի երթը:



Elegance Plus

Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



ՇԱՒԱՐՇ ՔՐԻՍՏԵԱՆԻ ԵՂԲՕՐԸ ԹՈՌԱՆ՝ ՏՈՔԹ. ՇԱՒԱՐՇ ՔՐԻՍՏԵԱՆԻ «ՄԱՐՄՆԱՄԱՐԶ» ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆԵՉՕՆԸ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

9 Յունիս 2016-ը յատկանշական երեկոյ մը եղաւ Հ.Մ.-Լ.Մ.-ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի պատմութեան մէջ: Այդ օր գինեծօնը կատարուեցաւ Հ.Մ.-Լ.Մ.-ի հիմնադիրներէն՝ նահատակ Շաւարշ Քրիսեանի յիշատակին նուիրուած «Մարմնամարզ» հատորին, որուն համադրուած կատարած է իր եղբօրը թողը՝ տղթ. Շաւարշ Քրիսեանը:

Հ.Մ.-Լ.Մ.-ի «Գէորգ Անտոնեան» սրահը բերնէ բերան լեցուն էր Հ.Մ.-Լ.Մ.-ասէրներով, համակիրներով եւ Հ.Մ.-Լ.Մ.-ականներով: Հոն էին Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Արտակ Քհնյ. Տէմիրճեան, Հ.Մ.-Լ.Մ.-ի կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան, մտաւորականներ, պոլսահայ միութեան, քոյր կազմակերպութիւններու եւ մամուլի ներկայացուցիչներ ու այլ հիւրեր:

Նախքան ձեռնարկին պաշտօնական յայտագիրին բացումը, ներկաները

վայրկեան մը յոտնկայս լռութեամբ յարգեցին յիշատակը Հ.Մ.-Լ.Մ.-ի հիմնադրութեան գլխաւոր մղիչ ուժը հանդիսացած նահատակ Շաւարշ Քրիսեանի, որուն նուիրուած էր երեկոն:

Ձեռնարկին բացումը կատարուեցաւ դրօշակի արարողութեամբ՝ շրջանի Հ.Մ.-Լ.Մ.-ի դրօշակակիրներու խումբին կողմէ, գլխաւորութեամբ Հ.Մ.-Լ.Մ.-ի «Սիփան» մասնաճիւղի խմբապետուհի քոյր Դալար Գալստեանի: Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.-Լ.Մ.-ի քայլերգները մեներգեց «Արարատ» մասնաճիւղի խմբապետուհի քոյր Իվանա Գրիգորեան:

Ձեռնարկին հանդիսավարութիւնը կատարեց Հ.Մ.-Լ.Մ.-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան անդամ քոյր Մարո Քէշիշեան, որ բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, ներկայացուց նահատակ Շաւարշ Քրիսեանի կեանքն ու գործունէութիւնը, որուն մասին շատ քիչ բան փոխանցուած է պատմութեան: Ան անդրադարձաւ Քրիսեան մարզիչի եւ մարմնամարզի ուսուցիչի յատկութիւններուն, Պոլսոյ արուարձաններուն մէջ

մարմնամարզական ակումբներ հիմնելու իր նախաձեռնութեան, 1911-ին՝ դժուարին պայմաններու մէջ «Մարմնամարզ» ամսաթերթի հրատարակութեան, հայկական առաջին ողիմպիականի կազմակերպման եւ հայ սկստութեան հիմնադրութեան մէջ իր ունեցած կարեւոր ներդրումին: Քոյրը ափսոսանք յայտնեց, որ Քրիսեան չկարողացաւ տեսնել իր երազին իրականացումը եւ Հայոց Յեղասպանութեան ընթացքին, հայ մտաւորականներու փաղանգին հետ, ինք եւս նահատակուեցաւ:

Այնուհետեւ, քոյր Մարի Քրիսեան արտասանեց վահան Թէքէեանի «Հաշուեյարդարը» բանաստեղծութիւնը: Ձեռնարկին ընթացքին, մէջ ընդ մէջ, ասմունքող Մարալ վարժապետեան պատառիկներ ընթերցեց Հ.Մ.-Լ.Մ.-ի ռահվիրայ Շաւարշ Քրիսեանի հրատարակութիւններէն՝ մեծապէս տպաւորելով ներկաները:

Ձեռնարկին գլխաւոր առանցքը հանդիսացող Շաւարշ Քրիսեանի յիշատակին նուիրուած հատորին ներկայացումը կատարեց մտաւորական, դասախօս, հայոց պատմութեան, գրականու-



Թեան եւ Հայոց Յեղասպանութեան կարեւոր նիւթերու հրատարակութեանց հեղինակ՝ դոկտ. Ռուբինա Փիրումեան:

«Հայ Դատի նուիրուած իր դասագիրքերէն կ'օգտուի նաեւ Հ.Մ.Ը.Մ.ը՝ ընդգրկելով անոր նիւթերը «Ազգային շքանշան»ի իր դասընթացներուն մէջ», ըսաւ քոյր Մարո Քէչիշեան՝ ներկայացրելով Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին եւ Հ.Հ. կրթութեան նախարարութեան «Ոսկէ Յուշամետալ»ին արժանացած դոկտ. Փիրումեանը:

Շնորհակալութիւն յայտնելով Հ.Մ.Ը.Մ.ի Երջանային Վարչութեան՝ իրեն վստահուած «Մարմնամարզ» հատորին ներկայացման համար, դոկտ. Փիրումեան առաջին հերթին տոքթ. Շաւարշ Քրիսեանի աշխատութիւնը նկատեց «արձագանգը իր նախնիների կրած տառապանքին, իր մեծ հօրեղբօր պատմութիւնը պատմելու աշխարհին, իբրեւ մէկ

չատ կարեւոր ապացոյց, նետելու համար թուրքի երեսին եւ նրա ժխտողական քաղաքականութեան դէմ»:

Ապա հաստատելով, թէ հայ ժողովուրդը, ցեղասպան թուրքին գործած Հայոց Յեղասպանութենէն շատ առաջ, աւելի՛ զարգացած էր եւ ունէր իր ազգային կառոյցը՝ կարեւոր գտաւ, որ հայերս հպարտանանք այդ իրականութեամբ, եւ այդ հպարտութեամբ մղւինք մեզ աւելի պայքարունակ դառնալու եւ աւելի վճռակա՛ն՝ ասպարէզ նետուելու: «Թուրքը գուցէ մի անգամ էլ մտածի մօտենալ ճշմարտութեան: Թող այս իրողութեամբ հաղորդուի այսօրուան թուրքը, էդ մտաւորական թուրքը, որ դաստիարակուել է հանրապետական թուրքիայի տուած՝ Հայոց Յեղասպանութիւնը ժխտող դաստիարակութեամբ: Գուցէ մի անգամ էլ մտածի մօտենալ ճշմարտութեան», ընդգծեց ան եւ ի սրտէ գնահատեց տոքթ. Շաւարշ

Քրիսեանի «Մարմնամարզ» հատորին հրատարակութիւնը:

Այնուհետեւ, անդրադառնալով հատորին ներածականին, ուր կարելի է բաւական տեղեկութիւններ ստանալ նահատակ Շաւարշ Քրիսեանի կեանքին եւ գործունէութեան մասին, Փիրումեան հատորին հրատարակութիւնը նկատեց «արտացոլքը տոքթ. Շաւարշ Քրիսեանի տեսութիւններին, դիտարկումներին՝ մարդու ֆիզիքական առողջութեան ուղղուած, ինչպէս նաեւ մարմնակրթութեան տեղի ու դերի մասին, թէ՛ անցեալում եւ թէ՛ այսօր»:

Հատորին առանձին բաժիններուն անդրադառնալով, դոկտ. Փիրումեան կարեւոր նկատեց զանոնք՝ ճանչնալու համար Շաւարշ Քրիսեան առաջնորդը, խմբագիրը, համակարգողը, դաստիարակը, կանանց յառաջադիմութեան դրօշակակիրը, վերապրողը եւ մարգիչը: Յունաստանէն եկած «Առողջ միտք,

առողջ մարմինի մէջ» հին ճշմարտութեան հաւատարմով՝ Շաւարշ Քրիսեան կարեւոր գտած է նաեւ կանանց ֆիզիքական կրթութիւնը: Անոնց մարմնակրթութեան իրավիճակին մասին Ա. Գլուխին տակ կը կարդանք «Կիները եւ մարմնամարզը» խորագիրը, ուր անցաւ կը յայտնէ, որ վարժարաններէն ներս մարմնամարզի գծով կեդրոնացումը մանչերուն վրայ եղած է եւ ոչ իգական սեռին:

Մարմնամարզի հայկականացումը, ինչպէս նաեւ 1 Մայիս 1911-ի հայկական առաջին ողիմպիականին կազմակերպումը Շաւարշ Քրիսեանին վերագրելով՝ դոկտ. Փիրումեան ընդգծեց, որ Շ. Քրիսեանի քաջալերանքով, միջազգային մակարդակի 2 հայ մարզիկներ մասնակցած են 1912-ի Սթոքհոլմի միջազգային ողիմպիականին՝ Վահրամ Փափագեան (վազք) եւ Մկրտիչ Մկրեան (սկաւառակ եւ նիզակ նետել):

Դոկտ. Փիրումեան ներկայացնելով Քրիսեանի մեծ ազդեցութիւնը ազգային հասարակական մեր կեանքին վրայ, հատորին գրախօսականը եզրակացուց՝ ըսելով. «Հայը աշխարհին ճանաչուեց որպէս զոհ, որպէս տառապած, հալածուած մի ժողովուրդ: Թող քաղաքակիրթ աշխարհը մեզ ճանաչի մեր նուաճումներով, դա լինի մարմնակրթական, ինչպէս Շաւարշ Քրիսեանն էր ձգտում, դա լինի գիտական, մշակութային, մարզական թէ՛ ռազմական աշխարհում: Վարձքդ կատար, տոքթ. Քրիսեան»:

Այս առթիւ, իր սրտի խօսքը փոխացնեց Կիւմրիի մանկավարժական համալսարանի մարմնամարզի դասախօս դոկտ. Միաքայէլ Պապոյեան, որ շնորհաւորելով ներկայացուած հատորին հրատարակութիւնը՝ բարձր գնահատեց նահատակ մտաւորական Շաւարշ Քրիսեանի կողմէ մարմնամարզի տարածումը, հայրենասէրի անոր արժանիքները եւ հայութեան իր ձգած ժառանգը:

Այնուհետեւ, բեմը յանձնուեցաւ հեղինակ տոքթ. Շաւարշ Քրիսեանին, որ համեստաբար ինքզինք ներկայացնելէ ետք՝ լայն բացատրութիւններ



տուաւ հօրմէն ժառանգած՝ իրեն անծանօթ մեծ հօրեղբօր «Մարմնամարզ» ամսաթերթի հաւաքածոյի պահպանման, անոր կարեւոր նիւթերը մէկ հատորի մէջ համադրելու նախաձեռնութեան եւ, մանաւանդ, այս կարեւոր աշխատանքին մղիչ ուժը հանդիսացած՝ Հայոց Յեղասպանութեան Թանգարանի տնօրէն Հայկ Դեմոյեանի «Հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում» անուն ուսումնասիրութեան: Այս հատորով, տոքթ.

Քրիսեան կը ներկայացնէր մեծն Շաւարշ Քրիսեանի աւանդը սերունդներուն փոխանցելու կարեւորութիւնը, որ միտքն ու մարմինը իբրեւ մէկ ամբողջութիւն նկատելով՝ զանոնք հաւասարապէս զարգացնելու կարեւորութիւնը կը շեշտէր, իբրեւ ազգի մը բարգաւաճման կարեւոր ազդակ:

Ապա, Հայոց Յեղասպանութեան արհաւիրքը ապրած մարդոց եւ մանաւանդ Ղարաքիլիսէի եւ Սարդարապատի յաղթական մարտերուն ակնարկելէ ետք, տոքթ. Քրիսեան Պոլսոյ մէջ 1918-ին Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութիւնը նկատեց հայ երիտասարդութեան առաջին բողոքը եւ բռունցքը՝ ընդդէմ թուրքին: «Հ.Մ.Ը.Մ-ը ստեղծուեցաւ աւելի կանուխ՝ քան արդարադատ այն ձեռքերը, որոնք զգետնեցին թուրք դահիճները: Հայ երիտասարդները, որոնք Շաւարշ Քրիսեանի շունչին տակ մեծցած տղաքէին, ինչպէս՝ Գրիգոր Յակոբեան, Քրիսեանի գործակից Յովհաննէս Հինդլեան, Հայկ Ճիգմէճեան, Տիգրան Խոյեան եւ Յակոբ Սիրունի հիմնեցին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ-ը, իրականացնելով Շաւարշ Քրիսեանի երազը», մատնանշեց տոքթ. Քրիսեան եւ անգամ մը եւս շեշտելով մարմնամարզի կարեւորութիւնը՝ համաշ-





խարհային ծանօթացման կարեւոր միջոց մը նկատեց զայն եւ կոչ ուղղեց ներկաներուն՝ մտածելու մարզանքի տարածման մասին: Ապա, համոզիչ օրինակներով ան իր մտերմիկ խօսքը եզրափակեց՝ շեշտելով, թէ «Սփորը այսօր ահաւոր մէկ ուժ է, որ ազգերուն, քաղաքներուն հպարտութեան առիթ կուտայ»:

Երկարաշունչ եւ հետաքրքրական այս զրոյցէն ետք, Քրեսենթա հովիտի թաղային խորհուրդի անդամ, Հ.Մ.Ը.Մ.ական Հրայր Լիոն, առ ի գնահատանք «Մարմնամարզ» հատորի հրատարակման, տոքթ. Շաւարշ Քրիսեանին յանձնեց երկու գնահատագիրներ. առաջինը՝ Լոս Անճելըս գաւառի Ծ-րդ շրջանի վերահսկիչ Մայքըլ Անթոնովիչի, իսկ երկրորդը՝ նահանգային ծերակուտական Քեւրն Տէ Լիոնի կողմէ:

Այնուհետեւ, իր օրհնութիւններն ու գնահատանքը փոխանցեց Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ գնա-

հատելով Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը նման գեղեցիկ երեկոյի մը կազմակերպման համար, իմաստալից եւ պատմական որակեց զայն, միաժամանակ շնորհակալութիւն յայտնեց դուրս. Փիրումեանին, որ ամբողջական եւ խնամուած ձեւով ներկայացուց հատորը:

Ապա ակնարկելով տոքթ. Շաւարշ Քրիսեանի աշխատանքին, Առաջնորդ սրբազանը յայտնեց. «Մենք ոչ միայն վայելեցինք, այլ ինչպէս որ ինք ապրեցաւ, մե՛զ ալ ապրեցուց տոքթ. Շաւարշ Քրիսեանը, որովհետեւ ձեւով մը կապանքներով շղթայուած մարմնամարզը, կապանքներէն քակելէ ետք, զայն իր կեանքին մէջ դարձուց ոչ միայն ապրումի, այլեւ գիրքի վերածեց, ազգային գիրքի, եւ ահա այսօր այնքան հարազատօրէն ներկայացուց մեզի»:

Ձեռնարկին վերջին բաժինով տեղի ունեցաւ հատորին գինեձօնը: Հերթաբար հատորը գինիով օճեցին տոքթ. եւ

տիկ. Շաւարշ եւ Մարի Քրիսեանները, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան, օրուան դասախօս դուրս. Ռուբինա Փիրումեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան եւ ուրիշներ: Այս գեղեցիկ արարողութեան հոգեւոր վկաները եղան Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Արտակ Քհնյ. Տէմիրճեան:


Ձեռնարկին աւարտէն ետք, ներկաները ստացան հրատարակուած հատորէն օրինակ մը՝ մակագրուած հեղինակին կողմէ:


Եզակի այս նախաձեռնութիւնը վերջ գտաւ ուշ երեկոյեան: Մասնակիցները գոհունակութեամբ մեկնեցան տուն՝ իրենց հետ տանելով Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան նախաքայլը առած նահատակ Շաւարշ Քրիսեանի նուիրուած հատորը եւ անոր ընդմէջէն՝ իրենց առողջութեան նպաստող արժէքաւոր գիտելիքներու ամբողջութիւն մը:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY  **Armavia**
Արմավիա



				
11, rue des Pyramides 75001 Paris tel 331 42 96 10 10 fax 331 42 96 18 77 saberatours@selectour.com	48, cours de la Liberté 69003 Lyon tel 334 78 60 13 66 fax 334 78 60 92 26 sevan@selectour.com	67, La Canebière 13001 Marseille tel 334 95 09 30 60 fax 334 95 09 30 61 marseille@wasteels.fr	32-38, rue Hanrabedoutian Yerevan tel 374 10 52 55 55 fax 374 10 56 40 30 sabera@arminco.com	

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ 41-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՆՍ

Նախասարդեան 41-րդ մարզախաղերուն առիթով կազմակերպուած հրապարակային ձեռնարկներուն առաջինը՝ Յաղթանակի պարահանդէսը, տեղի ունեցաւ Շաբաթ, 25 Յունիս 2016-ի երեկոյեան, «Եունիվըրսըլ Հիլթըն» պանդոկի շքեղ սրահին մէջ: Աւելի քան 500 Հ.Մ.Ը.Մ.ականներ ու համակիրներ փութացած էին սրահ, Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդութեան յաղթանակներուն հպարտանքը ապրելու, լայնածաւալ այս նախաձեռնութեան պատուոյ նախագահութիւնը ստանձնած Քալիֆորնիոյ Նահանգային խորհուրդի անդամ Խաչո Աշաճեանին եւ իր տիկնոջ՝ Արաքսիին հանդիպելու եւ իրենց յարգանքը մատուցելու 98-ամեայ այն կազմակերպութեան, որ կարողացաւ սերունդներ համախմբել իր շուրջ, վառ պահելով հայոց հին նախասարդեան ոգին ու անոր անշէջ հուրը:

Ձեռնարկը իրենց ներկայութեամբ պատուեցին թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանն ու հոգեւոր հովիւ Ռազմիկ Խաչատուրեանը, Լոս Անճելըսի մօտ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութեան ներկայացուցիչ Ռազմիկ Ստեփանեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Դաւթեան եւ Անդրանիկ Պահարեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տարօն Տէր Խաչատուրեան եւ Կեդրոնական Կոմիտէի Հ.Մ.Ը.Մ.ական անդամ Կարօ Իսբէնճեան, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան փոխ ատենապետուհի Մարօ Փափագեան եւ Շրջանային Վարչութեան կազմը, Կլէնտէյլի քաղաքի քար-



տուղար եւ Քալիֆորնիոյ Նահանգային խորհուրդի թեկնածու Արտի Քացախեան, Հ.Մ.Ը.Մ.ի 41-րդ Նախասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Խաչօ եւ Արաքսի Աշաճեաններ, նախորդ տարուան Նախասարդեանի պատուոյ նախագահներ՝ տէր եւ տիկ. Վարանդ եւ Հուրի Մելքոնեաններ, անցեալ տարիներու պատուոյ նախագահներ, քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ բազմաթիւ հիւրեր:

Ձեռնարկին բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի արի-արեւոյշներու կատարած դրօշակի արարողութեամբ: Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի խմբապետուհի քոյր Իվանա Գրիգորեան:

Սեղաններուն օրհնութիւնը կատարեց եւ իր հայրական օրհնութիւնները փոխանցեց Արեւմտեան թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի Նախասարդեան մարզախաղերը, գայն գլխաւորող

պատուոյ նախագահը, 2016-ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ականը», կազմակերպիչները, մասնակիցները եւ բոլորին մաղթեց Հ.Մ.Ը.Մ.ական ոգեւորութեամբ անցընել երեկոն:

Օրուան հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեց Մոնթեպելլոյի քաղաքապետական խորհուրդի անդամ Ճէք Հաճինեան: Ան Հ.Մ.Ը.Մ.ի հպարտանք պարգեւելու իրողութիւնը ընդգրծելով, ներկայացուց Նախասարդեան մարզախաղերու քառասուն տարիներու յաղթական երթը եւ երիտասարդութիւնն ու համայնքը համախմբելու կարեւորութիւնը: Այնուհետեւ, երեկոն ձեռնհասօրէն վարելով, ան մերթ ընդ մերթ հաճելի կատակներով ուրախ մթնոլորտ մը ստեղծեց սրահէն ներս:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, որ առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք, ինչպէս միշտ, նիւթապէս եւ բարոյապէս զօրավիգ կը կանգ-



նին Հ.Մ.Ը.Մ-ին: Ապա, հպանցիկ ակնարկ մը նետելով 98-ամեայ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան եւ տեղւոյն երիտասարդութիւնը հայեցի դաստիարակութեամբ տոգորելու եւ անոնց մէջ «Առողջ միտք, առողջ մարմինի մէջ» գաղափարը զարգացնելու ուղղութեամբ տարուած գործունէութեան, Մարսէլեան հպարտութեամբ յայտարարեց Շրջանային Վարչութեան նորագոյն նուաճումները, որոնցմէ առաջինը շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի 18-րդ մասնաճիւղի հիմնադրութիւնն էր Սաքրամենթոյի մէջ, իսկ երկրորդը՝ Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական բաժանմունքի ստեղծումը:

Ապա, ան պաշտօնապէս ներկայացուց տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եղբ. Գօգօ Մկրեանն ու Հ.Մ.Ը.Մ-ի 41-րդ Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Խաչօ եւ Արաքսի Աշաճեանները, ընդգծելով անոնց միութենական եւ հասարակական-քաղաքական կեանքին մէջ արձանագրած նուաճումները:

Իսկ Հ.Մ.Ը.Մ-ի ազգային պարտականութիւններուն անդրադառնալէ ետք, եղբայրը հպարտութեամբ յայտարարեց, թէ Հ.Մ.Ը.Մ-ի 41-րդ Նաւասարդեան մարզախաղերը նուիրուած են Արցախի քաջարի զինուորներուն եւ ժողովուրդին, առ ի երախտագիտութիւն Արցախի սահմանները քաջաբար պաշտպանելու իրենց սրբազան գործին:

Ապա, ներկաները վայելեցին Հ.Մ.



Ը.Մ-ի նորագոյն աշխատանքները ներկայացնող տեսերիզ մը:

Այնուհետեւ, ներկայացուեցան 2016-ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»-ի տիտղոսին արժանացած եղբ. Գրիգոր Մկրեանի Հ.Մ.Ը.Մ-ական կեանքն ու միութենական նուաճումները (Այս մասին տեսնել «Մարզիկ»-ի նախորդ թիւը՝ 400-402, էջ 76-78), որմէ ետք ան հրաւիրուեցաւ բեմ՝ ստանձնելու արժանաւոր իր տիտղոսը հաստատող յուշատախտակը՝ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանի ձեռամբ, առ ի գնահատանք՝ միութենական երկար տարիներու իր բեղուն ու



համեստ գործունէութեան: Ներկաները յոտնկայս եւ երկարաշունչ ծափողջոյններով ընկալեցին եղբ. Մկրեանի պարգեւատրումը:

Մեծապէս երախտապարտ իրեն ընծայուած պատիւին համար, եղբ. Գրիգոր Մկրեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան, իրեն ընծայած «Տիպար Հ.Մ.Ը.Մ.»-ականի տիտղոսին համար: Ապա, «Հ.Մ.Ը.Մ-ական ըլլալը պատիւ է» յայտարարելով, նշեց Հ.Մ.Ը.Մ-ականի պարտականութիւնները եւ ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ական ըլլալը զոհողութիւն է: Ուրախ վայրի մը մէջ ազգին ու հայրենիքին օգտին աշխատանք տանիլ է: Հ.Մ.Ը.Մ-ը ազգային վարժարան է: Դպրոց է պատանիին՝ զարգանալու, բարձրանալու եւ ղեկավար դառնալու»:

Իսկ շեշտելով իր սիրած կազմակերպութենէն ստացած բարիքները, ան ըսաւ. «Եթէ Հ.Մ.Ը.Մ-ի Պաղտատի մասնաճիւղը զիս դաստիարակեց հայ ըլլալ, պատճառ դարձաւ, որ հայերէն գրել կարդալ սորվիմ, ապա Հ.Մ.Ը.Մ-ի «Արարատ» մասնաճիւղը ղեկավարութեան փորձառութիւնը ստանալու առիթը տուաւ ինծի: Իսկ Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութիւնը եւ շրջանի բոլոր մասնաճիւղերը իմ մէջս ամրացուցին ղեկավարութեան գիտելիքները»:

«Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»-ի պատգամէն ու ճաշի հիւրասիրութենէն ետք, օր-



լան յայտագիրը շարունակուեցաւ Խաչօ եւ Արաքսի Աշաճեաններու կեանքի ճանապարհը ներկայացնող տեսերիզի ցուցադրութեամբ (Աշաճեան ամուլին մասին տեսնել «Մարզիկ»-ի նախորդ թիւը՝ 400-402, էջ 76-78):

Այնուհետեւ տեղի ունեցաւ ձեռնարկին գլխաւոր առանցքը հանդիսացող, պատուոյ նախագահութիւնը խորհրդանշող եռագոյն երիզներու փոխանցումը: Նախորդ Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահ Վարանդ եւ Հոլրի Մելքոնեաններ յատուկ հանդիսաւորութեամբ Խաչօ եւ Արաքսի Աշաճեան զոյգին փոխանցեցին Հ.Մ.Ը.Մ-ի 41-րդ



Նաւասարդեան մարզախաղերուն պատուոյ նախագահութիւնը:

Յոտնկայս երկարաշունչ ծափող-ջոյններու ներքոյ, պաշտօնապէս ըստանձնելէ ետք պատասխանատուութիւնը, ելոյթ ունեցաւ Խաչօ Աշաճեան: Ան Հ.Մ.Ը.Մ-ականներով շրջապատուած ըլլալը պատիւ համարելով, գանոնք համարեց գաղութին ողնասիւնը:

Ան համոզումով հաստատեց, թէ Հ.Մ.Ը.Մ-ի Զահլէի եւ իրենց ծննդավայր Շիթորայի «Սիմոն Վրացեան» ակումբին անդամակցութիւնը մեծ ազդեցութիւն ունեցած է հայկական հարուստ մշակոյթի ծանօթացման եւ ընկերասիրութեան մէջ, զոր, շատերու նման, իր հետ բերած է Քալիֆորնիա: Իսկ այդ բոլորը Հ.Մ.Ը.Մ-ին վերագրելով՝ Աշաճեան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ը մեզի համար երկրորդ տուն մըն է, որ ապահով միջավայր մը եւ մարզական մրցակցութեան առողջ եւ հաճելի մթնոլորտ մը կը պարգեւէ մեզի: Հ.Մ.Ը.Մ-ը նաեւ այն միջավայրն է, որ երկարատեւ յարաբերութեանց եւ շարունակական բարեկամութեան առիթ կը ստեղծէ»:

Ապա, այդ բոլոր առաւելութիւնները Մ. Նահանգներ բերած ըլլալու իրականութիւնը հաստատելով, Աշաճեան շեշտեց, որ երախտապարտ պէտք է ըլլալ Մ. Նահանգներուն, որ մեզ հիւրընկալեց եւ ամէն առիթ ընծայեց ըլլալու անբաժանելի մասնիկը իր հանրային, մշակութային, կրթական, տնտեսական

եւ քաղաքական կեանքին: Այսուհանդերձ, ան շեշտեց, որ «Մենք ունինք նաեւ աւելի մեծ պատասխանատուութիւն մը, որն է հարստացնել, խնամել եւ պահպանել մեր մշակոյթը, լեզուն եւ ինքնութիւնը: Եւ այս բոլոր պատասխանատուութիւնները կարելի է իրականացնել օգտակար հանդիսանալով հայկական համայնքային կազմակերպութիւններուն եւ յատկապէս՝ Հ.Մ.Ը.Մ-ին»:

Եզրակացնելով, Աշաճեան վստահեցուց, որ «Հ.Մ.Ը.Մ-ը մարզական եւ սկաուտական իր ծրագիրներով կը հզօրացնէ հայ երիտասարդութիւնը, որպէսզի ան ալ իր հերթին ծաղկեցնէ ընկերասիրութիւնը, յարմարաւէտ միջավայր մը ապահովէ գալիք սերունդներուն եւ մասնակից ըլլայ այս կարեւոր առաքելութեան»:

Սրտի իր խօսքը փոխանցեց նաեւ Արաքսի Աշաճեան, որ «Որքան տաս, այնքան երկար կ'ապրիս» ամուսինին հաւատացած ասացուածքը մէջբերելով՝ ըսաւ. «Երբ կ'ըսենք «Բարձրացիր՝ բարձրացուր», կը նշանակէ, թէ հետամուտ ենք շատ աւելի բարձր նպատակի մը, որն է՝ վստահ ըլլալ, որ մեր երիտասարդութիւնը ունենայ ընտանեկան արժէքներ, բարոյականութիւն, սիրէ իր անցեալն ու մշակոյթը: Այս իրողութիւնը մենք պարտական ենք մեր նախահայրերուն, որոնք ի գին մեծ զոհողութիւններու պաշտպանեցին մեր ինքնութիւնը:

«Միասնականութիւնը հիանալի ոյժ մըն է, որուն համար մենք պէտք է զօրակցինք Հ.Մ.Ը.Մ-ին անհատապէս եւ հաւաքակապէս, պէտք է զօրակցինք Հ.Մ.Ը.Մ-ի վարչութեան, պաշտօնէութեան, կամաւորներուն, մարզիկներուն եւ սկաուտներուն: Անոնց յաղթանակը մեր հպարտանքն է, անոնց յաջողութիւնը մեր յաղթանակն է»: Տիկ. Աշաճեան նաեւ իր երախտագիտութիւնը յայտնեց ներկաներուն եւ մանաւանդ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին, որոնք առիթը ստեղծեցին ըլլալու իրենց հետ եւ մասնակցելու Հ.Մ.Ը.Մ-ի երթին:

Աշաճեան զոյգին սրտառուչ պատգամէն ետք, երեկոն հայկական եւ միջազգային երգերով խանդավառեցին երգիչ Հայրերդն ու DJ Էտի Օ-ն:





ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 41-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՄՆ ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄԸ «ԱՐՑԱԽԸ ՄԵՆՔ ԵՆՔ» ԿԱՐԳԱԽՕՍՈՎ

Մարո Քեչիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Միացեալ Նահանգներու անկախութեան տօնին գուզադիպող Յուլիսի առաջին շաբաթավերջը կը յատկանշուի Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի Նաւասարդեան մարզախաղերու եզրափակումով, որ մեծ ոգեւորութեամբ կ'իրագործուի շրջանէն ներս, փոքրիկ Հայաստանի մը վերածելով «Պըրմիէնկհամ Չարթըր Հայ Սքուլ»-ի շրջափակը:

ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՆԵՐԸ

Նաւասարդեան իւրայատուկ հանդիսութիւնը իր աւարտին հասաւ Կիրակի, 3 Յուլիս 2016-ի երեկոյեան, նոյն վարժարանի Փուլմոնի մարզադաշտին

վրայ, հոծ թիւով Հ.Մ.Ը.Մ-ականներու, համակիրներու, նուիրատուներու եւ ծնողներու ներկայութեամբ: Ժամը 6:30-ին, Արեւմտեան Մ. Նահանգներու Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերու խմբապետներու առաջնորդութեամբ, մարզադաշտ ներկայացան եւ պատուոյ հարթակին վրայ իրենց տեղերը գրաւեցին Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 41-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Խաչօ Եւ Արաքսի Աշաճեաններ, տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եղբ. Գրիգոր Մկրեան, ընկերակցութեամբ կնոջ Արմինէի, եւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան: Պաշտօնական հիւրերու կարգին էին Լոս Անճելըսի մօտ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսութեան խորհրդատու Ռազմիկ Ստեփանեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Դաւթեան եւ

Անդրանիկ Պահարեան, Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տարօն Տէր Խաչատուրեան, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ Մարո Փափագեան, Կլէնտէյի քաղաքի քարտուղար եւ նահանգային խորհրդարանի ընտրութեան թեկնածու Արտի Քացախեան, Պըրպէնքի ոստիկանութեան բաժանմունքէն ենթասպայ էրիք Տէրոյեան: Հոն էին նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի անցեալի պատուոյ նախագահներ եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»ներ, զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ-ի համակիրներ, հովանաւորներ, նուիրատուներ, ծնողներ եւ Հ.Մ.Ը.Մ-ականներ:

ԲԱՅՈՒՄԸ ԵՒ ԴՐՕՇԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Մ. Նահանգներու եւ Հայաստանի հսկայական դրօշները անկարգելներով դաշտ ներկայացան, մեծ խանդավառութիւն ստեղծելով հազարաւոր ներկաներուն մօտ: Օրուան հանդիսավարներն էին քոյր Սիւզի Օհանեան (հայերէն) եւ եղբ. Արման Քրիիճեան (անգլի-



րէն), որոնք նախքան պաշտօնական յայտագիրին սկսիլը, ներկաները հրաւիրեցին վայրկեան մը յօտնակալ յարգելու յիշատակը Ապրիլեան քառօրեայ պաշտպանական մարտերուն զոհուած Արցախի քաջարի զինուորներուն:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային խմբապետուհի քոյր Շարլին Կիւզէլեան, արտօնութիւն ստանալէ ետք Շրջանային Վարչութեան ատենապետէն, հրահանգեց սկսելու հանդիսութիւնը՝ դրօշակի արարողութեամբ: Հ.Մ.Ը.Մ-ի արի-արենոյճներ, կարգապահ ու ինքնավստահ քալուածքով մարզադաշտ ներկայացան եւ գրաւեցին իրենց տեղերը մարզադաշտի բեմին վրայ, ուր բարակ պարաններով, նրբագեղ հիւսուած խաչերով հսկայական կայմերու վրայ գետեղուած Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Աւստրալիոյ, Քալիֆորնիոյ, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Նաւասարդեանի դրօշները վեր բարձրացուցին, Հ.Մ.Ը.Մ-ի «Սիփան» մասնաճիւղի խմբապետուհի քոյր Դալար Գալստեանի հրահանգով: Ապա, անոնք պատուի կանգնեցան եւ քարացած ունկնդրեցին Մ. Նահանգներու,

Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայրերգները, զորս դարձեալ Շրջանային Վարչութեան նուագախումբը նուագեց, թնդացնելով ամբողջ մարզադաշտը, հպարտութեամբ լեցնելով ներկաներուն սիրտերը:

Այնուհետեւ մարզադաշտ ներկայացաւ շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերու սկաուտական բաժանմունքը, որ տողանցքով կանգ առաւ պատուոյ հարթա-

կին ու ժողովուրդին դիմաց եւ իր հետ բերած տախտակներով զեղեցկօրէն պատկերեց Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց դրօշները, անգամ մը եւս հաստատելով, թէ հաւատարիմ կը մնայ «Արցախը մենք ենք» կարգախօսին:

Հ.Մ.Ը.Մ-ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ Շրջանային Վարչութեան անունով





խօսք առաւ ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, որ առաջին հերթին շնորհակալութիւններ արտայայտեց իր անձնակազմին, որոնք իրենց ժամանակն ու ջանքերը տրամադրեցին՝ իրականացնելու Նաւասարգեան մարզախաղերու յաջողութիւնը: Ան նաեւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր նուիրատուներուն եւ հովանաւորներուն, որոնք ամէն տարի կը զօրակցին Հ.Մ.Ը.Մ-ին եւ կը նպաստեն անոր գործունէութեան յաջողութեան:

Եղբ. Մարսէլեան հպարտութեամբ ընդգծեց, որ «Իբրեւ Սփիւռքի մեծագոյն հայկական կազմակերպութիւն, արեւմտեան ափերուն, Հ.Մ.Ը.Մ-ին տրուած է պատասխանատուութիւնը»:

Գուրգուրալու եւ զարգացնելու մեր համայնքին երիտասարդութիւնը: Մենք կը գիտակցինք մեր տեղւոյն եւ հայրենի ընկերային ու քաղաքային պատասխանատուութիւններուն: Այս գիտակցութեան մղուած է, որ Հ.Մ.Ը.Մ-ի 41-րդ Նաւասարգեան մարզախաղերը կը նուիրենք Արցախի ժողովուրդին եւ մեր խիզախ զինուորներուն, որոնք ամէն օր իրենց կեանքը կը վտանգեն յանուն Արցախի պաշտպանութեան: Մենք կ'ողջունենք Արցախի անկախ հանրապետութիւնը եւ իր քաջարի ժողովուրդը»:

Շնորհակալութիւնով տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եղբ. Գօգօ Մկրեանն ու Հ.Մ.Ը.Մ-ի 41-րդ Նաւասարգեան մար-



զախաղերու պատուոյն խաղազար, եղբ. Մարսէլեան իբրեւ տարուան շնորհակալութիւն, ուրախութեամբ յայտարարեց Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական բաժանմունքին ստեղծումը, որ մեծապէս պիտի նպաստէ կազմակերպութեան ընկերային կեանքին եւ ապագայ ղեկավարներու պատրաստութեան:

Եղբայրը յայտարարեց նաեւ Սաքրամենթոյի փոքրաթիւ գաղութին մէջ ստեղծումը Հ.Մ.Ը.Մ-ի «Լոռի» միաւորին, որ անկասկած տեղւոյն երիտասարդութիւնը կ'ապուած պիտի պահէ հայկական իր արմատներուն:

Հ.Մ.Ը.Մ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՊԱՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՂԵՆՆԵՐԸ

Կեղրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց եղբ. Վիգէն Դաւթեան, որ շեշտելով 25 երկիրներու մէջ Հ.Մ.Ը.Մ-ի աւելի քան 100 մասնաճիւղերու եւ 28 հազար անդամներու գոյութիւնը, ընդգծեց կազմակերպութեան դիմագրուած մարտահրաւէրները, միաժամանակ վստահեցնելով, որ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան հաւատքով, կազմակերպութեան անդամները միասնակա՛նութեամբ կը յաղթահարեն այդ մարտահրաւէրները:

«Մենք հզօր ենք, որովհետեւ կ'ընդունինք որ կատարեալ չենք: Մենք միշտ կը փորձենք զարգանալ եւ կ'ընդունինք, որ մեր կազմակերպութիւնը



հիմնուած է կամաւոր աշխատանքի, համագործակցութեան եւ անձնական հսկայական զոհողութեան վրայ», ըսաւ եղբ. Դաւթեան եւ ապա ներկայներուն դիմելով խրախուսեց զանոնք օգտակար դառնալու Հ.Մ.Ը.Մ-ին, որպէսզի անիկա հզօր եւ լաւագոյն կազմակերպութիւնը հանդիսանայ ո՛չ միայն Նաւասարգեանին, այլ ամբողջ տարուան ընթացքին:

Եզրակացնելով, եղբ. Դաւթեան իր պարծանքը յայտնեց, որ «Այս շրջանը արդէն ունի իր 3-րդ եւ 4-րդ սերունդի անդամները եւ ղեկավարները: Եւ ահա, կանգնած ենք Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի սեմին եւ պիտի վերանորոգենք մեր խոստումը պահպանելու Հ.Մ.Ը.Մ-ի սուրբ նպատակները»:

ԱՌԱՋՆՈՐԴ ՄՈՒՇԵՆՆԵՐ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ԽՕՄՔԸ

Հայրական իր օրհնութիւնները փոխանցեց թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ Հ.Մ.Ը.Մ-ը հայոց պատմութեան հարուստ ժառանգութեան հաւատարիմ աւանդապահը նկատելով յիշեցուց, որ Նաւասարգեան 41-րդ մարզախաղերուն եզրափակումը կը գլուզադիպի Վարդապետի տօնին, որ կը խորհրդանշէ լոյս, պայծառութիւն եւ հոգեկան մաքրութիւն, որ քրիստոնէութիւնը պետական կրօնք ընդունուելէն ետք, ստացաւ նոր խորք ու քրիստոնէա-





կան դրոշմ. «Այս օրը հետեւաբար եւ Հ.Մ.Ը.Մ-ի եւ ողջ հայութեան համար կրկնակիօրէն տօնական օր մըն է», հաստատեց սրբազանը:

Ապա, գնահատելով Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը, նոր սերունդներուն քրիստոնէական եւ հայեցի դաստիարակութիւնը ջանքով համար, Առաջնորդը շնորհակալութեամբ նախագահ զոյգն ու տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եւ ընդգծեց կարեւորութիւնը Հայ Դատի պահանջատիրական յաղթարշաւը շարունակելու:

«Այո, մեր պահանջատիրական երթը յաղթարշաւ է: Անոր նորագոյն արտայայտութիւնները եղան Գերմանիոյ կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանա-

չումն ու անոր մէջ կայսերական Գերմանիոյ պատասխանատուութեան բաժինին հաստատումը: Իսկ դեռ երէկ, Յունիսի վերջերուն, կաթողիկէ եկեղեցւոյ սրբազան քահանայապետը՝ Պրահայի Ստեփաննոս Գաբրիէլ Պապը, Հայաստան իր ուխտագնացութեան առիթով, անգամ մը եւս յայտարարեց, որ աշխարհի առաջին քրիստոնէայ պետութեան գաւակները զոհ դացած են Ցեղասպանութեան եւ գործնական հրաւէր մը ուղղեց արգարութեան ու խաղաղութեան հաստատման», ընդգծեց Առաջնորդը եւ կոչ ուղղեց ներկայներուն, որ անսակարկ յանձնառութեամբ յիշուին հայութեան ազգային ու հողային պահանջատիրութեան Դատին եւ եզրակացուց՝ ըսելով.



«Թող Հ.Մ.Ը.Մ. ի դրօշը ընդմիշտ ծածա-
նի հայրենի կենտրոնը լինի վրայ, առաջ-
նորդելով Հ.Մ.Ը.Մ. ի մարզակերտումի
ու հայկերտումի ազնիւ առաքելու-
թիւնը, որպէսզի «Յառաջ նահատակ ցե-
ղի անմահներ» յաղթերգով այդ դրօշը
տանինք ու «Կոթողենք կատարն հայրե-
նի լեռանց հեռագոյն»:

**ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
ՏՈՂԱՆՅԲԸ**

Այնուհետեւ, տեղի ունեցաւ հանդի-
սութեան տուն տուող այնքան սպաս-
ւած շքերթը: Յաջորդաբար տողանցե-
ցին շրջանի Հ.Մ.Ը.Մ. ի նորաստեղծ երի-
տասարդական բաժանմունքը, Հ.Մ.-
Ը.Մ. ի Աւստրալիոյ շրջանի «Արարատ»
մասնաճիւղի մարզիկները, շրջանի նո-

րագոյն՝ «Լուրի» միակորը, 17 մասնա-
ճիւղերու սկաուտական եւ մարզական
խումբերը, յանձնախումբերն ու ան-
դամները, իրենց վարչութիւններու
գլխավորութեամբ եւ Շրջանային Վար-
չութեան շեփորախումբի ազգայնա-
շունչ եղանակներու ոգեւորութեամբ:
Անոնք տողանցեցին հպարտ ու երջա-
նիկ, բարեկեցին ներկաները, պատուոյ
հարթակէն ստանձնեցին իրենց յաղթա-
նակի բաժակները եւ հպարտութեամբ
զրաւեցին իրենց տեղերը մարզադաշտի
նստարաններուն վրայ:

**ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
ԽՐԱԽՃԱՆԲԸ**

Հանդիսութեան վերջին բաժինով
երթիք ունեցաւ երգիչ Յարութ Փամ-

պուքճեան, որ իր ազգային երգերով մե-
ծապէս ոգեւորեց արդէն իսկ ուրախ
մթնոլորտը:

Ներկաները՝ խանդավառուած, յո-
տնկայս ծափողջոյններով միացան
հրամցուած երգերուն, իսկ մարզադաշ-
տին կեդրոնը հաւաքուած արի-արե-
նոյճները շուրջպար բռնեցին, սոնախմ-
բելով իրենց արձանագրած Նաւասարդ-
եան յաջողութիւնները:

Այնուհետեւ Նաւասարդեան խրախ-
ճանքը շարունակուեցաւ փառատօնի
շրջափակէն ներս, ուր շրջանի սիրուած
արուեստագէտներուն առընթեր, դարձ-
եալ երթիք ունեցաւ Յարութ Փամպուք-
ճեան՝ աւելի խանդավառելով տիրող
զուարթ մթնոլորտը:



ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 41-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆ ՄԱՍՆԱԾԻՂԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ. ի Արեւմտեան Մ. Նահանգներու Նա-
ւասարդեան մարզախաղերու գլխաւոր
առանցքը կը հանդիսանան մարզական
մրցումները, որոնց լաւապէս մասնակցե-
լու համար, շրջանի Հ.Մ.Ը.Մ. ի մասնաճիւ-
ղերը ամբողջ տարին կը պատրաստուին լրջօրէն:
Մայիսի կէսերուն սկիզբ առած եւ 3 Յուլիսին հանգա-
մանօրէն աւարտած այս տարուան մարզախաղերուն
ամենէն «տաք» մրցումները աղջկանց եւ մանչերու
պասքեթպոլի մրցումներն էին, որոնք տեղի ունեցան
«Պըրմինկհամ Չարթըր Յայ Սքուլ» ի պասքեթպոլի
գլխաւոր մարզադաշտին վրայ՝ մեծ ոգեւորութիւն
ստեղծելով մրցումներուն հետեւող աւելի քան 1000
մարզասէրներուն մօտ:

Հ.Մ.Ը.Մ. ի մէջ եւս լայն ժողովրդականութիւն վայե-
լող աղջկանց պասքեթպոլի մրցումին, իրարու դէմ
ճակատեցան Հ.Մ.Ը.Մ. ի «Մասիս» եւ Լոս Անձելըսի
մասնաճիւղերու, իսկ մանչերու մրցումին՝ Հ.Մ.Ը.Մ. ի
«Արարատ» եւ «Շանթ» մասնաճիւղերու խումբերը:
Չոյզ մրցումներն ալ գրեթէ հաւասար ուժերով, ընթա-
ցան հետաքրքրական եւ գեղեցիկ խաղարկութեամբ:
Աղջկանց մրցումին յաղթական դուրս եկաւ «Մա-
սիս» մասնաճիւղը, իսկ մանչերու մրցումին՝ Հ.Մ.-
Ը.Մ. ի Կլէնտլի «Արարատ»ը: Վերջինին ներկայ
գտնուեցան Հ.Մ.Ը.Մ. ի պասքեթպոլի անցեալի մար-

զիկներ՝ Հ.Մ.Ը.Մ. ի 41-րդ Նաւասարդեան մարզախա-
ղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Խաչօ եւ
Արաքսի Աշաճեանները: Անոնք երկարաշունչ ծա-
փողջոյններու ներքեւ յանձնեցին նաեւ օտարերկր-
եան բաժակը:

Շրջանային Մարզական Խորհուրդն ու երկար
տարիներու մարզական գործավարներ՝ եղբայրներ
Սեւակ Կարապետեան եւ Ֆրէտ Պապաջանեան, դե-
կավարութեամբ Շրջանային Վարչութեան մարզական
պատասխանատու եղբ. Արամ Թոմասի, բժախնդիր ու
նուիրեալ աշխատանք տարած էին լաւապէս կազմա-
կերպելու համար Նաւասարդեան 41-րդ մարզախա-
ղերը: Այս տարի, շրջանի հայկական կեանքէն ներս
եզակի երեւոյթ նկատուող այս մրցումներուն մաս-
նակցեցան աւելի քան երեք հազար երկսեռ մարզիկ-
ներ՝ հետեւեալ մարզաճիւղերուն մէջ.՝ Պասքեթպոլ՝
209 խումբեր, ֆութպոլ՝ 44 խումբեր, վոլիպոլ՝ 20
խումբեր, թեթեւ աթլէթ՝ 143 մարզիկ-մարզկուհիներ,
լող՝ 72 մարզիկ-մարզկուհիներ, փինկ-փոնկ՝ 60 մար-
զիկ-մարզկուհիներ, թենիս՝ 28 մարզիկ-մարզկուհի-
ներ:

Պէտք է ընդգծել, որ մարզական այս ուրախ մթնո-
լորտը մասնաճիւղերէն ներս կը շարունակուի նաեւ
Նաւասարդեան մարզախաղերու աւարտէն ետք: Նա-
ւասարդեան մարզախաղերու մասնակիցները՝

ախոյեանութեան հասած թէ ոչ, իրենց մասնաճիւղե-
րու պատասխանատուներուն կողմէ յատուկ ձեռ-
նարկներու ընթացքին առանձնաբար կը գնահատ-
ւին եւ նոր թափով կը պատրաստուին յաջորդ մար-
զախաղերուն:

«Շրջանի Հ.Մ.Ը.Մ. ի մեծ ընտանիքը Նաւասարդ-
եան յաջողութիւն մը եւս արձանագրեց այս տարի,
շնորհիւ մեր մասնաճիւղերու խանդավառ մասնակ-
ցութեան եւ մանաւանդ՝ շրջանի հայութեան անսա-
կարկ քաջալերանքին, որուն համար երախտապարտ
ենք: Պէտք չէ մոռնալ տարուան պատուոյ նախագահ
զոյգը՝ տէր եւ տիկ. Խաչօ եւ Արաքսի Աշաճեանները,
որոնք իրենց համեստ հետեւողականութեամբ քաջա-
լերեցին մեզ: Շնորհակալ ենք նաեւ շրջանի արուես-
տագէտներուն, որոնք իրենց հայկական երգերով
Նաւասարդեան ուրախ մթնոլորտ մը ստեղծեցին
փառատօնի շրջափակէն ներս: Վերջապէս, յատուկ
շնորհակալութիւն շրջանի 18 մասնաճիւղերուն,
որոնց անդամները, ամենափոքրէն մինչեւ ամենա-
տարեցը, մասնակից եղան Նաւասարդեան յաջողու-
թեան», ոգեւորութեամբ ընդգծեց Հ.Մ.Ը.Մ. ի Շրջանա-
յին Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարտի-
եան, Նաւասարդեանի փակման արարողութենէն
ետք:

**ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 41-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ**

ՊԱՍՔԵԹՊՈՒ

Ա. Կլէնտլի «Արարատ» մասնաճիւղ
Բ. Սան Ֆեռնանտօ Յովիտի «Մասիս» մասնաճիւղ
Գ. Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ

ՖՈՒԹՊՈՒ

Ա. Լոս Անձելըսի մասնաճիւղ
Բ. Քրեսենթա Յովիտի «Շանթ» մասնաճիւղ
Գ. Սան Ֆրանսիսքօյի եւ Սանթա Գլարայի «Անի»
մասնաճիւղեր

ՎՈՒԲՊՈՒ

Ա. Կլէնտլի «Արարատ» մասնաճիւղ
Բ. Լոս Անձելըսի մասնաճիւղ
Գ. Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ

ԹԵԹԵՒ ԱԹԼԵԹ

Ա. Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղ
Բ. Սան Ֆեռնանտօ Յովիտի «Մասիս» մասնաճիւղ
Գ. Մոնթեպելլոյի մասնաճիւղ

ԼՈՂ

Ա. Սան Ֆեռնանտօ Յովիտի «Մասիս» մասնաճիւղ
Բ. Պըրպլենքի «Սիփան» մասնաճիւղ
Գ. Կլէնտլի «Արարատ» մասնաճիւղ

ՓԻՆԿ-ՓՈՆԿ

Ա. Կլէնտլի «Արարատ» մասնաճիւղ
Բ. Քրեսենթա Յովիտի «Շանթ» մասնաճիւղ
Գ. Պըրպլենքի «Սիփան» եւ Սան Ֆեռնանտօ Յովի-
տի «Մասիս» մասնաճիւղեր

ԹԵՆԻՍ

Ա. Սան Ֆեռնանտօ Յովիտի «Մասիս» մասնաճիւղ
Բ. Քրեսենթա Յովիտի «Շանթ» մասնաճիւղ
Գ. Ֆրեզնոյի «Մասուն» մասնաճիւղ



72 ԱՐԻ-ԱՆՈՅՇՆԵՐ ՍՏԱՑԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇՔԱՆՇԱՆԸ

Մարո Քելիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍԵՐ



Սկսած սկսած կեանքը ընդհանրապես կը յատկանշուի բնութեան հրաշալիքները պահպանելու եւ անոնց բարիքները վաճառելու զանազան գործունէութիւններով, որոնց լաւագոյն միջոցները ըսկառուական բանակումները, արշաւներն ու ակմբային աշխատանքներն են, ինչպէս նաեւ՝ կեանքի դժուարութիւնները յաղթահարելու միջոցներուն եւ գիտելիքներուն տիրապետելը: Այս բոլորին աւելցնելով, բնականաբար, կ'ուսուցուին նաեւ սկառուական, կրօնական եւ ընկերային կարեւոր գիտելիքներ:

Հ.Մ.Ը.Մ.ի սկառուական կեանքը յաւելեալ կը յատկանշուի ազգային դիմագիծի պահպանումով, հայրենիք-Սփիւռք կապի ամրապնդման եւ յատկապէս հայրենիքի տնտեսական ու պետական հզօրացման գործին օգտակար ներդրում բերելու գիտակցութեամբ: Ահա, այս հրամայականէն մեկնած է, որ Հ.Մ.Ը.Մ.ական արի-արեւոյշները կը սորվին մեր մայրենի լեզուն, հայոց պատմութիւնն ու մշակոյթը: Մասնաւորաբար հայրենիք այցելութիւններով եւ Արագածի լանջին չորս տարին անգամ մը կատարուող համա-Հ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր բանակումներուն մասնակցելով՝ Հ.Մ.Ը.Մ.ական պատանիին մէջ կը դրոշմուի ազգային գիտակցութիւնն ու հայրենիքի սէրը, այն հաստատ համոզումով, որ օր մը այս բոլորը պիտի իրականացուին հայրենիքի սրբազան լեռան՝ Արարատի լանջերուն, եւ ինչո՞ւ է նաեւ՝ զագաթին:

Այս միջոցով մէջ պահելու համար Հ.Մ.Ը.Մ.ական սերունդները,

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Սկառուական Խորհուրդը կը կազմակերպէ ազգային դաստիարակչական իւրայատուկ դասընթաց-սեմինարներ, որոնց վերջինը տեղի ունեցաւ 6-8 Մայիս 2016-ին, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնին մէջ, մասնակցութեամբ 44 արի-արեւոյշներու՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելեսի, «Արարատ» (Կլէյտէյ), «Մասուն» (Ֆրեզնօ), «Ազատամարտ» (Փասատինա), «Սիփան» (Պըրպէյնք), «Շանթ» (Քրեսենթա Հովիտ), «Մասիս» (Սան Ֆեռնանտօ Հովիտ) եւ «Արցախ» (Լաս Վեկաս) մասնաճիւղերէն:

Ազգային կարեւոր այս դաստիարակչական նախաձեռնութեան կազմակերպման եւ ղեկավարման աշխատանքը վստահուած էր Հ.Մ.Ը.Մ.ի «Շանթ» մասնաճիւղի խմբապետուհի քոյր Լարա Փանոսեանին եւ Հ.Մ.Ը.Մ.ի «Մասուն» մասնաճիւղի Միւսուրի խմբապետուհի քոյր Կարինէ Գնտոյանին, ղեկավարութեամբ Շրջանային Խմբապետուհի քոյր Շարլին Կէօզալեանսի:

Աշխատանքը սկիզբ առաւ Ուրբաթ, 6 Մայիս 2016-ի երեկոյեան ժամը 7:30-ին, հանդիսաւոր արարողութեամբ: Եւօրեայ իւրայատուկ այս աշխատանքներուն մասնակիցներուն հրամցուեցան զանազան օգտակար նիւթեր, որոնք կը նպատակադրէին օտար ափերու վրայ հասակ նետող Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդութեան մէջ առաւել դրոշմել հայկական պատկանելիութիւնը: Այսպէս, հրամցուեցան հետեւեալ նիւթերը:-

- Շահան Աթմաճեան ներկայացուց քաղաքական կուսակցութիւններուն կարեւոր դերը՝ հայ իրականութեան մէջ:
- Դասընթացներուն մասնակից եղբայրներ Սաօ Մինոյեան եւ Յակոբ Սարգիս ներկայացուցին սկառուական աշխատանքներուն եւ դասընթացին ընթացքին իրենց ծանօթացած ֆետայիները: Նաեւ, առիթ տրուեցաւ մասնակիցներուն անդրադառնալու իրենց ծանօթացած ֆետայիներուն:
- Սանն Շիրինեան խօսեցաւ Հայ Դատի կարեւորութեան եւ հայ ժողովուրդի պահանջներուն մասին:

վուրդի պահանջներուն մասին:

- Արէն Տէկիրմէնճեան լայնօրէն անդրադարձաւ հայ ազատագրական պայքարին:
- Մարո Քելիշեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ականի մը ազգային պարտականութիւնները՝ իր ազգին ու հայրենիքին հանդէպ, եւ անոր ազգային պատկանելիութիւնը:

Ցուցադրուեցաւ նաեւ Ռաճըր Քիւփէյեանի «Dark Forest in the Mountains» ժապաւէնը: Իսկ Դալար Գալստեանի գլխաւորութեամբ տեղի ունեցաւ հայրենասիրական երգերու մրցում մը, որ մեծ հետաքրքրութիւն ստեղծեց ներկաներուն մօտ: Կարեւոր վերլուծումներ կատարուեցան նաեւ Երիտասարդ Թուրքերու շարժումին եւ Հայոց Ցեղասպանութեան կազմակերպման մասին:

Դասախօսութիւններէն ետք տըր-լաճ ընդմիջումներուն ընթացքին տեղի ունեցան հետաքրքրական խաղեր, կանչեր եւ երգերու ուսուցումներ:

Յատկանշական եղաւ Շաբաթ, 7 Մայիսի երեկոյեան կազմակերպուած խրախճանքը, որուն ընթացքին մասնակիցները ուրախ միջնորդութիւնը երգեցին դասընթացին իրենց ծանօթացած ֆետայիները անմահացող ազգային-յեղափոխական երգերը եւ ոգեւորութեամբ պարեցին իրենց սորված հայկական շուրջպարերը:



Եւօրեայ օգտակար այս դասընթացները աւարտեցան Կիրակի, 8 Մայիսի առաւօտեան, համապատասխան ընթացքով, զոր ինքնավստահութեամբ կատարեցին մասնակիցները: Ժամը 10:30-ին տեղի ունեցաւ դաստիարակչական այս աշխատանքին եզրափակիչ հանդիսութիւնը, որուն ընթացքին հանգամանօրէն իրենց ազգային շքանշանները ստացան դասընթացներուն մասնակցած եւ համապատասխան ընթացքով յաջողութեամբ կատարած 44 քոյր-եղբայրները: Շնորհաւորական երկրթներով իրենց սրտի խօսքը փոխանցեցին կազմակերպիչ խմբապետուհիներն ու Սկառուական Խորհուրդին մօտ Շրջանային Վարչութեան կապեղբ Արտօ Ղազարեանը: Շրջանային Վարչութեան կողմէ հանդիսութեան ներկայ գտնուեցան ատենապետ եղբ.

Մանուէլ Մարտիկեան, քոյր Մարո Քելիշեան եւ եղբ. Պերճ Պետոյեան:

Եւօրեայ եզակի այս աշխատանքը եզրափակուեցաւ ժամը 11:30-ին: Մասնակիցները գոհունակութեամբ մեկնեցան տուն՝ իրենց կուրծքերը հպարտութեամբ զարդարած այն շքանշանով, որ հայրենի Եւրօպային առընթեր կը կրէ հայ ազգի պաշտպան երեք ֆետայիներու նկարներն ու Հ.Մ.Ը.Մ.ի Շուշանաճաղի կողմէ ստացուած:

Յայտնենք, թէ 28 արի-արեւոյշներու համար նոյնանման դասընթաց մը կազմակերպուած էր նաեւ Հիւսիսային Քալիֆորնիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքօյի եւ «Կարս» մասնաճիւղերուն, ինչպէս նաեւ Ֆրեզնօյի «Մասուն» մասնաճիւղին համար (Տեսնել «Մարզիկ»-ի ճախորդ թիւը՝ 400-402, էջ 71-72):

17 ԱՐԻ-ԱՐԵՐՈՅՇՆԵՐ ԱՐԺԱՆԱՑԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԿԱՅԵԱԿ ԿԱՐԳԻՆ

Մարո Քելիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանային տարի ունեցաւ Վկայեալ կարգի 17 թեկնածուներ, որոնք ղեկավարի մը պատրաստութեան յատուկ գիտելիքները ընկալելու եւ պահանջուած գործնական աշխատանքները կատարելու ետք՝ արժանացան սկառուական համապատասխան կարգին:

Հ.Մ.Ը.Մ.ի շրջանի մը բարձրագոյն այս կարգին յանձնու-





մի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 25 Յունիս 2016-ի յետմիջօրէի ժամը 3-ին, Հ.Մ.Ը.Մ-ի «Գէորգ Անտոնեան» սրահին մէջ, մեծ թիւով ծնողներու եւ վարչական պատասխանատուներու մասնակցութեամբ: Երջանային Վարչութեան ներկայ էին ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, քոյր Մարօ Քէշիշեան, եղբայրներ Փիէր Մանուկեան եւ Արտօ Ղազարեան:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ թեկնածուներու՝ սրահ կարգապահ մուտքով: Ապա, յաջորդեց Հ.Մ.Ը.Մ-ական աշխատանքներուն փայլք տուող դրօշակի արարողութիւնը, որուն ընթացքին անոնք ինքնավստահութեամբ խմբերգեցին սկաուտական քայլերգ՝ «Ով հայ արի»:

Վկայեալ կարգի կազմակերպիչ յանձնախումբին անունով ներկաները ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղի անցեալի մասնաճիւղի խմբապետուհի եւ ներկայիս վարչութեան անդամ քոյր Նաթալին Հինտոյեան: Ան կարեւոր բացատրութիւններ տալէ ետք Վկայեալ



կարգի կարեւորութեան, թեկնածուութեան պայմաններուն եւ իրականացուող տեսական եւ գործնական աշխատանքներուն մասին, հրաւիրեց թեկնածու քոյր-եղբայրները վերանորոգելու իրենց սկաուտական երգումը:

Այնուհետեւ, թեկնածուները իրենց ամիսներու արդիւնքը արժեւորող Վկայեալ կարգի մետալը ստանձնեցին Երջանային Սկաուտական Խորհուրդի անդամ քոյր Շողեր Արիսեանէն, իսկ հաստատագիրը ստացան նոյն Խորհուրդի անդամ քոյր Ռիթա Կիւլէսէրեանէն:

Այս առիթով, իր սրտի խօսքը փոխանցեց Երջանային Վարչութեան սկաուտական բաժանմունքի կապ եղբ. Արտօ Ղազարեանը, որ Վկայեալ կարգին կարեւորութիւնը ընդգծելով՝ շնորհաւորեց թեկնածու քոյր-եղբայրները եւ խնդրեց անոնցմէ, որ իրենց ամբարած գիտելիքներն ու փորձառութիւնները փոխանցեն իրենց հոգածութեան յանձնուած Հ.Մ.Ը.Մ-ական քոյր-եղբայրներուն: Եղբայրը նաեւ բարձր գնահատեց եւ երախտագիտութիւն յայտնեց կարգի կազմակերպիչ յանձնախումբին, որ ամիսներ շարունակ աշխատանք տանելով, յաջողութեամբ պսակեց սկաուտական այս կարեւոր կարգին գործընթացը:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Հ.Մ.Ը.Մ-ի «Յառաջ նահատակ» քայլերգով: Այնուհետեւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին ներկաները առիթը ունեցան շնորհաւորելու Վկայեալ կարգին արժանացած պատասխանատուները, ինչպէս նաեւ մօտէն ծանօթանալու եւ մտերմիկ զրոյց մը ունենալու Հ.Մ.Ը.Մ-ի ղեկավարներուն հետ:

Հ.Մ.Ը.Մ-ի յատուկ խիստ կարեւոր այս կարգին իրագործումով, շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական բաժանմունքը յաջողութիւն մը եւս արձանագրեց իր առաքելութեան մէջ, 17 հոգինոց գիտակից խումբ մը միացնելով իր պատասխանատուներու փաղանգին, որոնք պիտի պատրաստեն վաղուան այն Հ.Մ.Ը.Մ-ականները, որոնք նուիրումով պիտի ծառայեն իրենց ազգին ու հայրենիքին:





ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՄԻՕՐԵԱՅ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎ ՀԱԼԷՊԻ ՄԷՉ

Մամլոյ Յանձնախումբ
ՀԱԼԷՊ

ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 17 Յուլիս 2016-ի առաւօտեան ժամը 10.00-ին, Քիլիսի Հայրենակցական Միութեան սրահին մէջ տեղի ունեցաւ սկաուտական միօրեայ խորհրդաժողով մը, մասնակցութեամբ՝ ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկաուտ. Խորհուրդին եւ խմբապետութեան, Հալէպի մասնաճիւղի վարչութեան, մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդին եւ խմբապետութեան, ինչպէս նաեւ՝ Շրջանային Վարչութեան մամլոյ եւ տնտեսական յանձնախումբերուն:



Խորհրդաժողովը բացուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, այնուհետեւ մասնակիցները վայրկեան մը յոտնկայս լուրթեամբ յարգեցին յիշատակը Սուրիոյ ղէպերուն զոհուած ՀՄԸՄ-ականներուն:

Խորհրդաժողովը վարեց ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան: Ան իր բացման խօսքին մէջ մատնանշեց խորհրդաժողովին նպատակը՝ վարչութիւններու եւ Սկաուտ. Խորհուրդներու աշխատանքները լուսարձակի տակ առնել եւ համագործակցութեան ոգիով գործնական առաջարկներ ներկայացնել սատարելու ՀՄԸՄ-ի վերելքին, միշտ յիշելով միութեան անգուգական նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»:

Ապա տեղի ունեցաւ մասնակից կազմերու ծանօթացում, որմէ ետք իւրաքանչիւր կազմ ամփոփ տեղեկագիրով մը ներկայացուց իր կատարած աշխատանքները: Խորհրդաժողովին ընթացքին արծարծուեցան երկրի դժուարին պայմաններուն մէջ ՀՄԸՄ-ի մասնաճիւղերուն դիմագրաւած դժուարութիւնները եւ շինիչ առաջարկներ ներկայացուեցան այդ բոլորը յաղթահարելու, ի խնդիր՝ հայ նորահաս սերունդի առողջ դաստիարակութեան:

ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան քարտուղարուհի քոյր Գարօլին Քիւրքլեան ներկայացուց սկաուտական ընդհանուր ուղեգիծը, նշելով ՀՄԸՄ-ի սկաուտութեան նպատակը եւ դաստիարակութեան կարեւոր մարզերը՝ ազգային, ֆիզիքական, մտային, բարոյական եւ ընկերային:

Խորհրդաժողովը փակուեցաւ «Ով հայ արի» քայլերգով:

Հ.Ա.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱԼԷՊԻ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ ՀԵՏ

1 Յունիս 2016-ին, ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կազմը տեսակցութիւն մը ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան Հալէպի գլխաւոր հիւպատոս Տիգրան Գէորգեանի հետ: Տեսակցութեան նպատակն էր հայրենի հիւպատոսին ծանօթացնել ՀՄԸՄ-ի կառոյցը եւ շրջաններու մէջ կատարած սկաուտական ու մարզական աշխատանքները:

Տեսակցութեան ընթացքին, ՀՄԸՄ-ի ներկայացուցիչները հիւպատոս Գէորգեանին ներկայացուցին ապագայի իրենց ծրագիրները: Ապա, հիւպատոսին յանձնեցին 2015-ի մարզա-

կան յանձնախումբին Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին նուիրուած միջ-վարժարանային մարզական մրցաշարքին բացման ու փակման հանդիսութիւններուն տեսանիւթերը, ինչպէս նաեւ՝ 2016-ի մամլոյ յանձնախումբին «Կամուրջներ հաստատել» բնաբանով դասախօսական շարքին յուշանուէրն ու գիրքը:

Աւարտին, ՀՄԸՄ-ի կազմը դեսպանատունէն բաժնուեցաւ խմբային նկարով մը եւ յաջողութեան բարեմաղթութիւններով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՄԻՇԼԻԻ ՍԿԱՌԻՏ. ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ՝ ՀԻՄՕ ՎԱՆՔ

Թղթակից
ԳԱՄԻՇԼԻ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղի ընկառուտ. Խորհուրդին, մասնակցութեամբ խմբապետական եւ աստիճանաւորական կազմերուն, 70 քոյր-եղբայրներ մեկնեցան Հիմօ վանք՝ ուխտագնացութեան:

Ուխտատեղիին մէջ աղօթելէ ետք, քոյր-եղբայրները կատարեցին երգի ուսուցում եւ սկառուտական խաղեր: Ապա անոնց բացատրութիւն տրուեցաւ յառաջիկայ օրերուն կայանալիք ամառնային դպրոցի յայտագիրին մասին:

Մեծ խանդավառութեամբ ու սկառուտական կանչերով անոնք վերադարձան Գամիշլի:

Յայտնենք, որ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ն ու ՍՕԽ-ը յառաջացուցած են ամառնային դպրոցի յանձնախումբ մը, որուն նպատակն է ազգային դաստիարակութիւն ջամբել եւ սկառուտական ոգիով դաստիարակել հայ պատանիները:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԵՍԱՊԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ «ՄՈԿԼԻԻ ՕՐ»ՈՒԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Թղթակից
ՔԵՍԱՊ



Տովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Քեսապի մասնաճիւղի վարչութեան, կազմակերպութեամբ մասնաճիւղի Սկառուտ. Խորհուրդին, գայլիկ-արծուիկ միաւորի աստիճանաւորական կազմին ջանքերով, Կիրակի, 22 Մայիս 2016-ին տեղի ունեցաւ «Մոկլիի օր»ուան ձեռնարկ, տեղւոյն «Սարդարապատ» սրահին մէջ:

83 գայլիկներ եւ արծուիկներ այդ օր բեմը զարդարած էին իրենց անկեղծ եւ անմեղ ժպիտներով: Անոնք գունազեղ տարազներով կը ներկայացնէին բնութեան մէջ ապրող վոհմակը:

Սուրիոյ, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգներէն ետք, բացման խօսքով հանդէս եկաւ Աքելյա Անի Չէլչեպեան: Ան անդրադարձաւ գայլիկութեան դերին ու անհրաժեշտութեան՝ ապագայ հայ միութենական երիտասարդի պատրաստութեան աշխատանքին մէջ: Ապա տեղի ունեցաւ մեծ կանչը, որուն ընթացքին գայլիկներն ու արծուիկները խոստացան միշտ լաւագոյնը գործել: Ազգային երգեր, կանչեր, Արցախի ազատամարտիկները ներկայացնող կենդանի պատկեր, պարեր, մարզական խաղեր եւ բուրգեր: Այսպիսի ճոխ յայտագիրով օժտուած էր ձեռնարկը:

Ձեռնարկի աւարտին բեմ հրաւիրուեցաւ Նարեկ Քհնյ. Ջերենցեան: Ան իր սրտի խօսքն ու քաջալերանքը փոխանցեց եւ «Պահպանիչ»ով փակեց օրուան հանդիսութիւնը:



«ԿԱՄՈՒՐՋՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼ» ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՇԱՐՔԻ ԳԻՐՔԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱԼԷՊԻ ՄԷՉ

Թղթակից
ՀԱԼԷՊ

Հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շըրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ նորակազմ մամուլյ յանձնախումբին եւ դասախօսական շարքէն յառաջացած յանձնախումբին, Երեքշաբթի, 24 Մայիս 2016-ի յետմիջօրէի ժամը 6-ին, Քիլիսի Հայրենակցական Միութեան սրահին մէջ տեղի ունեցաւ «Կամուրջներ հաստատել» դասախօսական շարքի գիրքերու բաշխումի հանդիպումը, ուր մտերմիկ եւ ուրախ մթնոլորտի մէջ, զանազան միութիւններ ներկայացնող մասնակիցներ, մէկ մարմին դարձած, հաճելի ժամանակ անցուցին միասին, դասախօսական շարքի նիւթերէն քաղուած հարց-պատասխանի մրցումի ընդմէջէն:

Բացման խօսքը արտասանեց եղբ. Եղիա Քիլիճեան: Ան լուսարձակի տակ առաւ անցնող ամիսներուն իրականացած «Կամուրջներ հաստատել» ծրագիրին նպատակը՝ նշելով, որ դասախօսական շարքին ընդմէջէն միութենական հասկացողութեամբ մենք իրարու շահեցանք եւ միութիւններ, ակումբներ եւ յարանուանութիւններ խմբուեցան միասնական ոգիով: Ապա, ան շնորհակալութեան խօսք ուղղեց դասախօսական շարքին գիրքը պատրաստած խմբագրակազմին, յանձնախումբի անդամներուն եւ իրենց ներդրումը բերած բոլոր քոյր-եղբայրներուն:

Այնուհետեւ տեղի ունեցաւ հարց-պատասխանի մրցում, որուն հարցումները պատրաստած էին դասախօսական շարքի մասնակիցներէն բաղկացած յանձնախումբի հետեւեալ անդամները.- Սեւան Ազարիկեան, Մարիա Պոչկեզնեան,



Մարալ Գոնճայեան, Փօլ Գէորգեան, Սեպուհ Պապիկեան եւ Յակոբ Շաթոյեան:

Պատասխանները ընտրովի ձեւով ներկայացուցին դատական կազմի անդամներ՝ Մանուկ Քէօչկէրեան, Ալին Քիւրիւմլեան, Սալբի Գասպարեան եւ Ներսէս Պարսումեան: Հարց-պատասխանը վարեց Եղիա Քիլիճեան:

Երեք խումբերու բաժնուած՝ ներկաները մրցակցութեան ոգիով թարմացուցին իրենց գիտելիքները: Յանձնախումբին կողմէ տեղի ունեցաւ նաեւ պատշաճ հիւրասիրութիւն:

Մասնակիցները միութենական մտերմիկ ժամեր անցուցին միասին եւ ձեռք-ձեռքի տալով «Ցտեսութիւն» երգեցին՝ մօտիկ ապագային դարձեալ տեսնուելու «Կամուրջներ հաստատել»ու դասախօսական երկրորդ շարքով, որուն նիւթը անակնկալ մնաց մասնակիցներուն:

Աւարտին, ներկաներուն տրամադրուեցաւ 3-5 ամսուան ընթացքին իրագործուած «Կամուրջներ հաստատել» դասախօսական շարքին լուսանկարներն ու տեղեկագիրը պարունակող գիրքեր եւ խտասալիկներ:

ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Աբրահամ Ահարոնեան
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ

Սիրելի՛ եղբայր Յարութին,

Մեզմէ հեռացար անսպասելի կերպով, առանց նախապատրաստութեան, երբ ներկայութիւնդ այնքա՛ն կարեւոր էր բոլոր անոնց համար, որոնք իրենց կեանքի երկար տարիները բաժնեկցեցան քեզի հետ:

Այլեւս չենք վայելեր Ֆիզիքական ներկայութիւնդ, սակայն մեր մօտ կը պահենք արժէքաւոր գանձ մը, որ այս աշխարհի մէջ միմիայն կը ձգեն քեզի նման լաւ անձերը: Քու հոգեւոր ներկայութիւնդ ու յիշատակդ մեր սրտերուն մէջ պիտի մնայ, դառնալով կեանքի օրինակ ներկայ ու ապագայ Հ.Մ.Ը.Մ.ական սերունդներու համար, քանի որ հոգիդ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութեամբ ու փիլիսոփայութեամբ լեցուն էր՝ «Ծառայել Աստուծոյ եւ Հայրենիքին»:

Մեծ կիրքով յանձն առիր Հ.Մ.Ը.Մ.ի «Կամաւոր բանակ»ին ծառայութիւնը, փոքր տարիքէդ անդամակցելով ծննդավայրիդ՝ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի սկառտական շարժումին, իսկ Պուէնոս Այրէս ժամանումէդ ետք մաս կազմեցիր Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի սկառտական խումբի հիմնադիր սերունդին, 1956 թուականին:


Սակայն, հոն չդադրեցաւ կազմակերպական ու ազգային

կոչումդ եւ յանձնառութիւնդ: Երկար տարիներ մաս կազմեցիր Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան: Եղար նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ: Չենք կրնար մոռնալ ներկայութիւնդ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ժողովներուն, համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզական մրցաշարքերուն, ինչպէս նաեւ Հայաստանի մայրաքաղաք Երեւանի համահայկական խաղերուն:

Դուն հանդիսացար ազգային կոչումի մարմնաւորումը եւ հաւատարիմ պաշտպանը Հ.Մ.Ը.Մ.ի բարոյական սկզբունքներուն:

Բոլոր անոնք որոնք քեզի մօտէն ծանօթացան, առանց բացառութեան, քեզմէ բան մը սորվեցան իրենց կեանքին ընթացքին: Եւ հիմա որ այլեւս Ֆիզիքապէս մեզմէ հեռացած ես, պիտի շարունակենք սնանիլ յիշատակներովդ եւ հոգեկան ներկայութեամբդ, որմէ ոչինչ եւ ոչ ոք պիտի կարենայ մեզ զրկել, քանի որ այլեւս անոնք մեր բոլորին կը պատկանին՝ ընտանիքիդ, Հ.Մ.Ը.Մ.ին եւ ամբողջ հայութեան:

Մեր երախտագիտութիւնը, եղբայր Յարութին, կեանքիդ ընթացքին եւ անկէ ետք մեզի ընծայած բոլոր արժէքներովդ համար:



ԵՂԲ. ՎԱԶԳԻՆ ԾԱՊԱՂՋՈՒՐԵԱՆԻ ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մամլոյ Յանձնախումբ
ՀԱԼԷՊ

Կ ոյր ուժբակոծման հետեւանքով, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի ընտանիքը Յունիսին կորսնցուց հաւատաւոր միութենական եղբ. Վազգէն Ճապաղճուրեանը:

Եղբ. Վազգէն ծնած է Հալէպ, 1942-ին: Փոքր տարիքէն, իբրեւ գայլիկ ու ապա՝ սկառտ, ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն եւ հասած է Փոխ Առաջնորդի աստիճանի: Փոխանցուած է մարզական շարքեր եւ իբրեւ Ֆուլթպոլիստ մաս կազմած է սկառտական «Նաւասարդ» խումբին, ապա՝



սկառուտական պատուոյ առաջին խումբին:

1962-ին, ան եղած է Հ.Մ.Ը.Մ-ի ֆուլթայոլի ներկայացուցչական Ա. խումբի անդամ: Նոյն տարին մասնակցած է Սուրիոյ ֆուլթայոլի բաժակի աւարտական խաղին, ուր տիրացած է բաժակին:

1962-1965 տարիներուն, եղբ. Վազգէն շարունակած է իր մասնակցութիւնը բերել ներկայացուցչական Ա. խումբին, որուն հետ 1965-ին տիրացած է Սուրիոյ ախոյեանութեան:

Եղբ. Վազգէն եղած է պարկեշտ, ճշդապահ, օրինակելի եւ տիպար Հ.Մ.Ը.Մ-ական: Անոր ցանկութիւնն էր Հ.Մ.Ը.Մ-ը տեսնել



միշտ առաջնակարգ դիրքերու վրայ: Ան հաւատացած էր Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան եւ իր կեանքին ուղեցոյց ընդունած էր միութեան նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ը:

Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ եղբօր ընտանիքին, զաւակներուն եւ հարազատներուն:

Հողը թեթեւ գայ վրադ:

Յիշատակդ անմար պիտի մնայ, եղբա՛յր Վազգէն:

ԵՂԲ. ՐԱՓՖԻ ՊԶԱՔՃԵԱՆԻ ԱՆՄԱՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւն ՀԱԼԷՊ



11 Յունիս 2016-ը սուգի օր մը եղաւ հալէպահայութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին համար: Չարաբաստիկ այդ օրը մեզմէ առ յաւիտ խլեց երիտասարդ ու հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ-ական, 54-ամեայ եղբ. Րաֆֆի Պշաքճեանը՝ խոր վիշտի մատնելով իր հարազատները, գաղութին ազգային, միութենական եւ գաղափարական իր ընկերներն ու համայն հայութիւնը:

Եղբ. Րաֆֆին ծնողքը փոքր տարիքէն զինք առաջնորդած է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն:

Ան եղած է գայլիկ, սկառուտ եւ մարզիկ: Երկարտարիներ ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի ֆուլթայոլի առաջին խումբին, որուն հետ աւելի քան քսան տարիներ ունեցած է տպաւորիչ ելոյթներ: Իր պատանեկան տարիներէն մինչեւ կեանքին վերջին ժամերը եղբ. Րաֆֆի նուիրուած էր Հ.Մ.Ը.Մ-ին եւ սիրալոյսով կը ծառայէր անոր շարքերուն:

Իր նկարագրին շնորհիւ ան կը վայելէր բոլոր միութենականներուն յարգանքը. հեզ էր բնաւորութեամբ, բայց բժախնդիր եւ խստապահանջ՝ թերութեանց նկատմամբ: Նկարագիրով խիզախ եւ յանդուգն, անաչառ իր տեսակէտներուն եւ որոշումներուն մէջ: Չէր հանդուրժեր կեղծիքը: Համարձակօրէն կը պաշտպանէր միութեան շահերը:

Թէեւ եղբ. Րաֆֆին ֆիզիքապէս առ յաւիտ բաժնուեցաւ մեզմէ, սակայն անոր պայծառ յիշատակը միշտ պիտի մնայ մեր մէջ, իբրեւ աշխոյժ ու նուիրեալ Հ.Մ.Ը.Մ-ական:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, Հալէպի մասնաճիւղի վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ական բոլոր եղբայր-



ներու անունով մեր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնենք ցաւատանջ մօրը, տիկնոջը եւ զաւակներուն:

Բի՛ւր յարգանք վաստակիդ:

Յիշատակդ անմար, եղբա՛յր Րաֆֆի:

ԳՈՅԺ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ իր նախկին անդամներէն, Եւրոպայի ներկայացուցիչ՝



ԵՂԲ. ՍԻԱՄԱՆԹՕ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 27 Մայիս 2016-ին, Լոնտոնի մէջ:

Տարբեր Հայեացքով



ՍՈՒՏՈՔՈՒ

	5		6		4		
	6	1			3	2	
9			8		4		7
		3			4		
5			2	7	3		1
		9			6		
3			6		7		4
	1	4			7	9	
	7		9			5	

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուծով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

Նախորդին լուծումը

3	7	5	8	1	6	2	4	9
6	1	2	4	9	5	7	8	3
9	4	8	3	7	2	5	1	6
8	3	7	1	2	4	9	6	5
5	2	9	6	8	7	1	3	4
1	6	4	9	5	3	8	2	7
2	5	3	7	6	1	4	9	8
7	8	6	2	4	9	3	5	1
4	9	1	5	3	8	6	7	2

Պատասխանը՝ յաջորդիւ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Ճատրակի հայրենի կրանտմասթրը:
2. Յունական դիցարանի պատերազմի աստուածը - Բուրդ - Ֆրանսական քաղաք:
3. Սուտանի լիճերէն - Միջերկրականեան կղզի:
4. Արական անուն - Իրերայաջորդ գիրեր - Չայնանիչ:
5. Հայաստանի գետերէն (հակ.):
6. Դասընկեր, միասին ուսանող:
7. Ընտանի թեւաւոր - Արամէացիներէն սերած ժողովուրդ:
8. Գաղթող թռչուն - Դրկից տառեր:
9. Կեղծ ճարտարաբան - Հիւանդութիւն - Անձնական դերանուն:
10. Արգելական - Հարթավայր - Աշխարհ գալ:
11. Այբուբենէն - Դեռ չբացուած ծաղիկ - «Վէրք Հայաստանի» վէպին գլխաւոր հերոսը:
12. Վիշնու աստուծոյ եօթներորդ մարմնացումը - Հաւու էգ ձագ:
13. Անձամբ լսած (վկայ) - Կրկին:
14. Մերկ ոտքով՝ առանց կօշիկի եւ գուլպայի:
15. Կանացի կոչական բառ - Ածականակերտ մասնիկ - Մգել:
16. 660 - Մկունդ - Գետնաքա՛րչ ընթացիր:
17. Յուցական ածական - Խոպան, կորդ:
18. Հայր, մայր եւ զաւակներ - Յոգնակերտ մասնիկ - Հեկեկանք:
19. Տապալի - Իգական անուն - Կոնաբեր ծառատեսակ (հակ.):
20. Քահանայ - Մշոյ դաշտի գիւղերէն:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Իգական «Ֆորմիլա 1»ի ֆինլանտացի մրցավարորդ:
2. Գուլթան - Առանձին - Մուկերու ծուղակ:
3. Այբուբենէն - Գրաբար՝ հասկցիր - Տափակ դղմած:
4. Քարիւղի ընկերութիւն մը - Տառի մը դրացիները - Ժխտական մասնիկ - Կրակ:
5. Մարտիրոս, գաղափարի զոհ:
6. Ռուս թենիսիւմըն - Իգական անուն:
7. Ճիւղ - Ջրային փոխադրամիջոց - Կասող եգ - Եռք:
8. Ժանիք - Գոռոզ, ինքնահաւան - Որովհետեւ:
9. Ափրիկեան երկիր - Ա.Մ.Նահանգներէն - Որսի կենդանի:
10. Այբուբենէն - Տարածքի միաւոր - Իրերայաջորդ գիրեր - Խմէ՛ - Յոյժ:
11. Թայլանտի նախկին անունը - Ռուսերէն՝ այո՛ - Խրճիթ - Մէկը - Կրկնուած բաղաձայններ:
12. Էական բայէն - Նշանակութիւն - Հանքային համեմ - Չորապետ:
13. Նուաստանալ - Իտալիոյ քաղաքներէն՝ ուր կայ «Ֆորմիլա 1»ի մրցողիներէն մէկը:
14. Առարկայ - Ֆրանսական քաղաք - Վահան Թէքէեանի բանաստեղծութիւններէն՝ «... հայկական»:
15. Ուրուր - Առանները մասամբ պատող միս - Առասան - Չայնակից տառեր:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1																						
2																						
3																						
4																						
5																						
6																						
7																						
8																						
9																						
10																						
11																						
12																						
13																						
14																						
15																						
16																						
17																						
18																						
19																						
20																						



ԹԻՒ 222 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄ

1	Վ	Ա	Ր	Դ	Ա	Ս	Մ	Ի	Ն	Ա	Ս	Ե	Ա	Ս								
2	Ի	Ր	Ե	Ն	Ե		Ի	Լ	Ի	Կ	Ն	Ս										
3	Շ	Ա	Ս	Թ						Տ	Ո	Կ	Ա									
4	Վ	Տ	Ա	Ո	Ե					Ա	Ո	Ա	Կ									
5	Ա		Կ	Ի	Ր					Լ	Ի	Ր										
6	Ն		Ա	Լ	Ի																	
7	Ա	Ո	Ն		Ս	Պ	Ա	Ն	Դ	Ա	Ն	Ո	Տ									
8	Թ	Ի		Ս	Թ	Ա	Ր															
9	Ա	Թ	Ա		Ի	Ր	Ս	Ա														
10	Ն	Ա	Խ	Ն	Ա	Կ	Ա	Ն														
11	Ա		Տ	Օ	Ն		Ն	Լ														
12	Ն	Ա		Թ	Օ	Ն		Ա	Ն	Կ	Ա	Ր	Ո	Ղ								
13	Ա	Տ	Ա		Ո	Ա	Մ	Ի	Կ													
14	Ն	Ե	Ր	Ե	Ո	Ր		Վ	Ա	Ր	Ա	Տ	Ե	Լ								
15	Տ	Լ	Ե		Ն	Ե	Ի	Ս	Ս													
16			Ա	Տ	Ա	Կ		Ն		Ս	Ա	Յ	Ա	Չ	Դ							
17			Ի	Լ				Խ	Ո	Փ		Ն	Տ		Ի							
18			Ա	Տ	Ր		Վ	Ա	Ղ	Ե	Ն	Ի	Կ									
19			Ն	Օ		Ս	Ի	Ր	Ե	Լ	Ի											
20			Ա		Լ	Ա	Չ	Ա	Կ		Գ	Ս	Ա	Ց								



Հ.Մ.Ը.Մ-Հ.Ա.Ս.Կ.Ի ՆՈՐԱԿԱԶՄ ՇԵՓՈՐԱԽՈՒՄԻԸ